# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

37
Հ-22

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1946

9

37
Z-22

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ(բ)Կ Կենտկոմի և
ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931–1939 թ.թ.
վորոշումների ժողովածու

կազմեց Ա. ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1940

13 SEP 2013
44588
2651
40

Постановления партии и правительства о школе
Армгиз. Ереван, 1940 г.

1 MAR 2010

Ժողովրդական ուսուցիչը մեզ մոտ պետք է դրված լինի այնպիսի բարձրության, վորի վրա նա յերբեք կանգնած չի յեղել, կանգնած չե յեվ չի կարող կանգնել բուրժուական հասարակության մեջ։

ԼԵՆԻՆ

Տիրապետել գիտությանը, կոփել բոլշեվիկ-մասնագետների նոր կադրեր գիտելիքների բոլոր ճյուղերում, սովորել, սովորել, սովորել՝ ամենահամառ կերպով—այս է այժմ խնդիրը։

Հեղափոխական յերիտասարդության արշավը գիտության վրա—ահա ինչ է հարկավոր մեզ այժմ, ընկերներ։

ՍՏԱԼԻՆ

**ՀՈԴՎԱԾ 121.** ԽՍՀՄ քաղաքացիները ունեն կրթության իրավունք։

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, խորհտնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով։

ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

*Ընդառաջելով մեր մասսայական ուսուցչության և լուսավորության ֆրոնտի աշխատողների բուռն ցանկությանը, այս ժողովածուով հրատարակում ենք կուսակցության և կառավարության վորոշումները դպրոցի մասին, վորի կարիքն անչափ զգացել են մեր մասսայական ուսուցչությունն ու լուսավորության ֆրոնտում բոլոր աշխատողները իրենց տեսական ու գործնական աշխատանքների բնագավառում։*

*Այս ժողովածուն խոշոր ծառայություն է մատուցանելու մեր ուսուցչությանն ու ժողովրդական կրթության ֆրոնտում աշխատողներին, ընձեռելով լայն հնարավորություն ծանոթանալու և ուսումնասիրելու Լենինի—Ստալինի կուսակցության հիասքանչ վորոշումները՝ կրթության, դպրոցի, աշակերտության, ուսուցչության, դասագրքերի, ծրագրերի, դպրոցաշինարարության ու մանկավարժության խնդիրների մասին։ Այդ վորոշումները կայացվել են տարբեր ժամանակաշրջաններում և ցայտուն կերպով ցույց են տալիս խորհրդային դպրոցի վիթխարի աճը շնորհիվ այն ցուրգուրանքի ու հոգատարության, վոր ունեն կուսակցությունն ու կառավարությունը դեպի ժողովրդական կրթությունն ու ռերնդի կոմունիստական դաստիարակությունը։*

*ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ*

*20/VII 39 թ.*



## ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

### ՀԱՄ Կ(բ) Կ ԿԿ 1931 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

*Ընթանալով կոմունիստական կուսակցության ծրագրի իրականացման ուղիով, վորի համաձայն «դպրոցը պետք է լինի վոչ միայն կոմունիզմի սկզբունքների տարածողն առհասարակ, այլև պրոլետարիատի գաղափարական, կազմակերպական, դաստիարակչական ազդեցությունն աշխատավոր մասսաների, կիսապրոլետարական և վոչ-պրոլետարական խավերի վրա տարածողը՝ կոմունիզմը վերջնականապես հաստատելու ընդունակ սերունդ դաստիարակելու նպատակով» (Համ Կ(բ) Կ ծրագիրը), պրոլետարական պետությունը հսկայական հաջողություններ է ձեռք բերել դպրոցական ցանցը լայնացնելու և դպրոցը վերակառուցելու գործում։ Տարրական և միջնակարգ դպրոցում սովորողների թիվը 1914 թվի 7.800 հազարից 1931 թվին աճել-հասել է 20 միլիոնի։ Արմատապես փոխվել է դպրոցի սոցիալական կազմը. բանվորների և գյուղի աշխատավորական լայն մասսաների յերեխաները, վորոնց ծնողներն առաջ հնարավորություն չունեյին դպրոց տալու իրենց յերեխաներին, այժմ հանդիսանում են դպրոցի հիմնական կոնտինգենտը։ Մայրենի լեզվով ուսուցումն ընդգրկել է Խորհրդային Միության կուլտուրապես ամենահետամնաց ժողովուրդներին և տարվում է 70 լեզվով։*

*Սկզբունքորեն այլ է դարձել դպրոցի ամբողջ աշխատանքի բովանդակությունը։*

*Խորհրդային դպրոցը, վոր իր առաջ խնդիր է դնում «պատրաստել կոմունիստական հասարակության բազմակողմանի զարգացած անդամներ», անհամեմատ ավելի լայն հասարակա-*

կան-քաղաքական մտահորիզոն ու ընդհանուր զարգացում է տալիս յերեխաներին, քան տալիս եր մինչհեղափոխական և բուրժուական դպրոցը։ Վերջին տարիներս խորհրդային դպրոցում բարձրացել է յերեխաների ընդհանուր կրթության մակարդակը։

Առանձնապես զգալի հաջողություններ է ձեռք բերել դպրոցը՝ ընդհանուր պարտադիր ուսուցում մտցնելու վերաբերյալ կուսակցության XVI համագումարի պատմական վորոշումից հետո։ Միայն վերջին տարում տարրական և միջնակարգ դպրոցի աշակերտների թիվը 13,5 միլիոնից աճել-հասել է 20 միլիոնի։ Բացի սրանից, ֆաբգործուսներն ու տեխնիկումներն ընդգրկել են 1.400 հազար սովորող։

Դպրոցական հասակի յերեխաների պարտադիր ուսուցումն իրականացնելու վճռական քայլերի հետ միասին դպրոցն զգալիորեն առաջադիմել է դպրոցական ուսուցումն արտադրողական աշխատանքի ու հասարակական աշխատանքի հետ միացնելու ուղիով, վորի շնորհիվ հիմք է դրված դպրոցը պոլիտեխնիզմի բազայով վերակառուցելու համար։

Արհեստանոցների թվի մեծացումը,—վորոնք թեպետ թվով դեռ անբավարար են և տեխնիկապես թույլ սարքավորված,—դըպրոցները գործարաններին, խորհտնտեսություններին, ՄՏԿ-ներին ու կոլտնտեսություններին ամրացնելու համար կատարվող աշխատանքների հետ զուգորդված՝ հնարավորություն է տալիս ավելի ու ավելի լայնորեն և արագ ծավալելու դպրոցի պոլիտեխնիզացիան։

Սակայն, չնայած այս բոլոր նվաճումներին, Կենտկոմը հավաստում է, վոր խորհրդային դպրոցը դեռ հեռու յե համապատասխանելու այն հսկայական պահանջներին, վոր ներկայացնում է նրան սոցիալիստական շինարարության ներկա ետապը։ Կենտկոմը գտնում է՝ ներկա մոմենտին դպրոցի արմատական թերությունն այն է, վոր դպրոցի ուսուցումը բավարար ծավալով հանրակրթական գիտելիքներ չի տալիս և անբավարար է լուծում տեխնիկումների ու բարձրագույն դպրոցի համար միանգամայն գրագետ, գիտությունների հիմունքներին (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն) լավ տիրապետող մարդիկ պատրաստելու



խնդիրը։ Սրա հետևանքով դպրոցի պոլիտեխնիզացիան մի շարք դեպքերում ձևական բնույթ է ստանում և յերեխաներին չի պատրաստում իբրև սոցիալիզմի բազմակողմանի զարգացած կառուցողներ, վորոնք կարողանան թեորիան շաղկապել պրակտիկայի հետ և տիրապետել տեխնիկային։

Ամեն մի փորձ՝ դպրոցի պոլիտեխնիզացիան կտրելու գիտություններից, առանձնապես ֆիզիկան, քիմիան և մաթեմատիկան սիստեմատիկ և հիմնավոր յուրացնելուց, վորոնց դասավանդումը պետք է դրվի խիստ վորոշակի ու խնամքով մշակված ծրագրերի, ուսման պլանների հիման վրա և կատարվի խստորեն սահմանված դասացուցակներով,—հանդիսանում է պոլիտեխնիկ դպրոցի գաղափարների ամենակոպիտ խեղաթյուրումը։ «Կոմունիստ կարելի յե դառնալ միայն այն ժամանակ, յերբ հիշողությունդ կհարստացնես այն բոլոր հարստությունների ճանաչողությամբ, վոր ձեռք է բերել մարդկությունը» (Լենին, հ. XXV)։

Կենտկոմն առաջարկում է դպրոցի հետագա ամբողջ աշխատանքի հիմքը դարձնել Լենինի այն ցուցումները, վոր նա տվել է դեռևս 1920 թվին։ Ընդգծելով, վոր պոլիտեխնիզացիայի հարցերը չի կարելի դնել վերացականորեն, վոր այս հարցերը պետք է լուծել կուսակցության առջև դրված կոնկրետ խնդիրների սերտ կապակցությամբ, Լենինը նշեց *), վոր անհրաժեշտ է.

1. «Խուսափել վաղ մասնագիտացումից, այս մասին մշակել հրահանգ։

2. Բոլոր պրոֆտեխդպրոցներում ընդարձակել հանրակրթական առարկաները։

3. Անպայման առաջադրություն դնել անհապաղ անցնելու պոլիտեխնիկ կրթության կամ, ավելի ճիշտ, անհապաղ իրականացնել հենց այժմ մատչելի մի շարք քայլեր պոլիտեխնիկ կրթության ուղղությամբ...

Մեզ հյուսներ, փականագործներ են հարկավոր անմիջապես։ Անպայման։ Բոլորը պետք է դառնան հյուսներ, փականագործներ և այլն, բայց հանրակրթական և պոլիտեխնիկ մինիմումի այսինչ հավելումով»։

*) Լենինի դիտողությունները՝ պոլիտեխնիկ կրթության վերաբերյալ Ն. Կ. Կրուպսկայայի թեզերի առթիվ։

«2-րդ աստիճանի դպրոցների, ավելի ճիշտ՝ 2-րդ աստիճանի բարձր դասարանների (12—17) խնդիրն է՝ տալ իր գործը լիովին իմացող, վարպետ դառնալու և դրա համար գործնապես պատրաստված հյուսնին, ատաղձագործին, փականագործին և այլն փոխարինելու միանգամայն ընդունակ մարդ, սակայն այնպես, որ այս «արհեստավորը» լայն ընդհանուր կրթություն ունենա (իմանա այսինչ և այնինչ գիտությունների հիմունքները. ճշգրիտ նշել, թե որ գիտությունների), կոմունիստ լինի (ճշգրիտ նշել, թե ինչ պետք իմանա), ՈՒՆԵՆԱ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ՄՏԱՀՈՐԻԶՈՆ ՅԵՎ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ կրթության ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (ՏԱՌԵՐԸ):

Այսինքն՝

ա) հիմնական գաղափարներ էլեկտրականության մասին (ճշգրիտ որոշել, թե ինչպիսի).

բ) էլեկտրականությունը մեխանիկական արդյունաբերության վերաբերմամբ կիրառելու մասին.

գ) նույնը՝ քիմիականի վերաբերմամբ.

դ) նույնը՝ ՌՍՖՍՀ էլեկտրոֆիկացիայի պլանի վերաբերմամբ.

յե) ոչ պակաս քան 1—3 անգամ այցելել էլեկտրոկայան, գործարան, խորհտնտեսություն.

զ) իմանա ագրոնոմիայի այսինչ հիմունքները և այլն։

Մանրամասն մշակել գիտելիքների մինիմումը *)։

Յելնելով այս բոլորից, Համ Կ(բ) Կ կենտկոմը որոշում է.

## 1. Դպրոցի հիմնական խնդիրները

Առաջարկել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ անհապաղ կազմակերպել ծրագրերի գիտական-մարքսիստական մշակումը, նրանց մեջ ապահովելով սիստեմավորված գիտելիքների ճշգրիտ ուրվագծված շրջանակը (մայրենի լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն), այն հաշվով, որ 1932 թ. հունվարի 1-ից սկսվի դասավանդումը վերանայված ծրագրերով։

*) Լենին, XXX հ, էջ 419, 3-րդ հրատ.։ Խմբ.։



Ծրագրերը վերանայելու հետ միաժամանակ լուսժողկոմատները պետք է մի շարք միջոցներ ձեռք առնեն ապահովելու նոր ծրագրերով դասավանդելու իրական հնարավորությունները (ուսուցիչների հրահանգավորում, համապատասխան ցուցումների հրատարակում և այլն)։

Խորհրդային դպրոցում կիրառելով ուսուցման զանազան նոր մեթոդներ, որոնք կարողանան նպաստել սոցիալիստական շինարարության ձեռներեց ու գործունյա մասնակիցների դաստիարակությանը, անհրաժեշտ է վճռական պայքար ծավալել թեթևամիտ մեթոդական պրոժեկտորության, մասսայական մասշտաբով այնպիսի մեթոդներ արմատացնելու դեմ, որոնք նախապես չեն ստուգված պրակտիկայում, որ վերջերս առանձին ցայտունությամբ դրսևորվեց այսպես կոչված «պրոյեկտների մեթոդի» կիրառման մեջ։ «Դպրոցի մահացման» հակալենինյան թեորիայից բղխող փորձերը՝ դպրոցական ամբողջ աշխատանքի հիմքում դնելու այսպես կոչված «պրոյեկտների մեթոդը»—փաստորեն հանգեցին դպրոցի քայքայման։

Կենտկոմը պարտավորեցնում է միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ անհապաղ կազմակերպել և պատշաճ բարձրության վրա դնել գիտա-հետազոտական աշխատանքը, կուսակցական լավագույն ուժերը ներգրավել այս գործի համար և այս աշխատանքը վերակառուցել խիստ մարքսիստական-լենինյան հիմունքներով։

Ելնելով այն բանից, որ կոմունիստական դաստիարակության բաղադրիչ մասը հանդիսանում է պոլիտեխնիկ ուսուցումը, որը սովորողներին պետք է տա «գիտությունների հիմունքները», սովորողներին ծանոթացնի «թեորիայում և պրակտիկայում արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին», ստեղծի «սերտ կապ ուսուցման և արտադրողական աշխատանքի միջև»,— առաջարկել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ 1931 թվի ընթացքում լայնորեն ծավալելու դպրոցներին կից արհեստանոցների ու աշխատանքային սենյակների ցանցը, այս աշխատանքը զուգակցելով—պայմանագրերի հիման վրա—դպրոցները ձեռնարկություններին, խորհտնտեսություններին, ՄՏԿ-ներին ու կոլտնտեսություններին ամրացնելուն։

Ուսուցման միացումն արտադրողական աշխատանքին անհրաժեշտ է կատարել այնպիսի հիմունքով, որ սովորողների ամբողջ հասարակական-արտադրողական աշխատանքը յենթարկված լինի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին։

Ձեռնարկությունները, խորհտնտեսությունները, ՄՏԿ-ները և կոլտնտեսությունները պետք է ամեն օգնություն ցույց տան լուսժողկոմատներին այս խնդիրը լուծելիս՝ դպրոցական արհեստանոցների ու լաբորատորիաների համար առանձնացնելով անհրաժեշտ սարքավորում և գործիքներ, առանձնացնելով վորակյալ բանվորներ ու մասնագետներ՝ դպրոցի աշխատանքին անմիջականորեն մասնակցելու, արտադրությանն ուսումնասիրելիս մանկավարժներին օգնելու համար և այլն։

Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ ամեն մի շրջանում և բոլոր քաղաքներում ստեղծել որինակելի դպրոցների ցանց, այդ դպրոցները դնելով նյութական ավելի նպաստավոր պայմաններում և դրանց մեջ կենտրոնացնելով լավագույն մանկավարժական ուժերը, վորպեսզի ուսուցչական մասսաները, բանվորները, կոլտնտեսականները և աշակերտությունը կարողանան իրականում նրանցից սովորել պոլիտեխնիկ դպրոցի շինարարությունը։

Միութենական հանրապետությունների, լուսժողկոմատներին՝ դպրոցի պոլիտեխնիզացիային օժանդակելու համար 1931—32 ուսման տարում գոյություն ունեցող գավառագիտական թանգարաններին կից ստեղծել վոչ մեծ պոլիտեխնիկ թանգարանների, ինչպես և հատուկ պոլիտեխնիկ բաժանմունքների ցանց։ ԺՏԳԽ-ին՝ ֆինանսական և կազմակերպական աջակցություն ցույց տալ այս միջոցառումը կիրառելու համար։ Լուսժողկոմատներին՝ պետական հրատարակչությունների հետ միասին աշակերտների ու մանկավարժների համար ստեղծել տիպական պոլիտեխնիկ գրադարաններ մայրենի լեզվով։ Լուսժողկոմատներին՝ կինոկազմակերպությունների հետ միասին միջոցներ մշակել կինոն օգտագործելու դպրոցի, առանձնապես պոլիտեխնիկացման համար։

Սոցիալիզմի շրջանում, յերբ պրոլետարիատն իրագործում է դասակարգերի վերջնական վոչնչացումը դասակարգային



սրված պայքարի պայմաններում, բացառիկ կարևոր նշանակություն է ձեռք բերում կոմունիստական տակուն դաստիարակությունը խորհրդային դպրոցում և պայքարի ուժեղացումը խորհրդային դպրոցի յերեխաներին հակապրոլետարական իդեոլոգիայի տարբեր պատվաստելու ամեն մի փորձի դեմ։

Այս կապակցությամբ Կենտկոմն առաջարկում է կուսակցական կազմակերպություններին՝ ամրացնել իրենց ղեկավարությունը դպրոցի նկատմամբ և իրենց անմիջական հսկողության տակ առնել հասարակական-քաղաքական դիսցիպլինների դասավանդման դրվածքը յոթնամյա դպրոցներում, մանկ. տեխնիկումներում և մանկ. բուհերում։

Պնդելով ընդհանուր պարտադիր տարրական ուսման վերաբերյալ Կենտկոմի 1930 թվի հուլիսի 25-ի վորոշումը ժամանակին կատարելու անհրաժեշտությունը, Կենտրոնական Կոմիտեն, նպատակ ունենալով շտապ իրականացնել մինչև 17 տարեկան բոլոր յերեխաների ու անչափահասների ընդհանուր և պոլիտեխնիկ կրթության վերաբերյալ կուսակցության ծրագրի պահանջները, առաջարկում է ԽՍՀՄ Ժողկոմխորհին՝ մշակել ընդհանուր պարտադիր յոթնամյա ուսուցման պլան։

## 2. Դպրոցի մեթոդական ղեկավարության բարելավումը

Նշելով կադրերի և դպրոցի մեթոդական ղեկավարության կազմակերպման անբավարար վիճակը ժողովրդական կրթության օրգաններում, Կենտկոմն առաջարկում է Կուլտպրոպին՝ լուսժողկոմատների և ազգային կոմկուսակցությունների Կենտկոմների կուլտպրոպների հետ միասին մի ամիս ժամանակամիջոցում միջոցառումներ մշակել մարքսիստական-լենինյան կադրեր պատրաստելու ժողովրդական կրթության օրգաններում մեթոդական աշխատանք կատարելու համար և մեթոդական ղեկավարության ղեկավար օղակներն ամրացնել լավագույն կուսակցական թեորետիկ ու մանկավարժական ուժերով։

Նշելով գիտա-հետազոտական հիմնարկների զգալի կտրվածությունը դպրոցի գործնական խնդիրներից մանկավարժության բնագավառում, Համ Կ(բ)Կ Կենտկոմն առաջարկում է միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ համապատասխան հետազոտական ինստիտուտների աշխատանքը

կենտրոնացնել գլխավորապես դպրոցական պրակտիկ աշխատողների կուտակած փորձն ուսումնասիրելու և ընդհանրացնելու վրա, առանձնապես պոլիտեխնիզացիայի վրա։

Պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ ժողովրդական լուսավորության որգանների սիստեմի մեջ մտցնել հրահանգիչների ինստիտուտ, սկսած շրջանային ողակներից՝ ուսուցչին մշտական պրակտիկ ոգնություն ցույց տալու նրա դպրոցական ամենորյա աշխատանքներում։ Հրահանգիչների կազմը համալրել փորձված ուսուցիչներով, վորոնք լավ գիտեն դպրոցն ու նրա խնդիրները, տալով մի շրջանին վոչ պակաս յերկու հոգի։ Պարտավորեցնել ժողովրդական լուսավորության բնագավառում ղեկավար աշխատանքի մեջ գտնվող բոլոր կոմունիստներին՝ ամենակարճ ժամանակամիջոցում տիրապետել դպրոցական աշխատանքի մեթոդական կողմին։

Կոմունիստական ակադեմիային կից մարքսիստ մանկավարժների ընկերության առջև խնդիր դնել՝ Լուսժողկոմատի առաջադրություններով ուսուցչությանը՝ նրա ամենորյա աշխատանքում մեթոդական ոգնություն ցույց տալու հիմնական հարցերը մշակելու։

Վերանայել մանկավարժության հարցերին նվիրված գոյություն ունեցող պարբերական հրատարակությունները, վճռականապես նրանց վորակը բարելավելու և նրանց յերեսը դեպի դպրոցն ու նրա կարիքները դարձնելու նպատակով, ուսուցիչներին անպայման ներգրավելով խմբագրական ապարատի մեջ։

## 3. Կադրերը

Ուսուցիչների մեջ աշխատելիս հարկավոր է առաջնորդվել դեռևս 1922 թվին Լենինի տված ցուցումով. «Ժողովրդական ուսուցիչը մեզ մոտ պետք է դրված լինի այնպիսի բարձրության, վորի վրա նա յերբեք կանգնած չի յեղել, կանգնած չի և չի կարող կանգնել բուրժուական հասարակության մեջ» (XVIII հ., 2-րդ մաս, եջ 115)։

Հաշվի առնելով մանկավարժական կադրերի և նրանց վորակավորումը բարձրացնելու պահանջի աճումն ընդհանուր ու-



սումն իրականացնելու կապակցությամբ, առաջարկել ԽՍՀՄ Պետպլանին և միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին յերկու ամսում կազմել և ԽՍՀՄ Ժողկոմխորհին ի հաստատություն ներկայացնել մանկավարժական կադրերի պատրաստման պլանը, կադրեր, վորոնք ամբողջովին ապահովեն տարրական ու միջնակարգ դպրոցների ուսուցիչների նկատմամբ յեղած պահանջը։

Կազմակերպել ուսուցիչների ծանոթացումն արտադրության հիմունքներին գործարաններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում և կոլտնտեսություններում, այն հաշվով, վոր 1931—32 թ. ընթացքում այդ ծանոթացումն ընդգրկի դասատուական բոլոր կադրերը։

ԽՍՀՄ Հողժողկոմատին՝ ագրոնոմներ պատրաստող ուսումնական հիմնարկների կոնտինգենտը վորոշելիս հաշվի առնել կոլտնտեսական յերիտասարդության դպրոցների պահանջը, ինչպես և անհրաժեշտ ոգնություն ցույց տալ ժողովրդական լուսավորության որգաններին, արտադրության մեջ զբաղված ագրոնոմիական ուժերին կոլյերիտ դպրոցների աշխատանքի մեջ ներգրավելու համար։

Ինդուստրիալ և գյուղատնտեսական բոլոր բուհերում ծանոթացնել դպրոցի պոլիտեխնիզացիայի աշխատանքի մեթոդներին և արտադրական-տեխնիկական ուսուցման դրվածքին։

Առաջարկել ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին և միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ հատուկ միջոցառումներ մշակել ընտրելու պիոներական կոլվարներ, նրանց ամրացնելու աշխատանքի մեջ, բարձրացնելու նրանց ընդհանուր և մասնագիտական-մանկավարժական վորակավորումը, նրանց վրա նայելով իբրև թանկարժեք ռեզերվի՝ նոր մանկավարժական կադրեր պատրաստելու համար։

Հանձնարարել Պետպլանին, Ֆինժողկոմատին, Լուսաշխի Կենտկոմին և միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ տասնորյա ժամանակամիջոցում միջոցառումներ մշակել բարձրացնելու տարրական և միջնակարգ դպրոցի ուսուցչության աշխատավարձը։ Լուսաշխի միության Կենտկոմին՝ միութենական հանրապետությունների լուսժողկոմատների հետ միասին մի ամիս ժամանակամիջոցում մշակել ուսուցիչների

աշխատանքի դիֆերենցված վարձատրության սիստեմ ըստ շրջանների, ըստ վորակավորման և աշխատանքի վորակի։

Ուսուցիչներին մթերքներ և արդյունաբերական ապրանքներ պետք է մատակարարել հետևյալ կարգով. քաղաքներում և արդյունաբերական ռայոններում ամրացնել բանվորական փակ բաշխիչներին ու ճաշարաններին՝ արդյունաբերական բանվորների նորմաներով. կոլտնտեսություններում ուսուցիչների մատակարարումը պարենային մթերքներով կատարել կոլտնտեսությունների պարենային ֆոնդերից՝ տվյալ շրջանի արդյունաբերական բանվորների նորմաներով, գյուղական ուսուցիչների մատակարարումն արդյունաբերական ապրանքներով և արդյունաբերական արտադրության մթերքներով, ինչպես և դեռևս կոլտնտեսություն չունեցող գյուղերի ուսուցիչների մատակարարումը պարենավորման մթերքներով՝ կատարել կենտրոնացված մատակարարման ֆոնդերից՝ տվյալ շրջանի արդյունաբերական բանվորների նորմաներով։ Ուսուցչության մեջ կատարվող ամբողջ աշխատանքում ամեն կերպ զարգացնել սոցմրցումն ու հարվածայնությունը, ըստ ամենայնի խրախուսելով հարվածային ուսուցիչներին։

## 4. Տարրական յեվ միջնակարգ դպրոցի նյութական բազան

Նշելով, վոր դպրոցների նյութական բազան—նոր շենքերի կառուցումը, գոյություն ունեցողների նորոգումը, ուսումնական սարքավորման և ուսման պիտույքների արտադրությունը—չափազանց անբավարար է և դառնում է դպրոցների աշխատանքը բարելավելու խոչընդոտներից մեկը, Կենտկոմն առաջարկում է Միության Պետպլանին՝ մշակել նոր դպրոցական շինարարության հնգամյա պլան։

Պարտադիր համարել, վոր բոլոր նոր կառուցումներում դպրոցների շինարարությունն ավարտվի ձեռնարկության աշխատանքների սկզբին։

Դպրոցական շենքերի ֆոնդն ընդարձակելու նպատակով Կենտկոմն առաջարկում է տեղական կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին՝ ապահովել չզբաղված նախկին դպրոցական շենքերի վերադարձը դպրոցներին, ինչպես և



կուլակային բռնագրավված տների ոգտագործումը դպրոցների համար։ Անհրաժեշտ է կոլտնտեսությունների նախաձեռնությունն ու միջոցները լայն չափով ներգրավել՝ դպրոցի նյութական բազան բարելավելու և ուսուցչության ապահովվածությունը բարելավելու գործին։

ԺՏԳԽ-ին՝ ստեղծել ուսումնական ու դպրոցական սարքավորում և ուսման պարագաներ պատրաստող արդյունաբերության Համամիութենական միավորություն, յերկու ամիս ժամանակամիջոցում քննարկելով այս միավորության պլանը, այն հաշվով, վոր արդեն 1932 թ. ինչպես տարրական, այնպես ել միջնակարգ դպրոցների հիմնական մասսան մատակարարվի ուսումնական սարքավորման անհրաժեշտ մինիմումով։ Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ մի ամիս ժամանակամիջոցում կազմել համապատասխան հայտ և ներկայացնել ԺՏԳԽ, մշակելով ուսման պարագաների և պոլիտեխնիկ սարքավորման ստանդարտները։

Առաջարկել ԽՍՀՄ ԺՏԳԽ-ին՝ դպրոցներին հանձնել դըպրոցական արհեստանոցների աշխատասենյակների համար պիտանի դազգյահները, գործիքներն ու զանազան թափուկները (խոտան, ջարդվածք, լաթ), վորոնք չեն կարող ոգտագործվել ձեռնարկության մեջ։ Միութենական հանրապետությունների ժողկոմխորհներին, յերկրային ու մարզային գործկոմներին և արդյունաբերական կոոպերացիայի որգաններին՝ ամենակարճ ժամանակամիջոցում տեղերում կազմակերպել ուսման պարագաների և ուսումնական սարքավորման արտադրությունը մասսայական դպրոցի համար, այս նպատակով ոգտագործելով տեղական միջոցները։

## 5. Դպրոցի կառավարումն ու ղեկավարությունը

Նշելով միութենական հանրապետությունների լուսժողկոմատների վերջին տարիներս ձեռք բերած հաջողություններն իրենց կազմակերպական աշխատանքի վերակառուցման գծով, կուսակցության Կենտկոմն ընդգծում է, վոր դպրոցի աշխատանքի վորակի բարելավումն անհնարին է, յեթե Լուսժողկոմատի որգանները վճռականապես չբարձրացնեն դպրոցի ղեկավարության վորակը, յեթե նրանք շտապ չանցնեն ոպերատիվ, կոնկրետ և դի-

ֆերենցված ղեկավարություն, հաշվի առնելով առանձին մարզերի ու շրջանների տնտեսական ու քաղաքական նշանակությունը, ազգային առանձնահատկությունները և այլն, ժողովրդական լուսավորության բոլոր օղակներում սահմանելով խիստ, դիմազրկությունը բացառող պատասխանատվություն՝ հանձնարարված գործի համար։ Կենտկոմը ժողովրդական լուսավորության բոլոր որգաններից պահանջում է աշխատել ու ղեկավարել նոր ձևով, աճած պահանջներին համապատասխան, այն պահանջների, որ դպրոցին առաջադրում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

Կենտկոմն առաջարկում է միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ վճռականապես վերակառուցել ժողովրդական լուսավորության որգանների ղեկավարության պրակտիկան, դարձնելով այն իսկապես ոպերատիվ ու դիֆերենցված, ուշադրությունը կենտրոնացնելով կարևորագույն արդյունաբերական շրջանների (մետաղ, ածուխ, նավթ և այլն), խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների, համատարած կոլեկտիվացման շրջանների ու նոր շինարարությունների վրա։ Վերացնել «հավասարար» մոտեցումն ուժերի ու միջոցների բաշխմանը, դրանք ամենից առաջ համակենտրոնացնելով սոցիալիստական շինարարության առաջատար ճակատամասերում։

Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ ապահովել միանձնյա ղեկավարության իրականացումը դըպրոցի կառավարման գործում։ Արհմիութենական կազմակերպություններին՝ այս գործում անհրաժեշտ ոգնություն ցույց տալ ժողովրդական լուսավորության որգաններին։

Միութենական հանրապետությունների լուսժողկոմատները, կազմակերպելով գործնական ոգնություն ուսուցիչներին նրանց աշխատանքում, պետք է բարձրացնեն ուսուցչության պատասխանատվությունը դպրոցական աշխատանքի վորակի համար, զատելով ու խրախուսելով նվիրված և իրենց գործն իմացող ուսուցիչներին։

Մանկական ինքնավարության որգանների աշխատանքն այնպես դնել դպրոցում, վոր այն գլխավորապես ուղղված լինի դեպի ուսուցման վորակի բարձրացումն ու գիտակցական կարգապահության ամրացումը դպրոցում։



Կենտկոմը գտնում է, վոր այս վորոշմամբ դրված խնդիրների հաջող իրականացման համար միութենական հանրապետությունների լուսժողկոմատները վճռական պայքար պիտի մղեն ժողովրդական լուսավորության որգաններում յեղած այն տարրերի դեմ, վորոնք ընդդիմանում են դպրոցի աշխատանքը դարձնելու այս վորոշմամբ նշվող ուղղությամբ, փոխանակ բարձրացնելու ուսուցման վորակը, կամ տարվում են «ձախ» ֆրազով, կամ յետ են տանում դեպի բուրժուական դպրոցը։

Կենտկոմն ընդգծում է դպրոցի աճող նշանակությունն ու դերը սոցիալիստական շինարարության մեջ։ Կենտկոմն առաջարկում է բոլոր կազմակերպություններին՝ սիստեմատիկ ու անշեղ պայքար մղել դպրոցական աշխատանքի բնագավառում կուսակցության քաղաքականությունն ոպորտունիստական, հակալենինյան խեղաթյուրումների յենթարկելու դեմ։ Պոլիտեխնիկ դպրոցի կառուցման ճանապարհին յեղած գլխավոր վտանգը՝ կուսակցության քաղաքականության աջ-ոպորտունիստական աղճատումների դեմ պայքարելու հաջողությունը,—աղճատումներ, վորոնք տանում են դեպի հրաժարում դպրոցի պոլիտեխնիզացիայից, դեպի հին, բանավոր դպրոցի պահպանման փորձերը, դեպի թեորիական ուսուցման ու պրակտիկայի խզումը,—յենթադրում է պայքարի ուժեղացումը «ձախ» ոպորտունիստական աղճատումների, «դպրոցի մահացման» և ուսուցչի դերը նվազեցնելու թեորիաների դեմ։

Կենտկոմը բոլոր կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը դարձնում է մասսայական դպրոցի, ուսուցչի աշխատանքի ու դպրոցի ամենօրյա կոնկրետ ղեկավարության ամրացման նկատմամբ ուշադրությունը վճռականապես ուժեղացնելու անհրաժեշտության վրա։

„Правда", 5 սեպտեմբերի 1931 թ. Համ Կ(բ)Կ ԿԿ

## ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(Պիոներկազմակերպության 10-ամյակի առթիվ)

ՀԱՄ Կ(բ)Կ ԿԿ 1932 Թ. ԱՊՐԻԼԻ 21-ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Վերջին տարիներս սոցիալիստական շինարարության բնագավառում պրոլետարական պետության ձեռք բերած հաջողությունները, ԽՍՀՄ բանվորների ու կոլտնտեսականների կուլ-





2651
40
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ... Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ-ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

տուրական վերելքն ու նրանց բարեկեցության անընդհատ աճումն ապահովեցին յերեխաների դրության և նրանց մեջ կատարվող աշխատանքի բարելավումը։

Պիոներական կազմակերպությունը, հանդիսանալով յերեխաների մասսայական քաղաքական կազմակերպությունը, վոր խոշոր նշանակություն ունի աճող սերնդի կոմունիստական դաստիարակության համար, իր գոյության տաս տարում զգալի հաջողություններ ե ձեռք բերել։ Միլիոնավոր յերեխաներ կուսակցության ու կոմյերիտմիության ղեկավարությամբ պիոներական շարժման միջոցով հաղորդակից են դարձել նոր հասարակական կյանքին, ընդարձակել են իրենց հասարակական-քաղաքական մտահորիզոնը և մտել սոցիալիզմի ակտիվ ու գիտակից կառուցողների շարքերը։

Սակայն պիոներական կազմակերպությունը դեռ բնավ բավականաչափ աշխատանք չի ծավալել յերեխաների կոմունիստական դաստիարակության համար։

Պիոներական աշխատանքի ամենաթույլ տեղը հանդիսանում ե այն, վոր մինչև այժմ յերեխաների հսկայական ակտիվությունը բավականաչափ չի ուղղվել դեպի մանկական կոմունիստական շարժման կարևորագույն խնդիրը, վորը ներկայումս հանդիսանում ե՝ պայքարն ուսուցման վորակի համար դպրոցում, «գիտությունների հիմունքներին» տիրապետելու, յերեխաների մեջ և առանձնապես դպրոցում գիտակցական կարգապահություն հաստատելու համար, առանց վորի անկարելի յե աճող սերնդից հաջողությամբ կոմունիստական հասարակության կառուցողներ պատրաստել։

Լենինյան կոմյերիտմիությունը, իբրև պիոներական կազմակերպության անմիջական ղեկավար, իր ամենօրյա գործնական աշխատանքներում չափազանց անբավարար ե ղեկավարում նրան և թույլ ուշադրություն ե դարձնում նրա աշխատանքներին։

Միութենական հանրապետությունների լուսժողկոմատները և առժողկոմատներն ու նրանց տեղական որգանները միանգամայն անբավարար ոգնություն են ցույց տալիս կոմյերիտմիությանը պիոներական կազմակերպությունն ամրացնելու աշխատանքում, իսկ արհմիություններն ու պրոլետարական հասարակայնության



մասսայական կազմակերպությունները («Յերեխաների բարեկամներ», «Կարմիր խաչ», «Պրոլետարական տուրիզմի ընկերություն» և այլն) բավարար ուշադրությամբ ու խնամքով չեն աշխատում անհրաժեշտ պայմաններ ստեղծել պիոներական ջոկատների գործունեությունը ծավալելու համար։

Համ Կ(բ)Կ Կենտկոմն անբավարար ե համարում ֆիզիկական կուլտուրայի խորհուրդների, արհմիությունների ու կամավոր ընկերությունների աշխատանքը յերեխաների մեջ՝ առողջարար միջոցառումներ կիրառելու ասպարեզում (յերեխաների առողջության պահպանում, սպորտ, ճամբարներ և այլն)։

Առանձնապես անբավարար պիտի համարվի կոմյերիտմիության, արհմիությունների և ժողովրդական լուսավորության որգանների աշխատանքը մանկական կոմունիստական շարժման ղեկավար կադրեր պատրաստելու և նրանց վորակը բարձրացնելու գծով, վորի հետևանքով պիոներական կազմակերպությունը դեռ բնավ չի ապահովված պրակտիկ աշխատողների անհրաժեշտ և պատշաճ կերպով պատրաստված կադրերով։

Միանգամայն անբավարար պետք ե համարել տեղական կուսակցական կազմակերպությունների աշխատանքը պիոներշարժման ղեկավարության ասպարեզում։

Համ Կ(բ)Կ Կենտկոմը գտնում ե, վոր պիոներական կազմակերպության տասնամյակի տոնակատարությունը պետք ե վերածվի բոլոր աշխատավորների լայն մասսայական կամպանիայի՝ աճող սերնդի կոմունիստական դաստիարակությունն ուժեղացնելու համար։

Հավանություն տալով ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշմանը 1932 թ. մայիսի 23-ից մինչև հունիսի 1-ը պիոներական կազմակերպության տասնամյակը կատարելու վերաբերյալ, Համ. Կ(բ)Կ Կենտկոմը վ ո ր ո շ ո ւ մ ե.

1. Պիոներական կազմակերպության ուշադրության կենտրոն դարձնել սոցիալիստական վերաբերմունքի մշակումը դեպի ուսումը, աշխատանքը և հասարակական-պրակտիկ գործունեությունն ինչպես իրենց՝ պիոներական շարքերում, այնպես ել յերեխաների մեջ։ Հասնել այնպիսի դրության, վոր «յուրաքանչյուր պիոներ» միշտ և ամենուրեք—դպրոցում, ընտանիքում, փողոցում, պիոներակումբում, պիոներճամբարներում և այլն, իրոք լինի «որինակ բոլոր յերեխաների համար»։

Կենտկոմը վճռականապես դատապարտում է պիոներշարժումը վերացնելու աջ-օպորտունիստական փորձերը՝ այն «ձուլելով դպրոցի հետ», ինչպես և «ձախ» այն խեղաթյուրումները, որոնք պրոպագանդա յեն մղում դպրոցի ֆունկցիաները հանձնելու պիոներշարժմանը, որպիսի հանգամանքը հանդիսանում է «դպրոցի մահացման» հակալենինյան թեորիայի ուղղակի արտացոլումը։

Լենինյան կոմյերիտմիությունը պատանեկական մասսաների մեջ տարվող իր աշխատանքի հիմք ընդունելով Կենտրոնական Կոմիտեյի դիրեկտիվը դպրոցի մասին, պետք է ամենակարճ ժամանակամիջոցում ներկա շրջանի այս կենտրոնական խնդրի շուրջը կազմակերպի իրենց իսկ յերեխաների ակտիվությունը։

Պատանի պիոներների ջոկատների հասարակական աշխատանքի բովանդակության վճռական վերակառուցումը պետք է ծավալվի այն ուղղությամբ, որպեսզի նրա մեջ կենտրոնական տեղ գրավի՝ կոմյերիտմիության ղեկավարությամբ, սերտորեն կապված դպրոցական կազմակերպությունների և ժողովրդական լուսավորության օրգանների հետ՝ իրենց իսկ յերեխաների կազմակերպած պայքարն ուսման որակի համար, գիտակցական կարգապահության համար, դպրոցի պոլիտեխնիզմի համար, մանկական ֆիզկուլտուրայի զարգացման համար, յերեխաների ազատ ժամանակի ճիշտ կազմակերպման համար և մանկական մասսաների կոմունիստական դաստիարակության ամբողջ աշխատանքի բարձրացման համար, ընդդեմ մանկական միջավայրը ներս սողոսկող պրոլետարիատին խորթ իդեոլոգիայի ամեն մի փորձի։

Անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում հասնել այն բանին, որ յուրաքանչյուր դպրոցականի կողմից իր ուսումնական պարտականությունների, հասարակական-գործնական աշխատանքների գծով առաջադրությունների և դպրոցական ներքին կարգապահության կանոնների գիտակցական, բարեխիղճ, ճշտապահ ու ճշգրիտ կատարումը դառնա նրա «պատվի գործը»։

Առողջ փոխարինողների համար պայքարելը պետք է հանդիսանա խորհուրդների և պրոլետարական պետության բոլոր օրգանների, արհմիությունների և կոմյերիտմիության, բոլոր



հասարակական կազմակերպությունների (ֆիզկուլտուրային, «Յերեխաների բարեկամներ»-ի, «Կարմիր խաչ»-ի և ուրիշ.) ու խորհրդային ամբողջ հասարակայնության ամենօրյա հոգսը։ Այս աշխատանքը պետք է դառնա պիոներկազմակերպության աշխատանքի բովանդակության կարևորագույն տարրերից մեկը։

2. Նշելով կուսակցական կազմակերպությունների անբավարար ուշադրությունը յերեխաների մեջ կատարվող աշխատանքին, ՀամԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում է կուսկազմակերպություններին՝ ամեն կերպ ուժեղացնել իրենց աշխատանքն այս ասպարեզում։

Առողջ փոխարինողների համար պայքարը պետք է տոգորված լինի Լենինի այն ցուցումով, որ «հատկապես նա, այս յերիտասարդությունը պետք է ավարտի կոմունիզմի գործը, հատկապես նա դեռևս պետք է մարտնչի կոմունիզմի համար, և նա այս մարտերը պետք է դիմավորի ամուր, առողջ, պողպատե ներվերով ու յերկաթե մկաններով»։

Ղեկավարվելով հենց այս ցուցումով, կոմյերիտմիությունը, լուսժողկոմատները, առժողկոմատները և ֆիզկուլտուրայի խորհուրդները պետք է ամենակարճ ժամանակամիջոցում ապահովեն սպորտի և մասսայական առողջարար ու ռազմաֆիզկուլտուրական աշխատանքի զանազան ձևերի լայն ծավալումը յերեխաների մեջ։ Ընդ որում անհրաժեշտ է ամբողջ վճռականությամբ պայքար մղել յերեխաներին հասարակական պարտականություններով ծանրաբեռնելու դեմ, ղեկավարվելով կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի, ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի դիրեկտիվներով ու Լուսժողկոմատի և Առժողկոմատի օրգանների որոշումներով։

3. Կատարելով այս խնդիրը, կոմյերիտմիությունը, Լուսժողկոմատի, Առժողկոմատի օրգանները, արհմիությունները և կամավոր ընկերությունները պետք է առավելագույն չափով ընդլայնեն կուլտուր-մասսայական աշխատանքի բոլոր ձևերն ու միջոցները պիոներների ու բոլոր յերեխաների մեջ, պայքարելով նրանց հանգստի և ազատ ժամանակի ճիշտ կազմակերպման համար (բացօթյա մասսայական խաղեր, ֆիզկուլտ լիցք, ակմբային աշխատանք, ռադիոընդունիչների տեղակայում, կոլեկտիվ ունկնդրում, կենդանի լրագրերի կազմակերպում, թատ-

քոն, կինո և այլն)։ Սրա հետ միասին անհրաժեշտ է վճռականապես ուժեղացնել դաստիարակչական աշխատանքը ջոկատում և բարձրացնել պիոներկազմակերպության գաղափարական-քաղաքական մակարդակը, հատուկ ուշադրություն դարձնելով, որ երեխաները դաստիարակվեն ինտերնացիոնալիզմի ոգով, դաստիարակվեն անհաշտ պայքարի ոգով ազգային թշնամանքի, մեծապետական շովինիզմի ու տեղական նացիոնալիզմի արտահայտության դեմ երեխաների ու մեծահասակների շրջանում։

Պարտավորեցնել կոմերիտմիությանը պիոներական ջոկատներում կազմակերպել սիստեմատիկ քաղաքական ինֆորմացիա սոցիալիստական շինարարության ու դասակարգային պայքարի կարևորագույն հարցերի շուրջը, ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում։

Երեխաների համար ծավալել առաջին հնգամյակի արդյունքների և երկրորդ հնգամյակի հեռանկարների լայն պարզաբանություն, ինչպես և կազմակերպել պիոներների ու ամբողջ մանկական մասսայի սիստեմատիկ ծանոթացումը բոլշևիկյան կուսակցության, լենինյան կոմերիտմիության պատմությանը, ԽՍՀՄ մասսայական հեղափոխական շարժմանը և միջազգային բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի հերոսական օրինակներին։

Այս նպատակով որքան կարելի է շատ ներգրավել հին կուսակցականներին, կոմերիտականներին, քաղաքացիական պատերազմի մասնակիցներին, աշխատանքի հերոսներին ու սոցիալիստական շինարարության հարվածայիններին, օգտագործելով դաստիարակչական աշխատանքի զանազան ձևերը (զրույցներ, պատմումներ, ընթերցումներ և այլն)։

Սրա հետ միասին անհրաժեշտ է ձգտել, որ յուրաքանչյուր ջոկատում ու պիոներական օղակում սիստեմատիկ աշխատանք կատարվի գրքով—գեղարվեստական գրականության, կլասիկների, արդի մանկական գիտական-հանրամատչելի գրականության կոլեկտիվ և անհատական ընթերցում, կարդացածի քննադատական քննարկում, ուսուցիչների կոնսուլտացիա և այլն։ Այս նպատակով պետք է արմատապես բարելավվի գրա-



դարանային գործը դպրոցներում, և մանկական գրականության հրատարակության գործը պետք է դրվի պատշաճ բարձրության վրա։

Կենտկոմը պարտավորեցնում է ԿԿ Կուլտպրոպին՝ ՀամԼԿԵՄ Կենտկոմի հետ միասին մի ամսվա ժամանակամիջոցում հատուկ միջոցառումներ մշակել այս ասպարեզում և մտցնել Կենտկոմ՝ ի հաստատություն։

Քաղաքում, գյուղում և ազգային շրջաններում շարունակելով պիոներկազմակերպության առողջ աճեցումն աշխատավորների երեխաներից, գլխավոր ուշադրությունը դարձնել նրա ամրացման, նորեկների հետ դաստիարակչական աշխատանք կատարելու վրա, յուրաքանչյուր պիոներջոկատի աշխատանքի խորացման ու աշխուժացման վրա, ջոկատի և օղակի կազմակերպական ամրացման վրա։

4. Հանձնարարել ՀամԼԿԵՄ Կենտկոմին՝ հատուկ միջոցառումներ մշակել ամրացնելու պիոներկազմակերպությունների ղեկավարությունը, սկսած բջիջից և վերջացրած ՀամԼԿԵՄ Կենտկոմով, առանձնապես ամրացնելով մանկական կոմունիստական կազմակերպությունների շրջանային բյուրոները և մասսայական մեթոդական աշխատանք ծավալել ամբողջ կազմակերպության մեջ։

Հանձնարարել ՀամԼԿԵՄ Կենտկոմին՝ մոտ ժամանակներս մշակել նոր «Կանոնադրություն մանկական կոմունիստական կազմակերպությունների մասին» երեխաների համար հասկանալի ձևով և մտցնել ՀամԿ(բ)Կ Կենտկոմ՝ ի հաստատություն։

Կենտկոմը հավանություն է տալիս ՀամԼԿԵՄ Կենտկոմի որոշմանը պիոներական կազմակերպության կադրերն ամրացնելու վերաբերյալ և պարտավորեցնում է կուսակցական կազմակերպություններին՝ ապահովել մանկական կոմունիստական շարժման ղեկավար կադրերի ընտրությունը, պատրաստումն ու վերապատրաստումը։

5. Կենտկոմը պարտավորեցնում է միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին, առժողկոմատներին և կամավոր ընկերություններին, արհմիություններին ու ֆիզիկական կուլտուրայի խորհուրդներին՝ $1^1/_2$ ամսում մշակել պիոներ-

րական կազմակերպությանն ոգնելու և յերեխաների մեջ կատարվող ամբողջ աշխատանքը բարելավելու կոնկրետ ոպերատիվ պլաններ:

Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ աշխատանքն այնպես վերակառուցել, վոր տարրական ու միջնակարգ դպրոցների ուսուցչությունն ավելի ու ավելի շատ անմիջական պրակտիկ մասնակցություն ցույց տա պիոներկազմակերպության աշխատանքին:

Միութենական հանրապետությունների առժողկոմատներին՝ ձգտել բեկում առաջացնելու յերեխաների բժշկա-սանիտարական սպասարկման գործի կազմակերպման և դպրոցում սանիտարական գրագիտության համար մղվող պայքարի մեջ:

6. Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին, կոմյերիտմիությանն ու արհմիություններին՝ տնտեսական ժողկոմատների հետ միասին, ներգրավելով կամավոր ընկերությունները, մշակել մանկական տեխնիկական կայաններ և եքսկուրսիոն-տուրիստական բազաներ ծավալելու պլանը, ձգտելով, վոր յուրաքանչյուր շրջանում լինի առնվազն մի կայան և մի եքսկուրսիոն-տուրիստական բազա:

7. Տեղական կազմակերպություններին՝ Սոյուզկինոյի և միութենական հանրապետությունների լուսժողկոմատների հետ միասին 1933 թ. ծավալել հատուկ մանկական ակումբների, կինոների ու թատրոնների, գեղարվեստական դաստիարակության տների, կուլտուրայի ու հանգստի մանկական պարկերի շինարարությունն այն հաշվով, վոր այդ ձեռնարկումներով առաջին հերթին ընդգրկվեն խոշորագույն արդյունաբերական կենտրոնները, նորակառույցները, առավել հետամնաց ազգային շրջանները և համատարած կոլեկտիվացման կարևորագույն շրջանները:

8. Պարտավորեցնել ՀԱՄԿԽ-ին, Սոյուզկինոյին և միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ կուլտուրական հաստատությունների ցանցը (թատրոններ, կինոներ, ակումբներ, սոցիալիստական կուլտուրայի տներ և այլն) յերեխաներին սպասարկելու տրամադրել ճիշտ սահմանված որերին ու ժամերին:



9. Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ ապահովել յերեխաների ազատ ժամերի կազմակերպումը, այս նպատակով ոգտագործելով դպրոցական ցանցը և ձգտելով, վոր դպրոցն առավելագույն ուշադրությունը դարձնի մանկական արտադպրոցական մի ամբողջ շարք միջոցառումների ծավալման վրա:

10. Կենտկոմը պարտավորեցնում է միութենական հանրապետությունների առժողկոմատներին՝ «Կարմիր խաչի» Կենտկոմի, Ֆիզիկական կուլտուրայի խորհուրդների և Պրոլետարական տուրիզմի ընկերության հետ միասին ամեն կերպ ընդարձակել պիոներների ու դպրոցականների ընդգրկումն առողջարար միջոցառումներով, կազմակերպելով ճամբարներ, ամառային հրապարակներ, հանգստի տներ, մանկական դահուկակայաններ, մանկական սահարաններ, մանկական տուրիզմ, պիոներներին ու դպրոցականներին համախմբելով այս միջոցառումների շուրջը:

11. Ֆիզիկական Կուլտուրայի Գերագույն Խորհրդին խնդիր առաջադրել գործնականապես կազմակերպելու մանկական ֆիզկուլտ աշխատանքը և այն ապահովելու հատուկ կադրերով (դպրոցներում, պիոներճամբարներում և այլն):

12. Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին ու առժողկոմատներին՝ կոմյերիտմիության Կենտկոմի հետ միասին ապահովել ծնողների ներգրավումը յերեխաների մեջ առողջարար միջոցառումներ կիրառելու գործին վոչ միայն դպրոցական ոժկոմների, այլև զանազան կամավոր ընկերությունների միջոցով:

13. ՊԱՋԸ—Ավիաքիմին, Ավտոդորին, Ռադիոյի բարեկամների ընկերությանը և այլն՝ ամեն կերպ ընդարձակել «Պատանի բարեկամներ»-ի խմբակների կազմակերպումը:

«Պատանի բարեկամներ»-ի բոլոր խմբակները պետք է կազմակերպվեն պիոներջոկատներին կից և աշխատեն նրանց անմիջական ղեկավարությամբ, իսկ կամավոր ընկերությունները պետք է իրենց մոտ կազմակերպեն մանկական աշխատանքի հատուկ սեկտորներ:

14. Միանգամայն անբավարար համարելով մանկական սպորտինվենտարի արտադրության վիճակը, պարտավորեցնել Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին և Ֆիզիկական Կուլ-

ասւրայի Գերագույն Խորհրդին՝ ամենակարճ ժամանակամիջոցում ընդարձակել այս արտադրությունը և ձգտել բարելավելու արտադրանքի վորակը (չմուշկներ, դահուկներ, գնդակներ, հատուկ ինվենտար՝ մանկական էքսկուրսիաների, ամառային հրապարակների, զանազան մասսայական խաղերի համար և այլն)։

15. Պարտավորեցնել միութենական հանրապետությունների առժողկոմատներին Գլխսոցապին, «Կարմիր խաչ»-ին, «Յերեխաների բարեկամներ»-ին՝ մշակելու հատուկ հանգստի տների ու մանկական սանատորիաների շինարարության պլաններն այն հաշվով, վոր այն կիրառվի 1933—1934 թ. թ.։

16. Մատակարարման որգանները 1932 թ. պետք է մթերքներով լրիվ ապահովեն պիոներական ճամբարները, ամառային դպրոցները, մանկական հանգստյան տներն ու սանատորիաները։

Մանկական առողջի հետագա բարելավման համար Կենտկոմն առաջարկում է Մատժողկոմատին ու կոոպերացիային՝ բոլոր դպրոցներում կազմակերպել տաք նախաճաշեր, մեծացնել մանկական ճաշարանների ցանցը, բարձրացնել յերեխաներին տրվող առաջին անհրաժեշտության մթերքների նորմաները։

17. Կենտկոմն առաջարկում է կուսակցական կոմիտեներին.

ա) մոտ ժամանակներս ստուգել յերեխաների մեջ աշխատանք կատարող պիոներական կազմակերպությունների աշխատանքի վիճակը, միջոցներ նշելով բարելավելու յերեխաների կոմունիստական դաստիարակության աշխատանքը և առաջին հերթին այսպիսի ստուգում կատարել կոմյերիտական կազմակերպության աշխատանքի վերաբերմամբ.

բ) կոմունիստներին լայնորեն ներգրավել յերեխաների մեջ կատարվող աշխատանքին։

Կենտկոմը պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին նշված ամբողջ աշխատանքը գյուղում ծավալել ամենևին վոչ պակաս չափով, քան քաղաքում։

«Парт. строительство»—ՀամԿ(բ)Կ ԿԿ որգան,
1932 թ. հունիս, № 11—12։



# ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՅԵՎ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԿ(բ)Կ ԿԿ 1932 Թ. ՈԳՈՍՏՈՍԻ 25-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը հաստատում է, վոր վերջին տարում ՌՍՖՍՀ տարրական ու միջնակարգ դպրոցների ասպարեզում զգալի տեղաշարժեր են կատարվել ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու, գիտությունների սիստեմատիկ յուրացմանն անցնելու կապակցությամբ՝ ուսման վորոշակի պլանների, ծրագրերի ու դասացուցակների հիման վրա։ Սակայն դեռևս մինչև վերջ չի վերացված դպրոցի արմատական թերությունը. այդ այն է, վոր «ուսուցումը դպրոցում բավարար ծավալով հանրակրթական գիտելիքներ չի տալիս և անբավարար է լուծում տեխնիկումների ու բարձրագույն դպրոցի համար միանգամայն գրագետ, գիտությունների հիմունքներին (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն) լավ տիրապետող մարդիկ պատրաստելու խնդիրը» (ՀամԿ(բ)Կ ԿԿ 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումը)։

Սրա կարևորագույն պատճառներն են՝ ծրագրերի պակասությունները (առանձնապես դպրոցի 2-րդ կոնցենտրի՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ խմբերի համար), դպրոցական աշխատանքի մեթոդների անբավարարությունը և մեթոդական ղեկավարության թուլությունը լուսժողկոմատների ու նրանց տեղական որգանների կողմից, դպրոցի թույլ կարգապահությունը, իսկ յերբեմն էլ՝ վորևէ կարգապահության և կարգուկանոնի բացակայությունը։

Հարկավոր է նմանապես նշել դպրոցական սիստեմի տարբեր օղակների միջև կապակցության բացակայությունը, վորի հետևանքով տարրական և միջնակարգ դպրոցը վո՛չ ավարտող կոնտինգենտների, վո՛չ էլ գիտելիքների մակարդակի տեսակետից չի համապատասխանում տեխնիկումները, բուհերն ու բուհերն ընդունվելու համար կադրեր պատրաստելու խնդիրներին։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում է.

## I. ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

*Հավաստելով, որ Կենտրոնական Կոմիտեի 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումից հետո ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի ուսման ծրագրերը տարրական ու միջնակարգ դպրոցի համար, առանձնապես I աստիճանի ծրագրերը, բավականաչափ բարելավվել են, ավելի բարձր են դարձել գիտելիքների ծավալով և ավելի սիստեմատիկ՝ ուսման նյութի դասավորման տեսակետից, համեմատած նախընթաց տարիների ծրագրերի հետ, Կենտկոմը գտնում է, վոր նրանք դեռևս էական թերություններ ունեն և պետք է 5, 6, 7-րդ տարիների ծրագրերը վերամշակվեն:*

*Ծրագրերի հիմնական թերություններն են.*

*ա)* Ծրագրերի գերբեռնվածությունը ուսման նյութով, *վորը հանգում է այն բանին, վոր մի շարք դիսցիպլիններ դպրոցում անցնում են հապճեպ, իսկ գիտելիքները և ունակությունները յերեխաները հաստատապես չեն յուրացնում և չեն ամրապնդում (մաթեմատիկայից—ծավալաչափության բաժինը 7-րդ խմբում, գրականությունից այնպիսի յերկեր մտցնելն ուսման ծրագրերի մեջ, վորոնք անմատչելի յեն աշակերտներին և այլն):*

*բ)* Անբավարար կապակցությունը կամ նույնիսկ նրա բացակայությունը *առանձին ծրագրերի, առանձնապես մաթեմատիկայի ծրագրի ու գծագրության, ինչպես և մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի ծրագրերի ու աշխատանքի ծրագրի միջև և այլն (գծագրության 5-րդ տարվա ծրագրով պահանջվող յերկրաչափական գիտելիքները տրվում են միայն 6-րդ տարում, ֆիզիկայի ուսումնասիրությունը 5, 6 և 7-րդ տարիներում չի ապահովված մաթեմատիկական գիտելիքների ծավալով և այլն):*

*գ)* Սկզբունքային սխալների առկայությունը *մի շարք ծրագրերում և ծրագրերը կազմողներից վոմանց գռեհիկ մոտեցումն իրենց խնդրին (արագացման գաղափարի, ուժի և Նյուտոնի օրենքների հասկացողության բացակայությունը ֆիզիկայի դասընթացում, բջիջի գաղափարի կծկումը բիոլոգիայի դասընթացում, քարտեզի վրա կողմնորոշման բացակայությունն աշխարհագրության դասընթացում, առանձին քաղաքական սխալները հասարակագիտության դասընթացում):*



*դ)* Ոչ բավարար պատմական մոտեցումը *հասարակական առարկաների ծրագրերին,—սա արտահայտվում է նրանով, վոր նրանց մեջ չափազանց թույլ պատկերացում է տրվում ժողովուրդների ու յերկրների պատմական անցյալի, մարդկային հասարակության զարգացման մասին և այլն:*

*Էական թերություն է նաև այն, վոր դեռևս չեն մշակված պատմության ծրագրերը:*

*Սրա համապատասխան Կենտկոմն առաջարկում է.*

*1. ՌԽՖՍՀ Լուսժողկոմատին՝ առ 1 հունվարի 1933 թ. վերամշակել տարրական ու միջնակարգ դպրոցի ծրագրերն այնպես, վոր ապահովվի յերեխաների կողմից գիտությունների հիմունքների իրական, հաստատուն ու սիստեմատիկ յուրացումը, փաստերի իմացումն ու ճիշտ խոսելու, գրելու, մաթեմատիկական վարժությունների և այլ ունակությունները:*

*2. Ծրագրերը վերամշակելիս առաջնորդվել հետևյալով.*

*ա) 2-րդ կոնցենտրի խմբերի համար կատարել մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի ու բիոլոգիայի ծրագրերի ուսման նյութի ներքին վերաբաշխում, այս ծրագրերի ուսման նյութի ծավալն ու բնույթը միանգամայն համապատասխանեցնելով այդ խմբերից յուրաքանչյուրի յերեխաների տարիքային առանձնահատկություններին: Սրա հետ միաժամանակ անհրաժեշտ է նաև մասնակի կրճատում կատարել 2-րդ կոնցենտրի, մաթեմատիկայի, ֆիզիկայի, բիոլոգիայի ու քիմիայի ծրագրերում այն հաշվով, վոր անպայման ապահովվի յուրաքանչյուր գիտության հիմունքների հաստատուն, ամուր յուրացումն ու մտապահումը:*

*բ) Վերացնել 2-րդ կոնցենտրի մաթեմատիկայի, ֆիզիկայի ու քիմիայի ուսման ծրագրերի միջև, ինչպես նաև պատմության, հասարակագիտության, գրականության ու լեզուների ծրագրերի միջև յեղած անբավարար կապակցության գոյություն ունեցող փաստերը:*

*գ) Հաշվի առնել սոցիալիստական շինարարության նյութի օգտագործման անհրաժեշտությունը (վարժություններ ռուսաց լեզվից, մաթեմատիկայից, հասարակագիտությունից և այլն, լաբորատոր աշխատանքներ ֆիզիկայից, քիմիայից և բնագիտությունից), պարապմունքների ժամանակ ապահովելով յերեխաների համար մատչելի նյութի խնամքոտ ընտրությունը:*

դ) Զգալիորեն ուժեղացնել պատմության տարրերը հասարակագիտության, լեզվի ու գրականության, աշխարհագրության ծրագրերում, այս դիսցիպլինների հիմնական հատվածներն ու թեմաները լուսաբանելով անհրաժեշտ փաստական նյութով, պատմական էքսկուրսներով ու համեմատություններով։

ե) Նախատեսել մաթեմատիկայի ժամերի ավելացում, տարրական ու միջնակարգ դպրոցում մաթեմատիկայի դասընթացը կառուցելով այնպես, որպեսզի ապահովվի անցումը պրոֆտեխնիկական կրթության հաջորդ աստիճաններին։

զ) Ֆիզիկայի ծրագրերում մտցնել ստատիկայի բացակայող տարրերը, ուժի, Նյուտոնի օրենքների գաղափարը․ բիոլոգիայի ծրագրերում՝ բջիջի և օրգանիզմի բջջային կազմության գաղափարը․ քիմիայի համար անհրաժեշտ է ծրագրի ավելի սիստեմատիկ կառուցվածքը, որը հաշվի առնի քիմիական տարրական գաղափարների հստակ յուրացումը․ աշխարհագրության ծրագիրը պետք է ապահովի քարտեզի, առանձնապես ԽՍՀՄ քարտեզի ճանաչումը․ ֆիզիկական աշխարհագրության հիմնական գաղափարների ճանաչումը, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ի, այնպես էլ նրա յուրաքանչյուր հանրապետության, յերկրի ու մարզի ֆիզիկական, բնական ու տնտեսական աշխարհագրության հիմնական տարրերի իմացումը․ աշխարհագրության ուսման ծրագրերի մեջ պատշաճ ծավալով գիտելիքներ պիտի մտցվեն կապիտալիստական յերկրների աշխարհագրությունից։

է) Անհրաժեշտ համարել, որ միջնակարգ դպրոցն անպայման ապահովի մի օտար լեզու գիտենալն ամեն մի ավարտողի համար։

ը) Նշելով մայրենի լեզվի և հասարակագիտության ծրագրերի ու դասավանդման դեռևս անբավարար վիճակը, չնայած որոշ բարելավմանը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում է ՌԽՖՍՀ Լուսժողկոմատին՝ առանձին ուշադրություն դարձնել այդ առարկաների ծրագրերը մշակելու և նրանց դասավանդումը բարելավելու վրա։

Մայրենի լեզվի ծրագիրը պետք է ապահովի իրոք սիստեմատիկ և ճշգրիտ շրջագծված գիտելիքների յուրացումը, ինչպես և ճիշտ կարդալու, գրելու և խոսելու կայուն ունակություններ, աշակերտների ուսման աշխատանքի պրակտիկայի մեջ մտցնելով ինքնուրույն գրավոր աշխատանքներ, քերականական վերլուծություն և այլն ինչպես դասարանում, այնպես էլ տանը։



թ) Անհրաժեշտ համարել հասարակագիտության, գրականության, լեզուների, աշխարհագրության ու պատմության ուսման ծրագրերի մեջ մտցնել ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրաներին, նրանց գրականությանը, արվեստին, պատմական զարգացմանը վերաբերող կարևորագույն գիտելիքները, ինչպես նաև ԽՍՀՄ-ի գավառագիտության տարրերը (բնական առանձնահատկություններ, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սոցիալ-տնտեսական զարգացում և այլն)։

ժ) Մեծ նշանակություն տալով պոլիտեխնիկ դպրոցի աշխատանքային ուսուցման դրվածքին, անհրաժեշտ համարել աշխատանքի ուսման ծրագրերը վերամշակել այնպես, որ ապահովվի ուսուցման ու արտադրողական աշխատանքի իսկական միացումը և «արտադրության գլխավոր ճյուղերի ուսումնասիրությունը թեորիայում և պրակտիկայում» (ՀամԿ(բ)Կ ծրագիրը), ղեկավարվելով Լենինի այն ցուցումով, որ պոլիտեխնիկ սկզբունքը «չի պահանջում ամեն ինչի ուսուցում, բայց պահանջում է արդի ինդուստրիայի հիմունքների ուսուցում առհասարակ» (Լենինի գրանցածը Համառուս. 7-րդ գումարման ԿԳԿ 3-րդ նստաշրջանում 1920 թ. սեպտեմբերի 26—27-ին, Լուսժողկոմատի զեկուցման առթիվ)։ Յելնելով սրանից, անհրաժեշտ է ապահովել, ինչպես նշում էր Լենինը, հետևյալ «պոլիտեխնիկ կրթության հիմունքները»․ «հիմնական գաղափար էլեկտրականության մասին», «էլեկտրականության կիրառումը մեխանիկական արդյունաբերության նկատմամբ», «նույնը քիմիականի նկատմամբ», «նույնը ՌԽՖՍՀ էլեկտրիֆիկացիայի պլանի մասին», այցելել «ոչ պակաս, քան 1—3 անգամ էլեկտրոկայան, գործարան, խորհտնտեսություն», «իմանալ ագրոնոմիայի այսինչ հիմունքները և այլն (մանրամասն մշակել գիտելիքների մինիմումը)»։

Այս առնչությամբ և սրա հետ միասին միջնակարգ դպրոցի աշակերտների համար պետք է ապահովվի հիմնական գործիքներին տիրապետելը և փայտ, մետաղ և այլն մշակելու ունակություն ձեռք բերելը։

## II. Ուսման աշխատանքը կազմակերպելու յեվ դպրոցական ռեժիմն ամրացնելու մասին

Նշել, վոր ուսումնական պարապմունքների կազմակերպման տեսակետից Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումից հետո դպրոցում մեծ կարգ է հաստատված (կայուն դասացուցակներ, ուսման աշխատանքի և պարապմունքների ընթացքի ավելի հստակ կազմակերպում):

Սակայն չնայած այս վորոշման մեջ Կենտկոմի արած այն ցուցումին, վոր վոչ մի մեթոդ չի կարող ճանաչվել վորպես ուսման հիմնական և ունիվերսալ մեթոդ, դպրոցների աշխատանքի պրակտիկայում իբրև հիմնական մեթոդ տարածվել է այսպես կոչված «լաբորատոր-բրիգադային մեթոդը» (մի շարք դպրոցներում սա դարձել է ունիվերսալ), վորն ուղեկցվել է մշտական ու պարտադիր բրիգադների կազմակերպմամբ, վորոնք ուսման աշխատանքի մեջ հանգել են խեղաթյուրումների, ինչպես են՝ դիմազրկությունը, մանկավարժի դերի նվազեցումը և, շատ դեպքերում, յուրաքանչյուր աշակերտի անհատական ուսման անտեսումը:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում է միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ վերացնել լաբորատոր բրիգադային մեթոդի այս խեղաթյուրումները և ուսման պրոցեսը դպրոցում կազմակերպել հետևյալ հիմունքներով.

ա) Տարրական և միջնակարգ դպրոցում ուսման աշխատանքը կազմակերպելու հիմնական ձևը պետք է լինի աշակերտների տվյալ խմբի դասը՝ պարապմունքների խիստ վորոշակի դասացուցակով և աշակերտների հաստատուն կազմով: Այս ձևն իր մեջ պետք է ներառի յուրաքանչյուր աշակերտի ընդհանուր խմբային, բրիգադային և անհատական աշխատանքն ուսուցչի ղեկավարությամբ, կիրառելով ուսման բազմազան մեթոդներ: Այս դեպքում ամեն կերպ պետք է զարգացվեն ուսման աշխատանքի կոլեկտիվ ձևերը, չկազմակերպելով մշտական ու պարտադիր բրիգադներ:

բ) Դասատուն պարտավոր է սիստեմատիկ, հետևողական կերպով շարադրել այն դիսցիպլինը, վոր ավանդում է ինքը, յերեխաներին ամեն կերպ վարժեցնելով դասագրքով ու գրքով



աշխատելուն, զանազան տեսակի ինքնուրույն գրավոր աշխատանքների, կաբինետում, լաբորատորիայում, ուսուցողական արհեստանոցում աշխատելուն և այս հիմնական մեթոդների հետ միասին լայնորեն կիրառելով փորձերի ու գործիքների զանազան ցուցադրումներ, եքսկուրսիաներ (դեպի գործարան, թանգարան, դաշտ, անտառ և այլն): Այս դեպքում դասատուն պետք է ամեն կերպ ոգնի յերեխաներին, յերբ պարապմունքների ժամանակ նրանք դժվարությունների կհանդիպեն: Հարկավոր է յերեխաներին սիստեմատիկ կերպով վարժեցնել ինքնուրույն աշխատանքի, լայնորեն կիրառելով զանազան առաջադրություններ տալը—գիտելիքների վորոշ դասընթացի բավարար չափով տիրապետելու համեմատ (խնդիրների ու վարժությունների լուծում, մոդելների պատրաստում, լաբորատորիայում աշխատել, հերբարիումներ հավաքել, դպրոցամերձ հողամասերն ոգտագործել ուսման նպատակներով և այլն):

Կենտկոմը պարտավորեցնում է լուսժողկոմատներին ու նրանց որգաններին՝ դպրոցի ամբողջ ուսումնական աշխատանքի մեջ ապահովել դասատուական կազմի ղեկավար դերը:

գ) Դպրոցական աշխատանքի հաշվառման հիմքը պետք է կազմի աշակերտների գիտելիքների սիստեմատիկաբար կատարվող ընթացիկ, անհատական հաշվառումը:

Դասատուն պետք է ուսուցման աշխատանքի պրոցեսում ուշադրությամբ ուսումնասիրի ամեն մի աշակերտի: Այս ուսումնասիրության հիման վրա դասատուն պարտավոր է ամեն մի յեռամսյակի վերջում կազմել տվյալ առարկայից յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության բնութագիրը: Արգելել հաշվառման ու հաշվետվության ամեն տեսակ բարդ սխեմաներն ու ձևերը:

Անհրաժեշտ համարել բոլոր աշակերտների համար ստուգողական քննություններ սահմանել տարեվերջին:

դ) Առաջարկել Լուսժողկոմատին՝ մշակել առանձին դիսցիպլինների, ինչպես և ուսումնա-դաստիարակչական աշխատանքի զանազան տեսակների (որինակ՝ լաբորատորիայում, արտադրության մեջ, դպրոցամերձ հողամասում) մեթոդիկաներ՝ աշակերտների տարիքային առանձնահատկությունների համեմատ:

յե) Մի շարք դեպքերում դպրոցի վարչությունը և մանկավարժներն ուշադրություն չեն դարձնում կարգի խանգարման վրա դպրոցում և նախաձեռնություն չեն ցուցաբերում ամրացնելու աշակերտների գիտակցական դիսցիպլինան: Այս պատճառով դպրոցների վարիչներին ու մանկավարժներին իբրև պարտականություն հանձնարարել համառ դաստիարակչական աշխատանք կատարել, պայքարելով աշակերտների՝ դպրոցական կարգը խանգարող զանցանքների դեմ, այս գործում ներգրավելով հասարակական կազմակերպություններին, ծնողներին, կոմյերիտական և պիոներական կազմակերպություններին, իսկ անուղղելի աշակերտներին, վորոնք խուլիգանություն են անում և վիրավորում են ուսուցչական կազմին, խախտում են դպրոցի վարչության ու մանկավարժների կարգադրությունները և խափանում դպրոցական ռեժիմը, փչացնում կամ հափշտակում են դպրոցի գույքը—վտարել դպրոցից, զրկելով այդպիսիներին մեկից մինչև յերեք տարի դպրոց մտնելու իրավունքից:

զ) Առաջարկել լուսժողկոմատներին՝ մշակել մի շարք միջոցառումներ մանկավարժական սիստեմատիկ պրոպագանդայի գծով, անհապաղ ձեռնարկելով ծնողների համար հանրամատչելի մանկավարժական գրականություն կազմելու և հրատարակելու գործին:

ե) Մանկավարժական աշխատանքի եֆեկտավորությունը դպրոցում բարձրացնելու նպատակով և հաշվի առնելով սրա համար դպրոցի ուսուցչական աշխատանքի այնպիսի անհրաժեշտ պարագաներ մատակարարելու խոշորագույն նշանակությունը, ինչպես են՝ ուսման պարագաները, ուսումնական ապարատուրան կաբինետների համար, արհեստանոցների ուսումնաարտադրական սարքավորումը և ուսումնական պարագաների այլ տեսակները, պոլիտեխնիկ դպրոցի կազմակերպման համար պատշաճ ուսումնական բազա ստեղծելու նպատակով յերկուամիս ժամանակամիջոցում մշակել տարրական և միջնակարգ դպրոցների ուսումնական պարագաների (քարտեզներ, գլոբուսներ, դիտողական-աղյուսակներ և այլն), բնագիտական և ֆիզիկո-մաթեմատիկական կաբինետների համար ուսուցման ապարատուրայի, արտադրության ու մատակարարման ծավալման պլանը, ինչպես և աշխատանոցներն ու դպրոցական արհեստանոցները համապատասխան դազգյահներով, գործիքներով ու նյութերով ստանդարտ ձևով սարքավորելու պլանը:



Արտադրության ընդարձակման և դպրոցներին այս պարագաները մատակարարելու գործի բարելավման պլանը պետք ե մշակվի այն հաշվով, վոր արդեն 1932—1933 ուս. տարում զգալիորեն բարձրանա դպրոցական ամբողջ աշխատանքի նյութական ուսումնական բազան:

### III. Ուսուցչական կադրերի մասին

1. Նշելով, վոր վերջին տարիների ընթացքում զգալիորեն աճել ե ուսուցչի ակտիվությունը և բարձրացել նրա պատասխանատվությունն աշխատանքի համար, ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ընդգծում ե ուսուցչի ավելի ու ավելի աճող դերը յերեխաներին գիտությունների հիմունքները սովորեցնելու, նրանց մեջ գիտակցական կարգապահություն և դեպի ուսումն ու աշխատանքը կոմունիստական վերաբերմունք դաստիարակելու գործում:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը պարտավորեցնում ե միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին, խորհրդային ու կուսակցական որգաններին՝ ուսուցչի համար նրա աշխատանքի ընթացքում ամեն կերպ ապահովել անհրաժեշտ պայմաններ՝ նրա կողմից Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության յերիտասարդ սերնդի ուսուցման ու դաստիարակման պատասխանատու և պատվավոր պարտականությունները հաջող կատարելու համար: Սիստեմատիկ աշխատանքն ուսուցչի գաղափարական-քաղաքական մակարդակը, ընդհանուր կրթությունն ու մանկավարժական վարպետությունը բարձրացնելու համար, մթերքներ և արդյունաբերական ապրանքներ մատակարարելու տեսակետից ուսուցչին արդյունաբերական բանվորներին հավասարեցնելու վերաբերյալ Կենտկոմի և ԽՍՀՄ ԺԿԽ դիրեկտիվների անվերապահ ու ճշգրիտ կատարումը, աշխատավարձը ժամանակին վճարելը, ուսուցչի բնակարանի, ընտանիքի ու հանգստի մասին հոգալը, զգայուն վերաբերմունքը դեպի նրա ամենօրյա կարիքները,—այս բոլորը պետք ե բնորոշեն ուսուցչի հանդեպ լենինյան վերաբերմունք ցուցա-

*բերելու մասին կուսակցության տված դիրեկտիվների ճիշտ կատարումը խորհրդային և կուսակցական օրգանների կողմից։*

*2. Լուսժողկոմատին՝ սահմանել ուսուցիչներին փոխադրելու և նշանակելու ճշգրիտ կարգ և կադրերի այնպիսի դասավորում տեղերում, վորն ապահովի փորձված ուսուցիչների ճիշտ օգտագործումն աշխատանքի մեջ և վերջիններիս սիստեմատիկ օգնությունն ուսուցչական յերիտասարդ կադրերին։*

*Առաջարկել տեղական օրգաններին՝ դպրոցական պարապմունքների և նրանց համար պատրաստվելու ժամանակ (դասերին պատրաստվելը, ինքնակրթություն, դասընթացքներին ու մեթոդական խորհրդակցություններին մասնակցելը և այլն) ուսուցչին չկտրել իր գործից հասարակական աշխատանքի համար, վճռականապես արգելելով ուսուցչի օգտագործումը գյուղխորհրդի, շրջգործկոմի և այլոց համար զանազան տեխնիկական հանձնարարություններ կատարելու նպատակով։*

*3. Անհրաժեշտ համարել ուսուցիչների յերեխաներին տեխնիկումները, բուհերն ու բտուհներն ընդունել բանվորների յերեխաներին հավասար։*

*4. Միացյալ Պետհրատին՝ 1933 թ. հունվարի 1-ից կազմակերպել գիտության առանձին ճյուղերին և մանկավարժական հարցերին վերաբերող այն գրքերի կոմպլեկտների ընտրությունն ու մատչելի գներով առաքումն ուսուցիչներին, վորոնք ամենից ավելի անհրաժեշտ են մանկավարժներին։*

*Լուսժողկոմատին՝ գիրք վաճառող կազմակերպությունների հետ միասին մի ամիս ժամանակամիջոցում հրապարակել գրքեր գնելու և ստանալու արտոնյալ պայմանները՝ ուսուցիչների համար։*

*5. Լուսժողկոմատին՝ միջոցներ ձեռք առնել ամենակարճ ժամանակամիջոցում պատշաճ ձևով կազմակերպելու ուսուցիչների մանկավարժական կրթության, հեռակա և կարճատև ուսուցման ամբողջ գործը, առանձին ուշադրություն դարձնելով, վոր ուսուցչությունը տիրապետի մեթոդիկային և մանկավարժական աշխատանքի գործիքներին (ուսուցման համար զանազան պարագաների, գործիքների, քարտեզի, դիտողական աղյուսակների, կինոյի, ռադիոյի և այլնի հմտորեն օգտագործումը):*



*Ամեն կերպ ընդլայնել աշխատանքի լավագույն օրինակների համար ուսուցիչներին խրախուսելու և պարգևատրելու պրակտիկան, ինչպես և առաջավոր դպրոցների և ուսուցիչների նվաճումների հաշվառումն ու օգտագործումը։*

## IV. Միջնակարգ դպրոցի բարձր խմբերի մասին

*Նպատակ ունենալով իրականացնել կուսակցության ծրագիրը՝ «Ձրի և պարտադիր ընդհանուր և պոլիտեխնիկ կրթությունը (վորը թեորիայում ու պրակտիկայում ծանոթացնում է արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին) մինչև 17 տարեկան յերկու սեռի բոլոր յերեխաների համար կիրառելու մասին» (ՀամԿ(բ)Կ ծրագիրը), ինչպես և նպատակ ունենալով շատ բարձրացնել միջնակարգ դպրոցի աշակերտության ընդհանուր կրթական և պոլիտեխնիկ պատրաստության մակարդակը, ընդարձակել պատրաստված կոնտինգենտները բարձրագույն դպրոցի համար և վերացնել տարիքային անհամապատասխանությունը միջնակարգ ու բարձրագույն դպրոցների միջև, —1932—33 ուսման տարվանից ձեռնարկել յոթնամյա պոլիտեխնիկ դպրոցը տասնամյակի վերակազմելուն։*

*Յելնելով սրանից, առաջարկել ԽՍՀՄ ԺԿԽ-ին՝ մի ամիս ժամանակամիջոցում հաստատել առաջիկա ուսման տարում յոթնամյակի վրա 8-րդ խմբերի կազմակերպման կոնկրետ պլանն ու չափերը, իբրև առաջին քայլը դեպի տասնամյա դպրոցը։*

«Правда», *29 օգոստոսի 1932 թ.*

# ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԿ 1933 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

*Տարրական և միջնակարգ դպրոցի վերաբերյալ 1931 թ. սեպտեմբերի 5-ի և 1932 թ. օգոստոսի 25-ի իր վորոշումներում ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ընդգծել է, վոր դպրոցի արմատական թերությունն այն է, վոր՝*

«Դպրոցի ուսուցումը բավարար ծավալի հանրակրթական գիտելիքներ չի տալիս և անբավարար է լուծում տեխնիկումների ու բարձրագույն դպրոցների համար միանգամայն գրագետ, գիտությունների հիմունքներին (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն) լավ տիրապետող մարդիկ պատրաստելու խնդիրը»։

Կենտկոմի երկու վորոշումների եվ կենսագործման անխախտ ու վճռական պայմանը—ինչպես դպրոցի նկատված արմատական թերությունը վերացնելու, այնպես եվ ամբողջ ուսուցումը դասավանդման նոր կայուն ծրագրերի ու մեթոդների անցնելու տեսակետից—հանդիսանում է բոլոր առարկաներից կայուն դասագրքեր ունենալը, վորոնք կոչված են վերացնելու դասագրքերի անվերջանալի «նախագծման» գոյություն ունեցող «մեթոդը»։

Մինչդեռ Լուսժողկոմատի և նրա օրգանների սխալ գծի հետևանքով ներկայումս խորհրդային դպրոցում վոչ միայն բացակայում է կայուն, հանրաճանաչ և գիտության պահանջներին բավարարող դասագիրքը, այլև պարզվում է, վոր այսպիսի թերությունը ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի ղեկավար շրջաններում համարվում է նրա «հեղափոխական նվաճումների» հատկանիշը։

Միանգամայն անհանդուրժելի համարելով այսպիսի դրությունը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում է.

1. Սխալ համարել ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի և Միացյալ Պետհրատի գիծը դասագրքեր ստեղծելու վերաբերմամբ։

2. Դատապարտել և, իբրև ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումներին հակասող, վերացնել՝

ա) ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի միասնական դպրոցի բաժնի 1918 թ. օգոստոսի շրջաբերական նամակը, վոր նշում է, թե «դասագրքերն առհասարակ պետք է վտարվեն դպրոցից»։

բ) Լուսժողկոմատի կոլեգիայի 1930 թվի մարտի 28-ի վորոշումը, վոր գտնում է, թե «անկարելի յե ներկա մոմենտին պահպանել դասագրքի կայունության սկզբունքը»։

գ) Դասագրքի հարցի առընչությամբ գումարված Համառուսաստանյան կոնֆերանսի 1930 թ. մայիսի 16-ի բանաձևը—հավանություն ստացած և տեղերին հանձնարարված Լուսժողկոմատի կոլեգիայի կողմից (տես, Լուսժողկոմատի 1930 թ. հունիսի 30-ի շրջաբերական նամակը),—վորի մեջ ասված է. «...Դասագիրքը վոչ մի դեպքում կայուն չպետք է լինի։ Կոնֆերանսը վճռականապես մերժում է դասագրքերի կայունացման սկզբունքը»։

դ) Լուսավորության աշխատողների արհմիության կենտկոմի նախագահության 1932 թ. մարտի 3-ի վորոշումը, վորը «սխալ և քաղաքականապես վնասակար» է համարել դասագրքերը յերեք տարով կայունացնելու վորոշումը։

3. Անհապաղ դադարեցնել այսպես կոչված «աշխատանքի գրքերի» և «ցաք ու ցրիվ դասագրքերի» հրատարակումը, վորոնք փոխարինում են իսկական դասագրքերին և սիստեմատիկ գիտելիքներ չեն տալիս դպրոցում ավանդվող առարկաներից։

Հանձնարարել Լուսժողկոմատին և Միացյալ Պետհրատին՝ գործնականապես ապահովել այն կայուն դասագրքերի հրատարակումը, վորոնք գործ են ածվելու մի շարք տարիներ (մայրենի լեզու, մաթեմատիկա, աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն և այլն), հրատարակումը վերջացնելով մինչև 1933 թ. հուլիսի 15-ը, վորպեսզի այդ դասագրքերը գործածության դրվեն ուսման տարվա սկզբից—1933 թ. սեպտեմբերի 1-ից։

4. Սահմանել իբրև կանոն, վոր յուրաքանչյուր դասագիրք Լուսժողկոմատի կոլեգիայի կողմից պետք է հաստատվի նախապես խնամքով քննելուց հետո, այն հաշվով, վոր առանց Լուսժողկոմատի կոլեգիայի հատուկ վորոշման վոչ մի փոփոխություն չմտցվի դասագրքի մեջ։

5. Վերացնել գոյություն ունեցող այն կարգը, ըստ վորի ՌՍՖՍՀ-ի ամեն մի մարզ, յերկիր ու ինքնավար հանրապետություն դասագրքեր է հրատարակում ինքնուրույնաբար։ Սահմանել, վոր յուրաքանչյուր առանձին առարկայի համար պետք է գոյություն ունենա միասնական պարտադիր դասագիրք, հաստատված ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի կողմից և հրատարակված Ուսմանկհրատի կողմից։

Իրավունք վերապահել յուրաքանչյուր յերկրի և մարզի, Լուսժողկոմատի թույլտվությամբ ու նրա հաստատությամբ տարրական դպրոցների համար հրատարակելու յերկրային դասագիրք, հիմնված տեղական գավառագիտական նյութի վրա։

6. Պարտավորեցնել Միացյալ Պետհրատին՝ մերժնալ դարձնել դասագրքերը նրանց տեխնիկական ձևավորման (ֆորմատ, կազմ, շրիֆտ, թուղթ, բրոշյուրավորում, շապիկ, նկարներ և այլն) և դասագրքերի թուղթը, շրիֆտը, նկարները, գծագրերը, աղյուսակները և այլն անպայման բարելավելու տեսակետից:

7. Հանձնարարել ՌսԿ(բ)Կ Կենտկոմին, ԲԿ(բ)Կ Կենտկոմին, Անդրերկրկոմին և Կենտկոմի Միջին Ասիական Բյուրոյին՝ ընդունել այս որոշումից բխող համապատասխան որոշումներ:

ՀամԿ(բ)Կ ԿԵ Ցեկոմ

„Правда", 1933 թ. փետրվարի 13

## ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ ՊԻՈՆԵՐՆԵՐԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԿ 1934 Թ. ԱՊՐԻԼԻ 24-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մի շարք դպրոցներում ու պիոներ-կազմակերպություններում միանգամայն անթույլատրելի կերպով երեխաներին ծանրաբեռնում են կուսակցության XVII համագումարի որոշումների, մարքսիստական-լենինյան թեորիայի և կուսակցության քաղաքականության հարցերի «մշակումով»:

Դպրոցում և պիոներ-կազմակերպության մեջ 8—12 տարեկան երեխաներին ստիպում են պատասխանել այնպիսի հարցերի, որոնք միանգամայն անմատչելի են նրանց ըմբռնմանը, չափազանց վերացական են և մեռցնում են նրանց մեջ ամեն մի հետաքրքրություն, նույնիսկ դեպի հասարակական կյանքի ու սոցիալիստական շինարարության այն երևույթները, որոնք մատչելի են երեխաների ըմբռնմանը: Երեխաների մեջ տարածվում են սխոլաստիկ «հարցացուցակներ», կազմակերպվում են «քաղմարտեր», «քաղվիճակախաղեր» և այլ մտացածին, ձևական ձևեր: Երեխաների համար հասարակական ամենից ավելի ցայտուն իրադարձությունների վերաբերյալ կենդանի, պատկերավոր ու գրավիչ պատմվածքը փոխարինվում է շաբլոնով ու անթույլատրելի շտապ վարժեցումով:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը գտնում է, որ այս բոլորը հանդիսանում է երեխաների կոմունիստական դաստիարակության խնդիրների խեղաթյուրում և հակառակ է գնում Կենտկոմի վորոշմանը դպրոցի ու պիոներ-կազմակերպության աշխատանքի ու խնդիրների վերաբերյալ:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում է.

1. Առաջարկել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին և Համ ԼԿՅԵՄ Կենտկոմին (պիոներ կազմակերպության գծով)՝ անհապաղ դադարեցնել կուսակցության XVII համագումարի վորոշումների և մարքսիստական-լենինյան թեորիայի հարցերի մշակումը տարրական դպրոցում:

2. ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին և լուսժողկոմատներին՝ սահմանել այնպիսի կարգ, որ դպրոցում պիոներների մեջ աշխատելու վերաբերյալ պատանի պիոներների Կենտրոնական Բյուրոյի ոչ մի ցուցմունք չտրվի՝ առանց լուսժողկոմատի գիտության, տեղերում՝ առանց ժողովրդական լուսավորության բաժինների վարիչների գիտության, իսկ բուն դպրոցում՝ առանց դպրոցի վարիչի գիտության:

3. Միջնակարգ դպրոցում թույլ չտալ, որ երեխաները ծանրաբեռնվեն հասարակական-քաղաքական առաջադրություններով:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմ

„Правда", 1934 թ. ապրիլի 24

## ԽՍՀՄ-Ի ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

1. Դպրոցի կազմակերպչական պարզորոշ կառուցվածքն ու կարգն ապահովելու նպատակով սահմանել ամբողջ ԽՍՀՄ համար ընդհանուր հանրակրթական դպրոցի հետևյալ տիպերը. տարրական դպրոց, վոչ լրիվ միջնակարգ դպրոց և միջնակարգ դպրոց։

2. Տարրական դպրոցում ունենալ 4 դասարան (1-ից մինչև 4-րդը ներառյալ), վոչ լրիվ միջնակարգում՝ 7 դասարան (1-ից մինչև 7-րդը ներառյալ), միջնակարգում՝ 10 դասարան (1-ից մինչ 10-րդը ներառյալ)։

3. Դպրոցներում գոյություն ունեցող խմբերը վերանվանել դասարաններ, հաստատելով հերթական թվարկում 1-ին դասարանից մինչև 10-րդը։

4. Մի շարք դպրոցներում 7 տարեկան յերեխաների համար գոյություն ունեցող այսպես կոչված զրո խումբը վերանվանել նախապատրաստական դասարան։

5. Առաջարկել ԽՍՀՄ Պետպլանին՝ ԽՍՀՄ ԺԿԽ ներկայացնելու միջնակարգ դպրոցների ցանցի արագացրած զարգացման պլան։

6. Սահմանել, վոր վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտածներն իրավունք ունեն նախապատվորեն մտնելու տեխնիկումները, իսկ միջնակարգ դպրոցն ավարտածներն իրավունք ունեն նախապատվորեն մտնելու բարձրագույն ուսումնական հիմնարկները։

7. Տարրական դպրոցների վարիչ նշանակել այսուհետև միայն այն մանկավարժներին, վորոնք հաջող ավարտել են մանկավարժական տեխնիկում, մանկավարժական աշխատանքի 3-ամյա ստաժ ունեն և պատշաճ վկայություն են ստացել ժողովրդական լուսավորության տեղական համապատասխան որգաններից։

8. Տարրական դպրոցների վարիչներին պիտի նշանակեն միութենական և ինքնավար հանրապետությունների լուսժողկոմատները՝ ժողովրդական լուսավորության տեղական որգանների առաջադրությամբ։

9. Վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների վարիչներին անվանել դիրեկտորներ։



10. Վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների դիրեկտոր նշանակել այսուհետև միայն այն մանկավարժներին, վորոնք հաջող ավարտել են բարձրագույն մանկավարժական ուսումնական հիմնարկ և ունեն մանկավարժական աշխատանքի 3-ամյա ստաժ։

11. Վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների դիրեկտորներին պիտի նշանակեն միութենական և ինքնավար հանրապետությունների լուսժողկոմատները։

12. Արգելել մասնագիտական մանկավարժական կրթություն ունեցող անձերին նշանակել այլ, վոչ ըստ մասնագիտական աշխատանքի։

| | |
|---|---|
| ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ՝ | ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի Քարտուղար՝ |
| Վ. ՄՈԼՈՏՈՎ | Ի. ՍՏԱԼԻՆ |

«Правда», 16 մայիսի 1934 թ.

## ՀԱՄԿ(Բ)Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԻՑ «ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ (1933—1937 Թ. Թ.) ԸՆԿ. ԸՆԿ. ՄՈԼՈՏՈՎԻ ՅԵՎ ԿՈՒՅԲԻՇԵՎԻ ՏՎԱԾ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ»

... համագումարը սահմանում է հետևյալ խնդիրները բանվորների և գյուղի աշխատավորների կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու ասպարեզում.

... գ) ավարտել յերկրորդ հնգամյակում վոչ միայն Միության բնակչության անգրագիտության վերացումը, աշխատունակ մեծահասակ բնակչության կիսագրագիտության վերացումը և ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման անցկացումը, այլև իրագործել ընդհանուր պարտադիր պոլիտեխնիկական ուսուցումը յոթնամյակի ծավալով, առաջին հերթին գյուղում, վորչափ վոր քաղաքում այդ խնդիրը առաջին հնգամյակի ընթացքում հիմնականում արդեն լուծվել է. սովորողների քանակի աճը (ստորին և միջնակարգ դպրոցներում, բանֆակներում, ֆաբգործուսներում, տեխնիկումներում, բուհերում և

վտուզներում) մինչև 36 միլիոն՝ 1932 թ. 24,2 միլիոն մարդու դիմաց կամ մինչև 197 մարդ՝ բնակչության հազար մարդուց՝ 147 մարդու դիմաց, չհաշված նախադպրոցական կրթությունը, վորը 1932 թվին արդեն ընդգրկել էր 5,2 միլիոն մարդ։

(ՀամԿ(բ)Կ XVII համագումարի բանաձևից ընկ. ընկ. Մոլոտովի և Կույբիշևի՝ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յերկրորդ հնգամյա պլանի մասին տված զեկուցումների առթիվ, հատված 3-րդ, ՀամԿ(բ)Կ XVII համագումարի սղագրական հաշվետվություն, Կուսհրատ, 1934 թ., էջ 668)։

## ԽՍՀՄ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն հավաստում են, վոր ԽՍՀՄ դպրոցներում պատմության դասավանդումն անբավարար է դրված։ Դասագրքերը և հենց դասավանդումը վերացական, սխեմատիկ բնույթ են կրում։ Փոխանակ կենդանի, գրավիչ ձևով դասավանդելու քաղաքացիական պատմությունը, շարադրելով կարևորագույն իրադարձություններն ու փաստերը ժամանակագրական հաջորդականությամբ, պատմական գործիչների բնութագրումով—աշակերտներին հրամցնում են հասարակական-տնտեսական ֆորմացիաների վերացական սահմանումներ, այսպիսով քաղաքացիական պատմության կապակցված շարադրանքը փոխարինելով սոցիոլոգիական վերացական սխեմաներով։

Աշակերտների կողմից պատմության դասընթացը հաստատապես յուրացնելու վճռական պայման է հանդիսանում պատմական-ժամանակագրական հաջորդականության պահպանումը պատմական անցքերի շարադրության մեջ, աշակերտների հիշողության մեջ անպայման ամրացնելով պատմական կարևորագույն յերևույթները, պատմական գործիչներին, ժամանակագրական թվականները։ Պատմության միայն այսպիսի դասընթացը կարող է ապահովել աշակերտի համար պատմական նյութի անհրաժեշտ մատչելիությունը, ակներևությունն ու կոնկրետությունը. այս հիման վրա միայն հնարավոր է պատմական անցքերի ճիշտ վերլուծումն ու ճիշտ ընդհանրացումը, վորոնք աշակերտին մոտեցնում են պատմության մարքսիստական ըմբռնմանը։



Սրան համապատասխան, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն վորոշում են.

1. Մինչև 1935 թ. հունիսը պատրաստել պատմության հետևյալ նոր դասագրքերը.

ա) հին աշխարհի պատմություն.

բ) միջին դարերի պատմություն.

գ) նոր պատմություն.

դ) ԽՍՀՄ պատմություն.

ե) կախյալ և գաղութային յերկրների նոր պատմություն։

... 3. Պատմության վորակավորված մասնագետներ պատրաստելու նպատակով 1934 թ. սեպտեմբերի 1-ից Մոսկվայի և Լենինգրադի համալսարանների կազմում վերականգնել պատմական ֆակուլտետները՝ յուրաքանչյուր ֆակուլտետում աշնան ընդունելության կոնտինգենտը 150 հոգուց, սահմանելով 5 տարվա դասընթաց։

| | |
|---|---|
| ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ | ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի քարտուղար՝ |
| Վ. ՄՈԼՈՏՈՎ | Ի. ՍՏԱԼԻՆ |

«Правда», 16 մարտի 1934 թ.

## ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՍՀՄ-Ի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1934 Թ. ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Առաջարկել միութենական լուսժողկոմատներին տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում անցկացնել ընդհանուր պատմության և ԽՍՀՄ-ի պատմության տարրական դասընթացի դասավանդումը՝

ա) ԽՍՀՄ-ի տարրական պատմություն՝ ընդհանուր պատմության կապակցությամբ կրճատ տեղեկություններով—3-րդ դասարանում (80 ժամ) և 4-րդ դասարանում (40 ժամ).

բ) Հին աշխարհի պատմություն—հին Արևելքը և Հունաստանը՝ 5-րդ դասարանում (80 ժամ) և Հռոմը՝ 6-րդ դասարանում (40 ժամ)։

գ) Միջին դարերի պատմություն՝ V—XI դարեր՝ 6-րդ դասարանում (40 ժամ) և XII—XVIII դարեր՝ 7-րդ դասարանում (80 ժամ)։

„Справочник партийного работника“ вып. 9, Партиздат, 1935 г. стр. 137.

## ԽՍՀՄ ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն հավաստում են, որ տարրական և միջնակարգ դպրոցում աշխարհագրության դասավանդումը էական թերություններ ունի, որոնցից խոշորագույններն են՝ շարադրանքի վերացականությունն ու չորությունը, ֆիզիկական աշխարհագրության նյութի պակասությունը, քարտեզով թույլ կողմնորոշվելը, աշխարհագրության դասավանդման և դասագրքերի ծանրաբեռնվածությունը վիճակագրական-տընտեսական նյութով ու ընդհանուր սխեմաներով, որի հետևանքով աշակերտները դպրոցից դուրս են գալիս հաճախ առանց տիրապետելու տարրական աշխարհագրական գիտելիքներին։

Նշված թերությունները վերացնելու համար ԽՍՀՄ ԺԿԽ և ՀամԿ(բ)Կ Կենտկոմն անհրաժեշտ են համարում վերանայել տարրական և միջնակարգ դպրոցի աշխարհագրության ծրագրերն ու դասագրքերը, առաջարկելով միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին ղեկավարվել հետևյալ դրույթներով.

1. Տարրական դպրոցում (3-րդ և 4-րդ դասարաններ) աշխարհագրությունը դասավանդելիս ապահովել, որ աշակերտների հիշողության մեջ ամուր մնան հիմնական աշխարհագրական անունները (յերկրների, գետերի, ծովերի, լեռների, քաղաքների և այլն) և աշակերտները լավ գիտենան աշխարհագրական քարտեզը՝ ծրագրով հաստատված սահմաններում, շարադրանքը դարձնելով ավելի դիտողական, մատչելի, հանրամատչելի և գրավիչ։

2. Միջնակարգ դպրոցում աշխարհագրության դասավանդման մեջ մտցնել հետևյալ փոփոխությունները.

ա) 5-րդ դասարանի ծրագրի մեջ սահմանափակվել ֆիզիկական աշխարհագրությամբ և պահպանել ծրագրի համար սահմանված ծավալը, բայց պարզացնել բովանդակությունը, հարմարեցնելով 5-րդ դասարանի աշակերտների տարիքին.

բ) 6-րդ դասարանի ծրագրում կենտրոնանալ աշխարհամասերի (Յեվրոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա) ֆիզիկական-աշխարհագրական տեսության վրա, հիմնական տեղեկություններ ավելացնելով յուրաքանչյուր աշխարհամասի կարևորագույն պետությունների մասին (քաղաքական կարգեր, ժողովրդական տնտեսություն և այլն), կրճատելով ու պարզացնելով ուսման նյութն այս դասարանի աշակերտների տարիքի համեմատ.

գ) 7-րդ դասարանի ծրագրում թողնել ԽՍՀՄ ֆիզիկական աշխարհագրության ընդհանուր տեսությունը, զգալիորեն մեծացնելով նրա ծավալը, ինչպես և ԽՍՀՄ տեսությունն ըստ հանրապետությունների, յերկրների ու մարզերի, այն հաշվով, որ վճռականապես պարզացվի ու թեթևացվի ծրագրի ուսման նյութը տնտեսական ու վիճակագրական մանրամասնություններից և միաժամանակ այս տեսություններում ընդարձակվի յուրաքանչյուր հանրապետության, յերկրի ու մարզի աշխարհագրական բնութագիրը (գետերի, լճերի, ծովերի, կլիմայի, բուսական ու կենդանական աշխարհի նկարագրություն, բնակչության, խոշորագույն քաղաքների, յերկաթուղիների ու խճուղիների և այլն բնութագրումներ).

դ) 8-րդ դասարանի ծրագրով ԽՍՀՄ տնտեսական աշխարհագրությունը դասավանդել այնպես, որ սկզբում նախադրելով մի տեսություն ԽՍՀՄ արտադրողական ուժերի տեղաբաշխման և ժողովրդական տնտեսության կացության վերաբերյալ, այնուհետև տրվի յուրաքանչյուր շրջանի տնտեսա-աշխարհագրական մանրամասն բնութագիրը.

ե) 9-րդ դասարանի ծրագրի մեջ մտցնել կապիտալիստական յերկրների տնտեսական աշխարհագրությունը։

3. Մինչև 1935 թ. հունիսը պատրաստել աշխարհագրության նոր դասագրքեր, որի համար հաստատել հետևյալ հեղինակներին.

ա) *Տերեխով Պ. Գ. և Երդելի Վ. Գ.*—Տարրական աշխարհագրության դասագիրք տարրական դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանների համար *(2 մասից)*.

բ) *Պրոֆ. Բարկով Ա. Ս. և պրոֆ. Պոլովինկին Ա. Ա.*—Ֆիզիկական աշխարհագրության դասագիրք 5-րդ դասարանի համար.

գ) *Վարժանսկի Ս. Լ.*—Աշխարհամասերի և կարևորագույն յերկրների (*առանց* ԽՍՀՄ) աշխարհագրության դասագիրք 6-րդ դասարանի համար.

դ) *Պրոֆ. Բարանսկի Ն. Ն.*—ԽՍՀՄ ֆիզիկական աշխարհագրության դասագիրք 7-րդ դասարանի համար.

ե) *Պրոֆ. Բարանսկի Ն. Ն.*—ԽՍՀՄ տնտեսական աշխարհագրության դասագիրք 8-րդ դասարանի համար.

զ) *Վիտվեր Ի. Ա.*—Կապիտալիստական յերկրների տնտեսական աշխարհագրության դասագիրք 9-րդ դասարանի համար։

*4. Առաջարկել ՌՍՖՍՀ Լուսժողկոմատին և Միացյալ Պետհրատին՝ իբրև օգնություն աշխարհագրության ուսուցիչներին, հրատարակել աշխարհագրության քրեստոմատիա, աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, բիբլիոգրաֆիական ցուցակ և աշխարհագրական ժուռնալ՝ ուսուցիչների համար։*

*5. Առաջարկել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ սկսած 1934 թվից հրատարակել աշխարհագրության վերաբերյալ գրքերի մի փոքրիկ սերիա աշակերտների գրավիչ ընթերցանության համար (մեծ ճանապարհորդների կենսագրություններ, պատմվածքներ առանձին յերկրների ու ժողովուրդների կյանքից, կարևորագույն ճանապարհորդությունների հանրամատչելի նկարագրություններ և այլն)։*

*6. Առաջարկել Միացյալ Պետհրատին ու Քարտեզտրեստին՝ ապահովել ըստ լուսժողկոմատների հայտերի աշխարհագրական քարտեզների, ատլասների, նկարների, աղյուսակների և աշխարհագրական այլ ուսումնական պարագաների հրատարակումը։*

| | |
|---|---|
| ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ՝ | ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի Քարտուղար՝ |
| Վ. ՄՈԼՈՏՈՎ | Ի. ՍՏԱԼԻՆ |

«Правда», *16 մայիսի 1934 թ.*



# ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆԱՊԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԽՆԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն ու ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն քննության առան յերեխաների անապաստանության և անխնամության վերացման հարցը։*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն նշեցին, վոր ներկայումս, յերբ անընդհատ բարելավվում է քաղաքի ու գյուղի աշխատավորների նյութական-կուլտուրական վիճակը, և յերբ պետությունը հսկայական միջոցներ է հատկացնում մանկական հիմնարկների պահպանման համար, անապաստան յերեխաների առկայությունը յերկրի մայրաքաղաքներում և մյուս քաղաքներում՝ բացատրվում է նրանով, վոր տեղական խորհրդային մարմինները և կուսակցական, արհեստակցական ու կոմյերիտական կազմակերպությունները վատ են աշխատում մանուկների անապաստանությունը վերացնելու և կանխելու ասպարեզում, բացակայում է խորհրդային հասարակայնության կազմակերպված մասնակցությունն այս գործում.*

*ա) մանկատների մեծ մասն անբավարար է դրված տնտեսական և դաստիարակչական տեսակետից.*

*բ) միանգամայն անբավարար է, իսկ մի շարք վայրերում նաև բոլորովին բացակայում է կազմակերպված պայքարը յերեխաների խուլիգանության և յերեխաների ու անչափահասների մեջ յեղած հանցագործ տարրերի դեմ.*

*գ) մինչև այժմ ստեղծված չեն այնպիսի պայմաններ, յերբ այս կամ այն պատճառով «փողոց» ընկած յերեխաները (ծնողներին կորցնելը կամ նրանցից հեռանալը, մանկատներից փախչելը և այլն) անմիջապես տեղավորվեյին համապատասխան մանկական հիմնարկներում կամ վերադարձվեյին ծնողների մոտ.*

*դ) բացակայում է ներգործումն ու պատասխանատվություն կանչելն այն ծնողների ու խնամակալների նկատմամբ, վորոնք անտարբեր վերաբերմունք են ցույց տալիս դեպի իրենց յերեխաները և թույլ են տալիս, վոր նրանք խուլիգանություն, գողություն, անառակություն անեն և թափառաշրջիկներ դառնան։*

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն ու ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն վորոշեցին․

## I. Մանկատների ու աշխատանքային գաղութների դրությունը բարելավելու մասին

1. Սահմանել մանկական հիմնարկների հետևյալ տիպերը․

ա) միութենական հանրապետությունների լուսժողկոմատների տնօրինության տակ—նորմալ տիպի մանկատներ՝ գոյության միջոցներից զրկված յերեխաների համար, ինչպես և ծնողների միջոցներով պահպանվող մանկատներ և մանկատներ՝ դժվար դաստիարակելի յերեխաների համար․

բ) միութենական հանրապետությունների առժողկոմատների տնօրինության տակ՝ հատուկ մանկատներ այն յերեխաների համար, վորոնք յերկարատև բժշկության կարիք ունեն․

գ) միութենական հանրապետությունների սոցապժողկոմատների տնօրինության տակ՝ հատուկ մանկատներ հաշմանդամ յերեխաների համար․

դ) ԽՍՀՄ Ներքգործժողկոմատի տնօրինության տակ՝ մեկուսարաններ, աշխատանքային գաղութներ և ընդունիչ-բաշխիչներ։

Ընդունիչ-բաշխիչներում յերեխաները պետք է մնան վոչ ավելի, քան մի ամիս, ընդվորում ընդունիչ-բաշխիչներում պետք է հաստատվի խիստ կարգապահություն։ Նշված ժամկետն անցնելուց հետո ընդունիչ-բաշխիչը յերեխային ուղարկում է համապատասխան տիպի մանկական հիմնարկ, վորը պարտավոր է ընդունել նրան։

2. Բոլոր մանկատներում ու գաղութներում հաստատել տարիքի համապատասխան աշխատանքային ռեժիմ, վորն ապահովի յերեխաների աշխատանքային ունակությունների պատվաստումն ու մի վորոշ պրոֆեսիայի տիրապետելը մանկատներից դուրս գալու ժամանակ՝ մանկատանը կամ գաղութին կից կազմակերպելով արհեստանոցներ, ինչպես և արտադրական պրակտիկա՝ ձեռնարկություններում։ Անհրաժեշտ համարել աշխատանքի մեջ և պրոֆեսիան սովորելու գործում ամենից ավելի աչքի ընկածներին նյութական խրախուսումը։



3. Պարտավորեցնել իրենց տնօրինության տակ մանկական հիմնարկներ ունեցող ժողկոմատներին՝

ա) յերեք ամսվա ընթացքում, ըստ յուրաքանչյուր մանկատան և աշխատանքային գաղութի, վորոշել այն աշխատանքի ու պրոֆեսիայի տեսակները, վորոնց համար նրանք պետք է պատրաստեն յերեխաներին.

բ) վերանայել մանկական հիմնարկների սաների կոնտինգենտը և այս հիմնարկներն ազատել 14-ից բարձր տարիք ունեցողներից, ուղարկելով նրանց ֆաբզավուծ և խորհտնտես դպրոցները կամ արդյունաբերական ձեռնարկությունները, խորհտնտեսությունները, ՄՏԿ-ները, կոլտնտեսությունները՝ արտադրական բրիգադներում աշխատելու և սովորելու, պարտավորեցնելով ձեռնարկությունների, խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների դիրեկտորներին՝ անպայման աշխատանքի ընդունել նրանց և ապահովել բնակարանով։

Պարտավորեցնել արդյունաբերության, Հողժողկոմատի և Խորհտնտժողկոմատի օրգաններին՝ մանկատներից դուրս յեկած սաներին աշխատանքի ուղարկել նրանց ստացած վորակավորման համեմատ։

4. Բոլոր մանկատներին, առաջին հերթին գյուղական վայրերում և վոչ մեծ քաղաքներում, հատկացնել հողամասեր՝ հենց իրենց սաների ձեռքով մշակելու համար (բանջարանոցներ, այգիներ, պտղաթփարաններ գցելը, պարենային կուլտուրաների ցանքեր անելը) և ապահովել անասնաբուծական տնտեսության զարգացումը։

5. Մանկատների և աշխգաղութների սաների ընդհանուր կրթության գործը տարվում է․

ա) նորմալ տիպի մանկատների սաներինը՝ ընդհանուր դպրոցներում, ընդվորում նրանց առաջադիմության և վարքի վրա հսկելու պարտականությունը դրվում է մանկատների վարիչների վրա․

բ) դժվար-դաստիարակվողների մանկատների և աշխատանքային գաղութների սաներինը՝ անմիջականորեն մանկատներում ու գաղութներում։

6. Պարտավորեցնել միութենական հանրապետությունների ԺԿԽ-ներին՝ վորոշել ամեն մի տիպի մանկական հիմնարկի հա-

մար, իսկ յերկրային ու մարզային գործկոմներին ու ինքնավար ԽՍՀ-ների ԺԿԽ-ներին՝ ամեն մի մանկական հիմնարկի համար—պահպանման նորմաները, նախահաշիվը և սարքավորում ու նյութեր մատակարարելու պլանը։

Պարտավորեցնել ԽՍՀ Միության Ֆինժողկոմատին՝ սահմանել մանկատների ու աշխատանքային գաղութների ֆինանսավորման այնպիսի կարգ, վորի դեպքում ապահովվի մանկատներում փաստորեն յեղած բոլոր յերեխաների պահպանումը՝ հաստատված նորմաների սահմաններում։

Մանկատների, աշխատանքային գաղութների և ընդունիչների բոլոր տնտեսական գործառնություններն ազատել բոլոր տեսակի հարկումներից։

7. Սահմանել մանկական հիմնարկների վարչատնտեսական կազմի անհատական խստագույն պատասխանատվություն նյութական ռեսուրսների հափշտակման, սաների փախուստների և փախուստները թագցնելու համար։

Պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ մշակելու մանկատների ներքին կարգուկանոններ, նրանց մեջ վորոշելով ինչպես խրախուսանքի միջոցներ լավ վարքի համար, այնպես ել պատժի միջոցներ կատարված զանցանքների համար։

8. Մանկատների ու աշխատանքային գաղութների աշխատողների կազմը բարելավելու նպատակով՝

ա) պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ վերանայել մանկատների ու աշխատանքային գաղութների վարիչների ու դաստիարակների կազմը, կարգ սահմանելով, վոր նրանք անհատապես պետք է հաստատվեն այն հանրապետությունների լուսժողկոմատների կողմից, վորոնք մարզային բաժանումներ չունեն, և ժողովրդական լուսավորության յերկրային ու մարզային բաժինների կողմից, և պարտավորեցնել մարզկոմներին, յերկրկոմներին և ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին՝ մանկական հիմնարկներում աշխատելու համար առանձնացնել ավելի պատրաստված աշխատողներ։

բ) ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դպրոցական բաժնին՝ անհատական ընտրությամբ առանձնացնել 200 կոմունիստ՝ մանկատներում ու աշխատանքային գաղութներում ղեկավար աշխատանք կատարելու համար։



գ) առաջարկել ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին՝ մանկատներում ու աշխատանքային գաղութներում դաստիարակչական աշխատանքի գծով իբրև վարիչների տեղակալներ աշխատելու համար առանձնացնել 500 ակտիվ կոմյերիտական, վորոնք իրենց աշխատանքի մեջ անհատապես հաստատվելու յեն ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի կողմից։

դ) պարտավորեցնել ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին՝ այդ աշխատողների վերաբերյալ մշակել հատուկ կանոնադրություն, որա մեջ նախատեսելով, վոր այս աշխատանքին նշանակված կոմյերիտականը պետք է աշխատի յերկու տարուց վոչ պակաս։

ե) պարտավորեցնել ՀԱՄԿԽ-ին և արդյունաբերության որգաններին՝ ձեռնարկություններից առանձնացնել 300 վորակյալ բանվոր՝ իբրև մանկատների ու աշխատանքային գաղութների արհեստանոցների ղեկավարներ.

զ) պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ ընթացիկ տարում մանկ. տեխնիկումներն ավարտողներից առանձնացնել 500 հոգի և մանկ. բուհերն ավարտողներից՝ 125 հոգի—մանկատներում ու աշխատանքային գաղութներում աշխատելու համար։

է) մանկատներում ու աշխատանքային գաղութներում աշխատելու գործուղվողներին նշանակել բարձր աշխատավարձ (վոչ պակաս, քան նրանք ստացել են իրենց վերջին աշխատանքի վայրում)։

9. Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներում կազմակերպել մանկատների ղեկավարման հատուկ վարչություններ, իսկ ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների ներքգործժողկոմատներում մանկական հիմնարկների ղեկավարման հատուկ բաժիններ։

10. Պարտավորեցնել ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին, յերկրկոմներին ու մարզկոմներին ծավալելու բանվորական կազմակերպությունների, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների շեֆական աշխատանքը մանկատների ու աշխատանքային գաղութների նկատմամբ և մանկատներից ու աշխատանքային գաղութներից յուրաքանչյուրում այդ կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծել հատուկ հսկիչ խորհուրդ, այսպիսով, ապահովելով մշտական հասարակական հսկողությունը մանկատների վիճակի վրա և անհրաժեշտ ոգնությունը նրանց։

Գյուղխորհուրդների ժողովրդական լուսավորության և առողջապահության սեկցիաներում առանձնացնել կամավոր տեսուչների հատուկ խմբեր՝ մանկատների աշխատանքը սիստեմատիկաբար ստուգելու և յերեխաների խնամքի ու դաստիարակության համապատասխան պայմանների ապահովման գործին հսկելու համար։

## II Յերեխաների անապաստանությունը կանխելու մասին

11. Վորբ յերեխաներին ժամանակին տեղավորելու և ապահովելու (խնամակալներ նշանակելը, մանկատներ, արտադրություն, կոլտնտեսություն ուղարկելը և այլն) պատասխանատվությունը դնել համապատասխան քաղաքային ու գյուղական խորհուրդների նախագահների վրա։

12. Քրեական պատասխանատվություն սահմանել այն խնամակալների համար, վորոնք խնամակալությունն օգտագործում են շահադիտական նպատակներով (բնակելի տարածության գրավումը, ծնողների մահվանից հետո մնացած գույքի օգտագործումը և այլն) և խնամարկվող յերեխաներին թողնում են առանց խնամքի ու անհրաժեշտ նյութական օգնության։

Առանձին պատասխանատվություն սահմանել այն գյուղխորհուրդների նախագահների և գյուղխորհուրդների նշանակած խնամակալների նկատմամբ, վորոնք պահպանության և խնամքի միջոցներ ձեռք չեն առել վորբ մնացած յերեխաներին դաստիարակելու և թույլ են տվել, վոր նրանք բռնեն թափառաշրջիկության ուղին։

13. Կոլտնտեսությունների հասարակական փոխօգնության դրամարկղների վրա, իբրև կարևորագույն խնդիրներից մեկը, պարտականություն դնել պահպանելու վորբ յերեխաներին և օգնելու ժամանակավորապես կարիքի մեջ ընկած կոլտնտեսականների յերեխաներին։

ԽՍՀ Միության ԺԿԽ պահեստի ֆոնդից միութենական հանրապետություններին 1935 թվի համար լրացուցիչ հատկացնել առանձին դրամական ֆոնդ՝ կոլտնտեսությունների հասարակական փոխօգնության դրամարկղներին օգնելու համար։ Այս ֆոնդից կոլտնտեսությունների հասարակական փոխօգնության



դրամարկղներին վճարել 30 ռուբլի այն յուրաքանչյուր 100 ռուբլու դիմաց, վոր դրամարկղը ծախսում է օգնելու համար վորբ յերեխաներին և ժամանակավորապես կարիքի մեջ ընկած ծնողների յերեխաներին։ Այս ֆոնդի ընդհանուր չափը ԽՍՀ Միության մեջ 1935 թվի համար սահմանել 5.000.000 ռուբլի։

14. Սոցիալական ապահովագրության բյուջեյով հատուկ գումարներ առանձնացնել քաղաքներում նյութական օգնություն ցույց տալու վորբերին և ժամանակավոր կարիքի մեջ ընկած ծնողների յերեխաներին, առանձնապես՝ կարիքավոր մենակ մայրերին։

## III. Յերեխաների փողոցային խուլիգանության դեմ պայքար կազմակերպելու մասին

15. Պարտավորեցնել Բանվորագյուղացիական միլիցիայի գլխավոր վարչությանը՝ ուժեղացնել պայքարը յերեխաների ու անչափահասների փողոցային խուլիգանության դեմ (կռիվներ, անցորդների վիրավորում, տրամվայի թափարգելների վրա գնալ և այլն)։

16. Քաղաքային և խոշոր քաղաքների ռայոնական խորհուրդներին կից կազմակերպել յերեխաների անապաստանության և անխնամության դեմ պայքարող սեկցիաներ։ Այս սեկցիաների վրա իբրև հիմնական խնդիր պարտականություն դնել կազմակերպելու ձեռնարկությունների, հիմնարկների ու բնակվարձկալների հասարակայնությունը՝ վերացնելու յերեխաների ու անչափահասների փողոցային խուլիգանությունը։

17. Պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ առանց մերժելու մանկատներն ընդունել Ներքգործժողկոմատի օրգաններից ուղարկված յերեխաներին այն քաղաքներում, վորտեղ ընդունիչ-բաշխիչներ չկան, և յերկաթուղիներում։

### IV. Ծնողների պատասխանատվությունն ուժեղացնելու յեվ փոքրահասակների իրավախախտումների դեմ պայքարելու միջոցների մասին

18. Միլիցիայի որգաններին իրավունք վերապահել ծնողներին վարչական կարգով տուգանելու մինչև 200 ռուբլու սահմաններում՝ յերեխաների կռվարարության և փողոցային խուլիգանության համար։

19. Սահմանել ծնողների ու խնամակալների նյութական պատասխանատվություն յերեխաների՝ նյութական վնաս պատճառած գործողությունների համար։

20. Պարտավորեցնել լուսժողկոմատների ու միլիցիայի որգաններին իրազեկ դարձնելու ծնողների աշխատավայրի հասարակական կազմակերպություններին՝ ծնողների կողմից յերեխաների վարքի նկատմամբ հսկողությունը բացակայելու մասին։

21. Վերացնել ժողովրդական լուսավորության բաժիններին կից անչափահաս իրավախախտիչների գործերը քննող հանձնաժողովները։

22. Այն դեպքերում, յերբ ծնողները չեն ապահովում պատշաճ հսկողություն յերեխայի վարքի նկատմամբ, Լուսժողկոմատի որգանները պարտավոր են հարց հարուցել դատական որգանների առջև յերեխային ծնողներից վերցնելու և նրան մանկատանը տեղավորելու մասին, պահպանման ծախսը վճարելով ծնողների հաշվին։

### V. Մանկական գրականության յեվ կինոֆիլմերի մասին

23. Հանձնարարել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կուլտուր-լուսավորական աշխատանքի բաժնին և Մամուլի ու հրատարակչությունների բաժնին, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին և միութենական հանրապետությունների ժողկոմխորհներին՝ ուժեղացնել հսկողությունը մանկական գրականության և ֆիլմերի նկատմամբ, թույլ չտալով այնպիսի գրականություն և ֆիլմեր, վորոնք վնասակար ազդեցություն կարող են ունենալ յերեխաների վրա (քրեական հանցագործների արկածներ և այլն)։



* * *

Կուսակցական և խորհրդային վերահսկողության հանձնաժողովներին հանձնարարված է սիստեմատիկ ստուգելու այս վորոշման կատարումը։

«Правда», 1 հունիսի 1935 թ.

## ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ 1935 Թ. ՈԳՈՍՏՈՍԻ 7-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը դասագրքերի վերաբերյալ իր 1933 թ. փետրվարի 12-ի վորոշման մեջ նշել է, վոր դպրոցի աշխատանքի վորակի բարձրացման անվերապահ ու վճռական պայմանը հանդիսանում է բոլոր առարկաներից կայուն դասագրքերի առկայությունը, վորոնք կոչված են վերացնելու դասագրքերի անվերջանալի «նախագծման» գոյություն ունեցող «մեթոդը»։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը դատապարտեց ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի սխալ գիծը, վորի հետևանքով խորհրդային դպրոցը չի ունեցել կայուն, հանրաճանաչ և գիտության պահանջները բավարարող դասագրքեր։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նշված վորոշման հիման վրա նախընթաց ժամանակամիջոցում հրատարակված և դպրոցներն է ուղարկված ավելի քան 150 միլիոն դասագիրք։ Խորհրդային Միության յուրաքանչյուր ժողովրդի յերեխաներին ուսուցանելու համար դասագրքեր են ստեղծված նրանց մայրենի լեզվով։ Միայն 1933—1935 թվականներին հրատարակված է 85 միլիոն որինակ վոչ ռուսերեն դասագիրք։

Տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցները մի շարք հիմնական առարկաներից կայուն դասագրքեր են ստացել։

ԽՍՀՄ ԺԿԽ և ՀամԿ(բ)Կ ԿԿ գտնում են, սակայն, վոր տարրական, վոչ լրիվ միջնակարգ դպրոցները դասագրքերով ապահովելու գործում դրությունն անբավարար է։ Չնայած հրատարակված է 150 միլիոնից ավելի դասագիրք, դրանց քանակը չի համապատասխանում աշակերտների թվի աճմանն ու դպրոցական ցանցի զարգացմանը յերկրում։ Այդ դրության համար անմիջական պատասխանատվություն են կրում լուսժողկոմատները, վորոնք, չնայած բոլոր հնարավորությունների առկայությանը, չեն ապահովել անհրաժեշտ քանակությամբ դասագրքերի հրատարակումը։

ԽՍՀՄ ԺԿԽ և ՀամԿ(բ)Կ ԿԿ նշում են, վոր ՌԽՖՍՀ Լուսժողկոմատը, իսկ նրա հետևից նաև մյուս միութենական հանրապետությունների լուսժողկոմատները, դասագրքերի հրատարակման գործի նկատմամբ անպատասխանատու վերաբերմունք ցույց տալու հետևանքով թույլ են տվել ամենակոպիտ սխալներ—կայուն դասագրքեր ստեղծելու վերաբերյալ Կենտկոմի դիրեկտիվը սիստեմատիկաբար խախտվել է ամեն տարի բազմաթիվ դասագրքեր վերամշակելով. մի շարք դիսցիպլիններից մտցվել է «թույլատրված», վոչ-ստաբիլ դասագրքի տիպը. դասագրքեր կազմելու գործի ղեկավարությունը վերապահված է յերկրորդական, քիչ պատասխանատու աշխատողների. դասագրքերը հաճախ կազմվում և հրատարակվում են անփույթ, նրանցում թույլատրվում են անճիշտ սահմանումներ, ուսման նյութը սխալ է դասավորվում, վորոշ դասագրքերի ծավալն ու շարադրանքը դժվարացնում են գիտելիքների հաջող յուրացումն աշակերտների կողմից, հրատարակությունները կատարվում են վրիպակներով և վատ պատկերազարդումներով։

Առանձնապես անբավարար է դրված թարգմանական դասագրքերի և վոչ-ռուսերեն դասագրքերի (որիգինալ) հրատարակման գործը միութենական և ինքնավար հանրապետություններում ու մարզերում։

Դասագրքերի տարածման գոյություն ունեցող սիստեմը, վոր հաստատել է ՌԽՖՍՀ Լուսժողկոմատը և նրա հետևից՝ մյուս միութենական հանրապետությունների լուսժողկոմատները, հակասում է խորհրդային օրենքներին։ Լուսժողկոմատներն իրենց մենաշնորհ արտոնությունն եյին դարձրել դասագրքերի



բաշխումը, դրանք չեյին տալիս վաճառելու, կատարում եյին դասագրքերի փակ բաշխում աշակերտների միջև, միջոցների ապօրինի գանձումներ ծնողներից, վորպեսզի դպրոցը դասագրքեր գնի, ծնողների կողմից արդեն արժեքները հատուցված դասագրքերը հայտարարում եյին դպրոցի «սոցիալիստական սեփականություն», վոր իրականում հանգում եր մի շարք ապօրինությունների ու չարաշահումների։

ԽՍՀՄ ԺԿԽ և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում են.

## I

### Դասագրքերի հրատարակման մասին

1. Նպատակ ունենալով 1935—36 ուսման տարվա ընթացքում ԽՍՀՄ տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների բոլոր աշակերտներին լրիվին ապահովել դասագրքերի լրիվ կոմպլեկտով, 1935 թվի յերկրորդ կիսամյակում լրացուցիչ կերպով պլանով արդեն տպագրվող 50 միլիոնից ավելի որինակ դասագրքերից դուրս, հրատարակել դարձյալ 52 միլիոն դասագիրք, վորից.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՌԽՖՍՀ | դպրոցների | համար | 35,0 | մլն. | դասագիրք |
| ՈւՍԽՀ | » | » | 8,6 | » | » |
| ԲՍԽՀ | » | » | 2,5 | » | » |
| Վրաստանի ԽՍՀ | » | » | 1,8 | » | » |
| Ադրբեջանի ԽՍՀ | » | » | 1,8 | » | » |
| Հայաստանի ԽՍՀ | » | » | 0,6 | » | » |
| Ուզբ. ԽՍՀ | » | » | 1,3 | » | » |
| Թուրքմ. ԽՍՀ | » | » | 0,2 | » | » |
| Տաջ. ԽՍՀ | » | » | 0,2 | » | ». |

2. ՌԽՖՍՀ դպրոցների համար սահմանված լրացուցիչ 35 միլիոն տիրաժից ռուսերեն հրատարակել 31 մլն. դասագիրք, նկատի առնելով բավարարելու ՌԽՖՍՀ ինքնավար հանրապետությունների ու մարզերի դպրոցների ռուսերեն դասագրքերի պահանջը։ Մնացած 4 մլն. դասագիրքը հրատարակել համապատասխան վոչ-ռուսերեն լեզուներով՝ ՌԽՖՍՀ ինքնավար հանրապետություններում ու մարզերում։

3. Առաջարկել միութենական և ինքնավար հանրապետությունների լուսժողկոմատներին՝ 10 օր ժամանակամիջոցում 1-ին և 2-րդ կետերում սահմանված առաջադրությունների համեմատ հաստատել դասագրքերի լրացուցիչ հրատարակության կոնկրետ պլան (անունների ցանկ, տիրաժներ, ինչպես և դասագրքերի հրատարակման հերթականությունն ըստ ամեն մի առանձին անվան)։

4. Դասագրքերի լրացուցիչ հրատարակության համար առանձնացնել 1935 թվի համար սահմանված թղթի բաշխման պլանից դուրս 11 հազ. տոնն անհրաժեշտ որակի տպագրական ու գրելու թուղթ և հանձնարարել ԽՍՀՄ Պետպլանին՝ այն բաշխել միութենական հանրապետություններին՝ դասագրքերի լրացուցիչ հրատարակման համար այս որոշմամբ սահմանված պլանի համեմատ։

Լրացուցիչ տպագրվող դասագրքերի ոչ պակաս, քան 75 տոկոսի հրատարակումն ապահովել կազմով և մնացած 25 տոկոսը՝ ստվարաթղթով։ ԽՍՀՄ Պետպլանին՝ այս նպատակի համար 1935 թ. III և IV յեռամսյակներում, հավասար մասերով, զատել 1600 տոնն ստվարաթուղթ, ի հաշիվ ստվարաթղթի մյուս սպառողների ֆոնդերի համապատասխան կրճատման։

5. Դասագրքերի լրացուցիչ հրատարակությունը կատարելու անձնական պատասխանատվությունը դնել միութենական և ինքնավար հանրապետությունների ու մարզերի լուսավորության ժողկոմների վրա։

6. Դատապարտել ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի, ինչպես և մյուս լուսժողկոմատների պրակտիկան, որոնք խախտել են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը դասագրքերի կայունության վերաբերյալ (փոփոխությունները տեքստում և նյութի դասավորության մեջ, այսպես կոչված «թույլատրված» դասագրքերի պրակտիկա և այլն)։ Միութենական և ինքնավար հանրապետությունների ու մարզերի բոլոր լուսժողկոմատների կողմից անշեղ կատարելու համար պնդել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվը դասագրքերի կայունության վերաբերյալ։

Սահմանել, որ ամեն մի դասագիրք հաստատվում է միութենական հանրապետությունների լուսավորության ժողկոմների կողմից։ Արգելել լուսժողկոմատներին որևէ փոփոխություն



մտցնելու վերահրատարակվող կայուն դասագրքերի մեջ, գոյություն ունեցող դասագրքերի նորերով փոխարինումն այսուհետև կատարել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀ Միության ԺԿԽ թույլտվությամբ միայն։

7. Պարտավորեցնել ՌՍՖՍՀ Լուսժողկոմատին՝ միութենական և ինքնավար հանրապետությունների լուսժողկոմատներին և մարզային լուսբաժիններին ուղարկել այն դասագրքերի ձեռագրերը, որոնք թարգմանվելու յեն ոչ-ռուսերեն լեզուներին։

8. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դպրոցական բաժնին՝ միութենական հանրապետությունների լուսժողկոմատների հետ միասին առ 1 դեկտեմբերի 1935 թ. մշակել դասագրքերի հրատարակման 1936 թ. պլանը, որը նախատեսի բոլոր տիպի ու աստիճանի դպրոցների ժամանակին ու լրիվ ապահովումը դասագրքերով։

## II

### Դասագրքերի վաճառքի մասին

1. Վերացնել աշակերտների մեջ դասագրքերի փակ բաշխման գոյություն ունեցող կարգը։

Պարտավորեցնել միութենական և ինքնավար հանրապետությունների ժողկոմխորհներին՝ 1935 թվի սեպտեմբերի 15-ից մտցնել դասագրքերի բաց վաճառք։ Դասագրքերի առևտուրը կատարել պետական գրահրատարակչությունների գրախանութների ու կիոսկների միջոցով, իսկ գյուղում նմանապես և կոոպերացիայի ու դպրոցի միջոցով։

2. Դասագրքերը պետք է վաճառվեն անվանական գնով։ Դասագրքերի գինը բարձրացնելու, ինչպես և նրանցով սպեկուլացիա անելու մեջ մեղավորները պետք է պատասխանատվության կանչվեն քրեական կարգով։

3. Գրախանութներում ու կիոսկներում սահմանել գործածված դասագրքերի առք ու վաճառք՝ իջեցված գներով։

4. 1935—1936 ուսման տարում աշակերտներին մատակարարելու համար դպրոցների գնած դասագրքերը, ինչպես և 1933 և 1934 թվերին հրատարակված դպրոցին պատկանող հին դասագրքերը, մինչև 1935 թվի սեպտեմբերի 15-ը, վաճառել այս

դպրոցների աշակերտներին, վերջնական հաշվարկ կատարելով այն ծնողների ու աշակերտների հետ, վորոնք կանխավճար են մուծել դասագրքեր գնելու կամ լրիվ վճարել են նրանց արժեքը։ Դպրոցների կողմից չվաճառված դասագրքերը հանձնըվում են գրավաճառ կազմակերպություններին՝ վաճառելու։

Վերացնել ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի 1933 թվի ապրիլի 15-ի վորոշումը, ինչպես և ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի և այլ ժողկոմատների կարգադրությունները դասագրքեր գնելու համար հասարակական ու ծնողական միջոցներն ու կանխավճարները հավաքելու վերաբերյալ։

* * *

ԽՍՀՄ ԺԿԽ և ՀամԿ(բ)Կ ԿԿ պարտավորեցնում են կուսակցական և խորհրդային կազմակերպություններին՝ ամեն տեսակ անհրաժեշտ օգնություն ցույց տալ ժողովրդական լուսավորության օրգաններին կայուն դասագրքեր հրատարակելու կարևորագույն գործում և իրականացնել անդադրում վերահսկողություն ինչպես դասագրքերի ստեղծման ամբողջ ընթացքի, այնպես էլ նրանց առևտուրը կազմակերպելու վրա։

„Правда“, 8 օգոստոսի 1935 թ.

---

## ՈՒՍՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԻ ՄԱՍԻՆ

### ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ 1935 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն դպրոցի վերաբերյալ իրենց մի շարք վորոշումների մեջ առաջարկել են լուսժողկոմատներին՝ հաստատել դպրոցի միասնական կազմակերպչական կառուցվածք, ամրացնել կարգն ու կարգապահությունն աշա-



կերտների մեջ, պարզորոշ կազմակերպել ուսման աշխատանքի ամբողջ ընթացքը և ապահովել յուրաքանչյուր դպրոցի օպերատիվ, կոնկրետ և դիֆերենցված ղեկավարությունը։

ՌԽՖՍՀ Լուսժողկոմատը, ինչպես և մյուս միութենական հանրապետությունների լուսժողկոմատները մինչև այժմ անբավարար են կատարել կուսակցության ու կառավարության այդ կարևորագույն դիրեկտիվները։ ԽՍՀՄ ԺԿԽ և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից դպրոցների համար սահմանված յերեք տիպը (տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ) մի շարք դեպքերում փոխարինվում են «աստիճաններով» ու «կոնցենտրներով»։ Ուսման պլաններն ու ծրագրերն ամեն տարի փոփոխությունների յեն յենթարկվում, վորով խախտվում են դպրոցում գիտությունների հիմունքներն անցնելու կայունությունն ու սիստեմատիկությունը։ Այս բոլորն իր հետևից բերում է ուսման աշխատանքի կազմալուծում, դեզորիենտացիայի յե յենթարկում ուսուցչին, վորի հետևանքով աշակերտների գիտելիքները դեռ ելի մնում են անբավարար, իսկ դպրոցն ավարտածներն անբավարար պատրաստություն են ցուցաբերում բարձրագույն դպրոցում գիտություններն անցնելու համար։

Ուսման աշխատանքը կազմակերպելիս աշակերտները չափազանց ծանրաբեռնվում են դասարանական պարապմունքներով (որական 6—7 դաս), դպրոցական շաբաթվա առանձին օրերի դասացուցակները ծանրաբեռնված են լինում դժվար յուրացնելի առարկաներով։

Աշակերտների առաջադիմությունը գնահատելու համար լուսժողկոմատների սահմանած սիստեմը գաղափար չի տալիս աշակերտի փաստական գիտելիքների մասին և իրականում հանգում է ուսման մակարդակն իջեցնելուն։

Լուսժողկոմատները մինչև այժմ չեն հրատարակել կանոններ աշակերտների վարքի համար դպրոցում և դպրոցից դուրս, նմանապես մշակված չէ նաև դպրոցական նորմալ կանոնադրություն, վորը պետք է սահմանի ներքին կայուն կարգուկանոն դպրոցում և ձեռնարկ հանդիսանա դպրոցի վարչության, մանկավարժների, դպրոցական կազմակերպությունների և աշակերտների համար։

Անբավարար են կազմակերպված յերեխաների ընդունելությունը դպրոց, աշակերտների փոխադրումը մի դասարանից մյուսը և նրանց ավարտումը։ Դպրոցն ընդունվելու ժամանակ լուսժողկոմատների դրած բազմաթիվ փաստաթղթերի պահանջն ավելորդ դժվարություններ ե ստեղծում յերեխաների դպրոց ընդունվելու համար։ «Անհատական հարցացուցակները», վոր վաղորոք դնում են այն հարցերը, վորոնց պատասխանելու յե աշակերտը քննությունների ժամանակ, իրականում նվազեցնում են քննությունների նշանակությունը և ճշգրիտ գաղափար չեն տալիս աշակերտների իսկական գիտելիքների վերաբերյալ։

Լուսժողկոմատներն ու նրանց տեղական օրգանները, ինչպես և դպրոցների դիրեկտորները (վարիչները) մինչև այժմ միջոցներ ձեռք չեն առել դպրոցներում հաստատելու մաքրություն ու արտաքին կարգ, վորոնք հանդիսանում են աշակերտների մեջ կուլտուրական ունակություններ դաստիարակելու կարևորագույն միջոցներից մեկը։

ԽՍՀՄ ԺԿԽ և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը մատնանշում են, վոր դպրոցի ուսման աշխատանքի մեջ նշված թերությունները վկայում են, վոր լուսժողկոմատները լրիվ չեն ըմբռնել դպրոցի կազմակերպման ու ամրացման կարևորագույն հարցերը, վորպիսի հանգամանքը հետևանք ե ժողովրդական լուսավորության աշխատողների մի զգալի մասի մեջ դեռևս մինչև վերջ չհաղթահարված «դպրոցի մահացման» հակալենինյան տխմար թեորիայի։

ԽՍՀՄ ԺԿԽ և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վ ո ր ո շ ու մ են.

## I

### Ուսման տարվա յեվ դպրոցական ռեժիմի կազմակերպման մասին

1. ԽՍՀՄ բոլոր դպրոցներում պարապմունքների սկիզբը նշանակել սեպտեմբերի 1-ը և վերջը՝ առաջին յերեք դասարաններում հունիսի 1-ը, 4—7 դասարաններում՝ հունիսի 10-ը և 8—10 դասարաններում՝ հունիսի 20-ը, ձմեռային արձակուրդները՝ դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 10-ը, գարնանայինը՝ 6 որ տևողությամբ։



2. 1935—1936 ուստարվանից դասարանային ամենորյա դասերի թիվը սահմանել. առաջին չորս դասարաններում՝ որական 4 դաս (չորրորդ դասարաններում շաբաթական յերկու որ թույլ տալ 5-ական դաս), հինգերորդ—տասներորդ դասարաններում՝ 5 դաս (և շաբաթական յերկու որ 6-ական դաս)։ Լրացուցիչ դասերը հատկացնել միայն աշխատանքի, յերգեցողության, նկարչության, գծագրության և ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներին։

Միութենական (բացի ՌՍՖՍՀ) և ինքնավար հանրապետություններում, ինչպես և ՌՍՖՍՀ վոչ-ռուսական դպրոցներում, սկսած 5-րդ դասարանից, թույլ տալ շաբաթական մի վեցերորդ դաս ել ռուսերեն լեզվի ու գրականության լրացուցիչ ուսումնասիրության համար։

Հանձնարարել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ համաձայնեցնելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դպրոցական բաժնի հետ, ԽՍՀՄ բոլոր դպրոցների համար հաստատել միասնական ուսման պլաններ։

Դասերի տևողությունը քաղաքի և գյուղի դպրոցներում սահմանել 45 րոպե։ Դասամիջոցների տևողությունը սահմանել. առաջինը, յերրորդը և չորրորդը՝ 10 ր., յերկրորդը՝ 30 ր., առանձին դեպքերում յերկրորդ և յերրորդ դասամիջոցների տևողությունը թույլ տալով 20 րոպե։

3. Սահմանել աշակերտների ընդունելության հետևյալ կարգը.

Յերեխաներին դպրոց տալու վերաբերյալ հայտարարությունների ընդունելությունը կատարել հունիսի 1-ից մինչև ոգոստոսի 1-ը, իսկ յերեխաների ընդունելությունը՝ ոգոստոսի 10-ից մինչև 25-ը։ Աշակերտները, իբրև կանոն, պետք ե ընդունվեն այն դպրոցը, վորը մոտ ե իրենց ծնողների բնակավայրին։

Պարտավորեցնել դպրոցների դիրեկտորներին (վարիչներին)՝ ապահովել ուշադիր և զգայուն վերաբերմունք դեպի ծնողն ու յերեխան, փաստաթղթերը ծնողներից ընդունել անձամբ, դպրոցն ընդունվողի հետ զրուցելու միջոցով պարզել նրա վերաբերյալ անհրաժեշտ տվյալները (զարգացման մակարդակը, առողջական վիճակը և այլն)։

Արգելել ծնողներից պահանջելու ավելի փաստաթղթեր ու տեղեկանքներ ներկայացնել դպրոցին, քան սահմանված է օրենքով (դիմում՝ դպրոց ընդունվելու մասին, փաստաթուղթ՝ յերեխայի տարիքի մասին և տեղեկանք՝ ծաղիկը պատվաստելու մասին):

Լուսժողկոմատներին ու նրանց տեղական օրգաններին՝ ընդհանուր պարտադիր ուսուցման օրենքի հիման վրա նյութական պատասխանատվության յենթարկել ծնողներին կամ յերեխաների դաստիարակության համար պատասխանատու անձանց, առանց հարգելի պատճառների յերեխաներին վոչ ժամանակին և ուշ դպրոց տալու համար:

Ուսման տարին սկսվելուց հետո յերեխաներին դպրոց ընդունելը թույլատրել միայն բացառիկ դեպքերում (ծնողները մի քաղաքից մյուսը աշխատանքի տեղափոխվելիս):

4. Միջնակարգ դպրոցների ութերորդ դասարանները, իբրև կանոն, համալրել այդ դպրոցների յոթերորդ դասարանն ավարտածներից, ութերորդ դասարաններում տեղերի մինչև 15 տոկոսն առանձնացնելով ուրիշ դպրոցների աշակերտների համար:

5. Մի դպրոցից մյուսն անցնող յերեխաներին համապատասխան դասարանն ընդունել առանց ստուգումների: Դպրոցի դիրեկտորին (վարիչին) իրավունք վերապահել ուրիշ դպրոցից ընդունված աշակերտին փոխադրելու ստորին դասարան, յեթե նրա ընդունվելուց հետո մի ամսվա ընթացքում պարզվի, վոր նա իր գիտելիքների մակարդակով չի համապատասխանում տվյալ դասարանի ծրագրի պահանջներին:

6. Դադարեցնել «անհատական հարցացուցակների» գոյությունն ունեցող սխալ պրակտիկան, վորի ժամանակ ուսուցիչը վաղօրոք յուրաքանչյուր աշակերտի համար առանձին նշում է հարցեր, աշակերտին համապատասխանորեն պատրաստելով պատասխանելու այդ հարցերին: Ավարտական և փոխադրական քննությունների ժամանակ ապահովել աշակերտների գիտելիքների ստուգումը ծրագրի զանազան հատվածներից:

Միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ մայրենի լեզվի և մաթեմատիկայի գրավոր աշխատանքների համար թեմաները նշանակում են Ժողովրդական լուսավորության յերկրային և մարզային (խոշոր քաղաքներում՝ քաղաքային)



բաժինները և նախապես հայտնում դպրոցների դիրեկտորներին: Դպրոցների դիրեկտորներն այդ թեմաները դասատուներին հայտնում են քննությունների օրը:

7. Միջնակարգ դպրոցը հաջող ավարտածներին տալ վկայական, նրա մեջ մտցնելով բոլոր առարկաների թվանշանները: Դասարանից դասարան փոխադրելիս աշակերտներին տալ փոխադրության վկայական, նշելով առաջադիմության ու վարքի թվանշանները: Ավարտական և փոխադրական քննություններն առավել հաջող տվածներին պարգևատրել գովասանագրերով: Միջնակարգ դպրոցն ավարտած և հիմնական առարկաներից «գերազանց», իսկ մնացածներից (նկարչություն, գծագրություն, յերգեցողություն, յերաժշտություն, ֆիզկուլտուրա) վոչ պակաս, քան «լավ» թվանշան ստացածներին իրավունք վերապահել առանց ընդունելության քննությունների մտնելու բարձրագույն դպրոց, վորպիսի հանգամանքն առանձնապես պետք է նշվի վկայականում:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դպրոցական բաժնին՝ լուսժողկոմատների հետ միասին մշակել և ԽՍՀՄ ԺԿԽ-ին ի հաստատություն ներկայացնել ավարտական վկայագրի և փոխադրական վկայականի՝ ԽՍՀՄ համար միասնական նմուշ (զանազան ազգային լեզուներով):

8. Դպրոցներում սահմանել աշակերտների առաջադիմությունը գնահատելու հետևյալ հինգ աստիճանները (թվանշանները). 1) շատ վատ, 2) վատ, 3) միջակ, 4) լավ և 5) գերազանց:

Հանձնարարել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Դպրոցական բաժնին՝ մասնակից դարձնելով միութենական հանրապետությունների լուսավորության ժողկոմատներին, մշակել ԽՍՀՄ բոլոր դպրոցների համար պարտադիր՝ աշակերտների առաջադիմության գնահատման նորմաներ, այն հաշվով, վոր գիտելիքների միևնույն մակարդակը միատեսակ գնահատվի բոլոր դպրոցներում:

9. Սահմանել, վոր առանձին զանցանքների համար աշակերտներին հեռացնելու իրավունքը վերապահվում է Ժողովրդական լուսավորության շրջանային կամ քաղաքային բաժիններին՝ դպրոցի դիրեկտորի (վարիչի) պատճառաբանված զեկուցագրի առաջադրանքով: Հեռացված աշակերտներին դպրոց ընդունել սովորական կարգով:

10. Պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ խոշոր քաղաքներում, առաջին հերթին Մոսկվայում, Լենինգրադում, Խարկովում և Կիևում 1935—1936 ուսման տարում կազմակերպել առանձին ռեժիմով հատուկ դպրոցներ դեֆեկտիվ յերեխաների և այն աշակերտների համար, վորոնք սիստեմատիկաբար խախտում են դպրոցական կարգապահությունը, կազմալուծում են դպրոցական աշխատանքը և իրենց հակահասարակական վարքով բացասաբար են ազդում մյուս աշակերտների վրա։ Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ հրահանգ մշակել այդպիսի աշակերտներին այս դպրոցները փոխադրելու վերաբերյալ։

11. Թույլատրել 7 և 10 դասարանների դասընթացի ծավալով հատուկ քննություններ այն անձանց համար, վորոնք չեն սովորում դպրոցում, բայց ցանկանում են վկայական ստանալ վոչ լրիվ միջնակարգ կամ միջնակարգ դպրոցն ավարտելու մասին (եքստերնատ)։ Միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ մշակել եքստերնատի կանոնադրություն։

## II

### Դպրոցի կանոնադրության յեվ աշակերտների վարքի կանոնների մասին

1. Հանձնարարել հանձնաժողովին մասնակից անելով դպրոցների պրակտիկ աշխատողներին, մշակել և, վոչ ուշ, քան մինչև 1936 թվի հունվարի 1-ը, ԽՍՀՄ ԺԿԽ-ին ի հաստատություն ներկայացնել կանոնադրության նախագիծ յուրաքանչյուր տիպի դպրոցի համար։

Կանոնադրությունը կտրական և միանգամայն պարտադիր բնույթ պիտի կրի ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար։

Կանոնադրությունը պիտի լինի այն հիմնական փաստաթուղթը, վորը վորոշելու յե ամեն մի տիպի դպրոցի նպատակն ու խնդիրները, դպրոցի կազմակերպչական կառուցվածքը, դըպրոցի վարչության իրավունքներն ու պարտականությունները, մանկավարժների ու դպրոցական կազմակերպությունների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես և հաստատապես



սահմանելու յե ուսման ռեժիմն ու ներքին կանոնադրության հիմունքները դպրոցում և աշակերտների վարքի կանոնները դպրոցում ու նրանից դուրս։

2. Աշակերտների վարքի կանոնների հիմքը դարձնել կարգապահության խիստ ու գիտակցական պահպանումը, քաղաքավարի վերաբերմունքը դասատուներին, ընկերներին ու մեծերին, կուլտուրական ունակությունների պատվաստումը, խնամքոտ վերաբերմունքը դպրոցական և հանրային գույքին, ինչպես և վճռական պայքարի միջոցները յերեխաների մեջ խուլիգանական արտահայտությունների ու հակահասարակական վարմունքների դեմ։

Միութենական և ինքնավար հանրապետությունների լուսժողկոմատներին՝ սահմանել և բոլոր դպրոցներում մտցնել աշակերտական տոմսի միասնական տիպ (մայրենի լեզվով), նրա մեջ մտցնելով աշակերտների վարքի հիմնական կանոնները։ Դպրոցների դիրեկտորներին (վարիչներին)՝ յուրաքանչյուր աշակերտի համար, նրա դպրոց մտնելու մոմենտից մինչև ավարտելը, կազմել անձնական գործ։

3. Տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դըպրոցի աշակերտների համար սահմանել հագուստի միասնական ձև, այդ մտցնելով 1936 թ. սկսած առաջին հերթին Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Խարկովի և Մինսկի դպրոցներում։

* * *

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն առաջարկում են լուսժողկոմատներին և նրանց տեղական օրգաններին՝ իբրև կարևորագույն խնդիր դնել տեսչությունն ու սիստեմատիկ ոպերատիվ վերահսկողության կազմակերպումը դպրոցի վիճակի և աշխատանքի նկատմամբ, ստուգելով, թե գործնականում ինչպես են իրագործվում կուսակցության և կառավարության վորոշումները դպրոցի մասին։

| | |
|---|---|
| ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ՝ | ՀամԿ(բ) Կ Կենտրոնական Կոմիտեյի Քարտուղար՝ |
| Վ. ՄՈԼՈՏՈՎ | Ի. ՍՏԱԼԻՆ |

«Правда», 4 սեպտեմբերի 1935 թ.

## ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

### ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀՈՒՄ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

ԽՍՀՄ դպրոցներում քաղաքացիական պատմության դասավանդման պատշաճ դրվածքին կարևոր նշանակություն տալով, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը դեռ 1934 թ. մայիսի 16-ին ընդունեցին և հրապարակեցին «ԽՍՀՄ դպրոցներում քաղաքացիական պատմության դասավանդման մասին» հայտնի վորոշումը։

Այս վորոշման մեջ Ժողկոմխորհն ու ՀամԿ(բ)Կ Կենտկոմը մատնանշում եյին պատմության դասավանդման անբավարար դրվածքը ԽՍՀՄ դպրոցներում։ Ժողկոմխորհն ու ՀամԿ(բ)Կ Կենտկոմը նշել եյին, վոր պատմության դասագրքերի, ինչպես և պատմության դասավանդման գլխավոր թերությունը հանդիսանում է նրանց վերացական, սխեմատիկ բնույթը. «Փոխանակ կենդանի, գրավիչ ձևով դասավանդելու քաղաքացիական պատմությունը, շարադրելով կարևորագույն իրադարձությունները ու փաստերը ժամանակագրական հաջորդականությամբ, պատմական գործիչների բնութագրումով,—աշակերտներին հրամցնում են հասարակական-տնտեսական ֆորմացիաների վերացական սահմանումներ, այսպիսով քաղաքացիական պատմության կապակցված շարադրանքը փոխարինելով սոցիոլոգիական վերացական սխեմաներով»—(ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումից)։

Ժողկոմխորհն ու Կենտկոմը մատնանշել եյին, վոր «պատմության դասընթացի հաստատուն յուրացման վճռական պայմանն է հանդիսանում պատմական-ժամանակագրական հաջորդականության պահպանումը պատմական անցքերի շարադրության մեջ, աշակերտների հիշողության մեջ անպայման ամրացնելով պատմական կարևորագույն յերևույթները, պատմական գործիչներին, ժամանակագրական թվականները։ Պատմության միայն այսպիսի դասընթացը կարող է ապահովել աշակերտի համար պատմական նյութի անհրաժեշտ մատչելիությունը, դիտողականությունն ու կոնկրետությունը՝ այս հիման վրա միայն հնարավոր է պատմական անցքերի ճիշտ վերլուծումն ու ճիշտ ընդհանրացումը, վորոնք աշակերտին մոտեցնում են պատմության մարքսիստական ըմբռնմանը»։



Սրան համապատասխան վորոշում եր հանված՝ 1935 թ. հունիսին պատրաստել պատմության նոր դասագրքերը.

ա) Հին աշխարհի պատմություն.

բ) Միջին դարերի պատմություն.

գ) Նոր պատմություն.

դ) ԽՍՀՄ պատմություն.

ե) Կախյալ և գաղութային յերկրների նոր պատմություն։

Ժողկոմխորհն ու ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշել եյին նոր դասագրքեր կազմելու համար կազմակերպել 5 խմբակ և հաստատել եյին այդ խմբակների անձնական կազմը։

1934 թվի հունիսի 9-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀ Միության Ժողկոմխորհի կողմից վորոշվեց տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում ԽՍՀՄ պատմության դասընթաց մտցնելու հարցը և կազմակերպեցին ԽՍՀՄ պատմության տարրական դասագրքեր կազմող խմբակներ։

1934 թվի ոգոստոսի 14-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ու ԽՍՀՄ Ժողկոմխորհը խրախուսեցին ընկ. ընկ. Ստալինի, Կիրովի և Ժդանովի կողմից՝ «ԽՍՀՄ պատմության» և «Նոր պատմության» նոր դասագրքերի կոնսպեկտների առթիվ ներկայացրած դիտողությունները։

Այդ դիտողությունների մեջ հիմնական վերլուծման և խիստ քննադատության յենթարկվեցին յերկու կոնսպեկտներն ել, ըստ վորում, ինչպես հաստատվեց, հատկապես անբավարար եր կազմված ԽՍՀՄ պատմության կոնսպեկտը, վորը լիքն եր մեծ քանակությամբ վոչ գիտական, մարքսիզմի տեսակետից անգրագետ սահմանումներով, ծայր աստիճան անփույթ եր կազմված, հատկապես անհանդուրժելի այնպիսի դասագիրք ստեղծելու պայմաններում, «վորտեղ պետք է կշռված լինեյին յուրաքանչյուր խոսք և յուրաքանչյուր սահմանում»։ Խոշոր, չնայած ավելի պակաս, թերություններով եր տառապում նաև «Նոր պատմության» դասագրքի կոնսպեկտը։

Ընկ. ընկ. Ստալինի, Կիրովի և Ժդանովի դիտողությունները սպառիչ կերպով մատնանշում եյին, թե ինչ ուղղությամբ պետք է վերամշակել կոնսպեկտները և պատրաստվող դասագրքերը։ Այնուամենայնիվ, ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ստիպված են մատնանշել, վոր ներկայումս ԺԿԽ-ի

և ԿԿ-ի քննարկմանը ներկայացրած պատմության դասագրքերը մեծ մասամբ անբավարար են, շարունակում են տառապել նույն այն թերություններով, վորպիսիք մատնանշվեցին վերևում։ Հատկապես անբավարար ե կազմված «ԽՍՀՄ պատմության» դասագիրքը՝ ներկայացրած պրոֆեսոր Վանագի խմբակի կողմից, ինչպես նաև ԽՍՀՄ պատմության տարրական դասընթացի դասագրքերը—ներկայացրած Մինցի և Լոզինսկու խմբակների կողմից։ Այն հանգամանքը, վոր մատնանշված դասագրքերի հեղինակները շարունակում են պնդել կուսակցության կողմից բազմիցս հայտարարված և բացարձակապես անհիմն պատմական սահմանումների և դրույթների վրա, վորոնց հիմքում ընկած են Պոկրովսկու հայտնի սխալները, Ժողկոմխորհն ու Կենտկոմը չեն կարող այլպիսիք չվորակել վորպես վկայական այն բանի, վոր մեր պատմաբանների, հատկապես ԽՍՀՄ-ի պատմաբանների վորոշ մասի մոտ, արմատավորվել են հակամարքսիստական, հակալենինյան, ըստ էության լիկվիդատորական, հակագիտական հայացքներ՝ պատմական գիտության վերաբերյալ։ Ժողկոմխորհն ու ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ընդգծում են, վոր այդ վնասակար տենդենցներն ու պատմության, վորպես գիտության, լիկվիդացիայի փորձերը կապված են առաջին հերթին մեր վորոշ պատմաբանների մեջ տարածված այսպես կոչված «Պոկրովսկու պատմական դպրոցին» հատուկ պատմական սխալ հայացքների հետ։ Ժողկոմխորհն ու Կենտկոմը մատնանշում են, վոր այդ վնասակար հայացքների հաղթահարման խնդիրն անհրաժեշտ նախապայման ե հանդիսանում ինչպես պատմության դասագիրք կազմելու, այնպես էլ մարքսիստական-լենինյան պատմական գիտության զարգացման և ԽՍՀՄ-ում պատմական կրթության բարձրացման համար, վորոնք կարևոր նշանակություն ունեն մեր պետության, մեր կուսակցության և աճող սերնդի ուսուցման գործի համար։

Սրան համապատասխան ԽՍՀ Միության Ժողկոմխորհն ու ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշեցին հիմնել արդեն գրված պատմության դասագրքերի ստուգման և արմատական բարելավման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև վերանայման համար Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողով։ Հանձնաժողովին իրավունք ե վերապահված խմբակներ կազմակերպել



առանձին դասագրքերը նայելու համար, ինչպես և դասագրքերի կոնկուրս հայտարարել այնպիսիների փոխարեն, վորոնք հանձնաժողովի կողմից արմատական վերամշակման յենթակա կճանաչվեն։

Ժողկոմխորհն ու Կենտկոմը վորոշեցին նաև մամուլում հրապարակել ընկ. ընկ. Ստալինի, Կիրովի և Ժդանովի դիտողությունները և այս հարցի մասին յեղած մյուս նյութերը։

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ „ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ“ ԴԱՍԱԳՐՔԻ ԿՈՆՍՊԵԿՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այն բանի հետևանքով, վոր նոր պատմությունն ամենահարուստ ե բովանդակությամբ ու գերհագեցված ե դեպքերով, ինչպես նաև նկատի ունենալով այն, վոր ամենագլխավորը բուրժուական յերկրների նոր պատմության մեջ՝ յեթե նկատի ունենանք մինչ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանը Ռուսաստանում—այդ ֆրանսիական հեղափոխության հաղթանակն ե և կապիտալիզմի հաստատումը Յեվրոպայում ու Ամերիկայում, գտնում ենք, վոր ավելի լավ կլիներ, յեթե նոր պատմության դասագիրքն սկսվեր ֆրանսիական հեղափոխության մասին գլխով։ Նախորդող անցքերի հետ կապ ստեղծելու համար կարելի յե տալ մի փոքր ներածություն՝ նիդերլանդական ու անգլիական հեղափոխությունների հիմնական անցքերի համառոտ շարադրանքով, նիդերլանդական ու անգլիական հեղափոխությունների անցքերի մանրամասն շարադրանքը տալով միջին դարերի պատմության դասագրքի վերջում։

Նշանակում ե, մենք առաջարկում ենք կոնսպեկտից դուրս գցել առաջին մասը (վեց գլուխ), այսինքն՝ ամբողջ առաջին բաժինը, փոխարինելով այն համառոտ ներածականով։

Կոնսպեկտի գլխավոր թերությունը մենք համարում ենք այն հանգամանքը, վոր նա բավականաչափ խիստ կերպով չի ընդգծում ֆրանսիական հեղափոխության (բուրժուական հեղափոխության) և Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղափոխության (սոցիալիստական հեղափոխության) միջև յեղած տարբերության և հակադրության վողջ խորությունը։ Նոր պատմության դասագրքի հիմնական առանցքը պետք ե լինի հենց այդ հա-

կադրությունը՝ բուրժուական հեղափոխության և սոցիալիստական հեղափոխության միջև: Ցույց տալ, որ ֆրանսիական և (ամեն մի այլ) բուրժուական հեղափոխություն, ժողովրդին ազատելով ֆեոդալիզմի ու աբսոլյուտիզմի շղթաներից՝ նոր շղթաներ է դրել նրա վրա—կապիտալիզմի ու բուրժուական դեմոկրատիայի շղթաներ, մինչդեռ Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխությունը ջախջախեց բոլոր ու ամեն տեսակի շղթաները և ժողովրդին ազատեց շահագործման բոլոր ձևերից—ահա թե որը պետք է լինի նոր պատմության դասագրքի կարմիր թելը: Ուստի և չի կարելի թույլ տալ, որ ֆրանսիական հեղափոխությունն անվանեն պարզապես «մեծ». այն պետք է անվանել ու մեկնաբանել որպես բուրժուական հեղափոխություն:

Ճիշտ այդպես էլ չի կարելի Ռուսաստանի մեր սոցիալիստական հեղափոխությունն անվանել պարզապես Հոկտեմբերյան հեղափոխություն—այն հարկավոր է անվանել ու մեկնաբանել որպես սոցիալիստական հեղափոխություն, խորհրդային հեղափոխություն:

Սրա համապատասխան հարկավոր է վերանայել նոր պատմության դասագրքի կոնսպեկտը, համապատասխան սահմանումների ու տերմինների ընտրությամբ:

Կոնսպեկտի մեջ նոր պատմության բաժանումը յերկու մասի, մենք գտնում ենք քիչ պատճառաբանված ու պատահական, կատարված ինչ որ մի անհասկանալի հատկանիշով: Մենք նպատակահարմար կգտնեյինք նոր պատմությունը բաժանել յերեք մասի.

Առաջին մասը—ֆրանսիական բուրժուական հեղափոխությունից մինչև ֆրանկո-պրուսական պատերազմն ու Փարիզի կոմունան (բացառյալ): Այդ կլինի առաջավոր յերկրներում կապիտալիզմի հաղթանակի ու հաստատման ժամանակաշրջան:

Յերկրորդ մաս—ֆրանկո-պրուսական պատերազմից ու Փարիզի կոմունայից մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և իմպերիալիստական պատերազմի ավարտումը (ներառյալ): Այդ կլինի կապիտալիզմի սկսվող անկման, Փարիզի կոմունայի կողմից կապիտալիզմին հասցըված առաջին հարվածի, հին «ազատ» կապիտալիզմն իմպերիալիզմի վերածելու և Հոկտեմբերյան հեղափոխության ուժերով



ԽՍՀՄ-ում կապիտալիզմը տապալելու ժամանակաշրջան, հեղափոխություն, որը նոր դարաշրջան բացեց մարդկության պատմության մեջ:

Յերրորդ մաս—1918 թվականի վերջից (պատերազմի ավարտման տարին) մինչև 1934 թվականի վերջը: Դա կլինի կապիտալիստական յերկրներում հետ-պատերազմյան իմպերիալիզմի, այդ յերկրներում տնտեսական և քաղաքական ճգնաժամի, գաղութների ու ազդեցության շրջանների համար մղվող պայքարի ուժեղացման ժամանակաշրջան, մեկ կողմից և, մյուս կողմից՝ քաղաքացիական կռիվների ու ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիայի ժամանակաշրջան, առաջին հնգամյակի և յերկրորդ հնգամյակի սկզբի ժամանակաշրջան ԽՍՀՄ-ում, մեր յերկրում սոցիալիզմի հաղթական շինարարության ժամանակաշրջան, կապիտալիզմի վերջին մնացորդներն արմատախիլ անելու ժամանակաշրջան, ԽՍՀՄ-ում սոցիալիստական ինդուստրիայի հաղթանակի ու վերելքի, գյուղում սոցիալիզմի հաղթանակի, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների հաղթանակի ժամանակաշրջան: Մենք մեծ սխալ ենք համարում այն, որ կոնսպեկտի հեղինակները 1923 թվականով ընդհատում են պատմությունը: Այդ սխալը պետք է ուղղել, պատմությունը հասցնելով մինչև 1934 թվականը: Դրան համապատասխան անհրաժեշտ կլինի կատարել նյութերի, բաժինների ու գլուխների վերափոխում ու վերաբաշխում:

Լավ կլիներ կոնսպեկտն ազատել հին, մաշված արտահայտություններից, ինչպես օրինակ՝ «հին կարգ», «նոր կարգ» և այլն: Ավելի լավ կլիներ դրանք փոխարինել «մինչկապիտալիստական կարգ», կամ ավելի լավ է «աբսոլյուտիստական-ֆեոդալական կարգ» բառերով, իսկ «նոր կարգի» փոխարեն ասել «կապիտալիզմի ու բուրժուական դեմոկրատիայի կարգ»: Այսպիսի փոփոխության դեպքում այսպես կոչված «նոր կարգը», այսինքն՝ կապիտալիստական կարգը, արդեն հանդես կգա որպես հին կարգ ԽՍՀՄ-ի խորհրդային կարգի համեմատությամբ, որը մարդկային հասարակության կառուցվածքի բարձրագույն տիպն է ներկայացնում: Լավ կլիներ նաև կոնսպեկտն ազատել «դարաշրջանների» չափից դուրս առատությունից: «Կոնսուլա-

կանության դարաշրջան», «Նապոլեոնի դարաշրջան», «Դիրեկտորիայի դարաշրջան»—արդյո՞ք չափազանց շատ չեն դարաշըրջանները:

Մեզ թվում է, ճիշտ չէ նաև այն, որ գաղութային հարցին կոնսպեկտի մեջ անհամաչափ քիչ տեղ է տված: Այն ժամանակ, երբ Ժորժ Զանդերին, Շպենգլերներին, Կիպլինգներին և ուրիշներին բավականաչափ շատ ուշադրություն է հատկացված, գաղութային հարցին և ասենք այնպիսի մի պետության դրությանը—ինչպիսին Չինաստանն է—քիչ ուշադրություն է նվիրված:

Լավ կլիներ նաև «Գերմանիայի և Իտալիայի միավորում» ֆորմուլան փոխարինել «Գերմանիայի և Իտալիայի վերամիավորումն ինքնուրույն պետությունների մեջ» ֆորմուլայով: Այլապես կարող է այնպիսի տպավորություն ստացվել, որ խոսքը վոչ թե անցյալում բաժան-բաժան յեղած այնպիսի պետությունների միացման համար մղվող պայքարի մասին է, ինչպես Գերմանիան ու Իտալիան, այլ այդ պետությունները մեկ պետության մեջ միավորելու մասին:

Ընդհանուր առմամբ նոր պատմության կոնսպեկտը մեր կարծիքով կազմված է ավելի խելացի կերպով, քան ԽՍՀՄ-ի պատմության կոնսպեկտը, բայց խառնաշփոթություն այս կոնսպեկտի մեջ, այնուամենայնիվ, բավականին շատ կա:

Ի. ՍՏԱԼԻՆ
Ս. ԿԻՐՈՎ
Ա. ԺԴԱՆՈՎ

«Правда» от 27 января 1936 г. № 25.

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԽՍՀՄ-Ի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԴԱՍԱԳՐՔԻ ԿՈՆՍՊԵԿՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վանագի խմբակը չի կատարել առաջադրանքը և նույնիսկ չի ըմբռնել բուն առաջադրանքը: Նա կազմել է ռուսաց պատմության, և վոչ թե ԽՍՀՄ-ի պատմության կոնսպեկտ, այսինքն Ռուսաստանի պատմության կոնսպեկտ, բայց առանց այն ժողովուրդների պատմության, վորոնք մտել են ԽՍՀՄ-ի կազմի



մեջ (հաշվի չեն առնված Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ֆինլանդիայի և Մերձբալթյան այլ ժողովուրդների, Հյուսիսային-կովկասյան ու Կովկասյան ժողովուրդների, Միջին Ասիայի ու Հեռավոր արևելքի ժողովուրդների, ինչպես նաև Վոլգյան ու Հյուսիսային ժողովուրդների—թաթարներ, բաշկիրներ, մորդվա, չուվաշներ և այլն—պատմության տվյալները):

Կոնսպեկտի մեջ ընդգծված չէ ռուսական ցարիզմի աննեքսիոնիստական գաղութացման դերը՝ ռուսական բուրժուազիայի ու կալվածատերերի հետ միասին («ցարիզմը ժողովուրդների բանտ»):

Կոնսպեկտի մեջ ընդգծված չէ ռուսական ցարիզմի հակահեղափոխական դերը արտաքին քաղաքականության մեջ, սկսած Յեկատերինա 2-րդի ժամանակներից մինչև XIX դարի 50-ական թվականները և նրանից հետո («ցարիզմը վորպես միջազգային ժանդարմ»):

Կոնսպեկտի մեջ մեկ կույտի մեջ են թափված ֆեոդալիզմը և նախաֆեոդալական ժամանակաշրջանը, յերբ գյուղացիները դեռ ճորտացված չեյին, պետության միահեծանության իրավակարգը և ֆեոդալական իրավակարգը, յերբ Ռուսաստանը բաժանված եր բազմաթիվ ինքնուրույն կիսապետությունների:

Կոնսպեկտի մեջ մեկ կույտի մեջ են թափված ռեակցիա և հակահեղափոխություն, հեղափոխություն «առհասարակ», բուրժուական հեղափոխություն և բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն հասկացողությունները:

Կոնսպեկտի մեջ չեն տրված Ռուսաստանի՝ ցարիզմի կողմից նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման պայմաններն ու ակունքները և այդպիսով Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորպես այդ ժողովուրդներին ազգային ճընշումից ազատող հեղափոխություն, մնում է չպատճառաբանված, ինչպես վոր չպատճառաբանված է մնում նաև ԽՍՀ Միության ստեղծումը:

Կոնսպեկտի մեջ առատորեն կան ամեն տեսակի մաշված տրաֆարետային սահմանումներ, ինչպես «Նիկոլայ առաջինի վոստիկանական տեռոր», «Ռազինականություն», «Պուգաչևականություն», «կալվածատիրական հակահեղափոխության հարձակումը XIX դարի 70-ական թվականներին»,

«արդյունաբերական հեղաշրջման առաջին քայլերը», «ցարիզմի ու բուրժուազիայի առաջին քայլերը 1905—1907 թվականների հեղափոխության դեմ մղվող պայքարում» և այլն: Կոնսպեկտի հեղինակները կուրորեն պատճենահանում են ամեն տեսակի բուրժուական պատմաբանների մաշված ու միանգամայն վոչ գիտական սահմանումները, մոռանալով, վոր իրենք պարտավոր են մեր յերիտասարդությանը մատուցել մարքսիստական, գիտականորեն հիմնավորված սահմանումներ:

Կոնսպեկտը չի արտացոլում արևմտա-յեվրոպական բուրժուական հեղափոխության—հեղափոխական ու սոցիալիստական շարժումների դերն ու ազդեցությունը Ռուսաստանի բուրժուական-հեղափոխական շարժման և պրոլետարական-սոցիալիստական շարժման կազմավորման վրա: Կոնսպեկտի հեղինակներն ըստ յերևույթին մոռացել են, վոր ռուս հեղափոխականներն իրենց համարում եյին Արևմուտքի բուրժուա-հեղափոխական ու մարքսիստական մտքի հայտնի կորիֆեյների աշակերտներն ու հետևորդները:

Կոնսպեկտի մեջ հաշվի չեն առնված առաջին իմպերիալիստական պատերազմի արմատները և ցարիզմի դերն այդ պատերազմում՝ իբրև ռեզերվ արևմտա-յեվրոպական իմպերիալիստական պետությունների համար, ինչպես նաև, հաշվի չի առնված ինչպես ռուսական ցարիզմի, այնպես և ռուսական կապիտալիզմի կախյալ դերն արևմտա-յեվրոպական կապիտալից, վորի հետևանքով Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը, վորպես Ռուսաստանը կիսագաղութային վիճակից ազատագրողի՝ մնում է չպատճառաբանված:

Կոնսպեկտի մեջ հաշվի չի առնված համայեվրոպական քաղաքական ճգնաժամի առկայությունը համաշխարհային պատերազմի նախորյակին, վորն, ի միջի այլոց, արտահայտվեց բուրժուական դեմոկրատիայի և պառլամենտարիզմի անկման մեջ, վորի հետևանքով խորհուրդների նշանակությունը համաշխարհային պատմության տեսակետից, վորպես պրոլետարական դեմոկրատիայի կրողների և բանվորներին ու գյուղացիներին կապիտալիզմից ազատագրող մարմինների,—մնում է չպատճառաբանված:

Կոնսպեկտի մեջ հաշվի չի առնված ԽՍՀՄ-ի կառավարող



կոմունիստական կուսակցության ներսում յեղած հոսանքների պայքարը և պայքարը տրոցկիզմի, վորպես մանր բուրժուական հակահեղափոխության, արտահայտության դեմ:

Յեվ այլն և այլն:

Առհասարակ պետք է ասել, վոր կոնսպեկտը կազմված է ծայրահեղորեն անփույթ և մարքսիզմի տեսակետից վոչ բոլորովին գրագետ:

Մենք էլ չենք խոսում կոնսպեկտի վոչ ճշգրիտ վոճի և այնպիսի «բառախաղի» մասին, յերբ կեղծ-Դմիտրին կոչված է Դմիտրի «անվանյալ», կամ ինչպես «հին ֆեոդալների հաղթանակը XVIII դարում» (հայտնի չէ սակայն, թե ուր կորան և ինչպես եյին պահում իրենց «նոր» ֆեոդալները, յեթե նրանք առհասարակ գոյություն ունեցել են այդ ժամանակ) և այլն:

Մենք անհրաժեշտ ենք համարում արմատապես վերամշակել կոնսպեկտը վերևում մատնանշված դրույթների վոգով, ընդ վորում պետք է հաշվի առնվի, վոր խոսքը վերաբերում է դասագրքի ստեղծման մասին,վորի մեջ պետք է կշռադատված լինի յուրաքանչյուր բառն ու յուրաքանչյուր սահմանումը, և վոչ թե անպատասխանատու ժուռնալային հոդվածների, վորտեղ կարելի յե ամեն ինչի մասին ուզածի պես շաղակրատել՝ հեռու մնալով պատասխանատվության զգացմունքից:

Մեզ հարկավոր է ԽՍՀՄ-ի պատմության այնպիսի դասագիրք, վորտեղ Վելիկոռուսիայի պատմությունը չանջատվի ԽՍՀՄ-ի մյուս ժողովուրդների պատմությունից—այդ առաջին, և վորտեղ ԽՍՀՄ-ի ժողովուրդների պատմությունը չանջատվի համայեվրոպական պատմությունից և առհասարակ համաշխարհային պատմությունից—այդ յերկրորդ:

Ի. ՍՏԱԼԻՆ
Ս. ԿԻՐՈՎ
Ա. ԺԴԱՆՈՎ

«Правда», от 27 января 1936 г. № 56

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ԽՍՀՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍԱԳԻՐՔ ԿԱԶՄԵԼՈՒ ԿՈՆԿՈՒՐՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ 1936 Թ. ՄԱՐՏԻ 3-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

*Բացառիկ նշանակություն տալով պատմական գիտության դասավանդմանը դպրոցում և պատմության մարքսիստական դասագրքերի ստեղծմանը, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն վորոշում են.*

*1. Հայտարարել տարրական դպրոցի համար ԽՍՀՄ-ի պատմության տարրական դասընթացի՝ ընդհանուր պատմության համառոտ տեղեկություններ պարունակող լավագույն դասագիրք կազմելու կոնկուրս։*

*2. Կոնկուրսին ներկայացված լավագույն դասագրքերը պարգևատրելու համար սահմանել 4 մրցանակ.*

*Առաջին մրցանակը—100 հազար ռուբլի, յերկրորդ մրցանակը—75 հազար ռուբլի, յերրորդ մրցանակը—50 հազար ռուբլի, չորրորդ մրցանակը—25 հազար ռուբլի։*

*3. Կոնկուրսին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները, առանց վորևէ սահմանափակման, ինչպես առանձին անձինք, այնպես էլ կոլեկտիվներ (հեղինակների խմբեր, ինստիտուտներ և այլն)։*

*4. Դասագրքերը կոնկուրսին ներկայացնելու ժամկետ սահմանել 1936 թվականի հունիսի 1-ը։*

*5. Դասագրքերը կոնկուրսին կարող են ներկայացվել հեղինակի ստորագրությամբ կամ թե նրա ընտրած ծածկանունով։*

*6. Դասագիրքը պետք է նկատի ունենա տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի 3-րդ ու 4-րդ դասարանների աշակերտությանը (10—12 տարեկան աշակերտներ)։*



*7. Դասագրքի ծավալը ավելի չպետք է լինի 20 տպագրական թերթից, վորից 18 մամուլը զուտ տեքստ, իսկ 2 մամուլը՝ նկարներ ու քարտեզներ։*

*8. Դասագիրքը կազմելիս հեղինակները պետք է ղեկավարվեն այն դրույթներով, վորոնք տրված են ա) ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թվականի մայիսի 16-ի «ԽՍՀՄ-ի դպրոցներում քաղաքացիական պատմության դասավանդման մասին» վորոշումների մեջ, բ) ընկերներ Ի. Ստալինի, Ա. Ժդանովի և Ս. Կիրովի ստորագրությունը կրող՝ 1934 թվականի օգոստոսի 8-ի «ԽՍՀՄ-ի պատմության դասագրքերի կոնսպեկտի սոթիվ դիտողությունների մեջ», վորոնք հրապարակված են «Պրավդայի» ու «Իզվեստիայի» 1936 թվականի հունվարի 27-ի № ներում։*

*9. Դասագիրքը կազմելիս հեղինակները պետք է առաջին հերթին նկատի ունենան 1934 թվականի մայիսի 16 ի՝ «ԽՍՀՄ-ի դպրոցներում քաղաքացիական պատմության դասավանդման մասին» վորոշման մեջ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի արած այն ցուցումը, վոր՝*

«աշակերտների կողմից պատմության դասընթացը հաստատապես յուրացնելու վճռական պայմանն է պատմական անցքերի շարադրման ժամանակ պահպանել պատմական-ժամանակագրական հաջորդականությունը, անպայման ամրացնելով աշակերտների հիշողության մեջ պատմական կարևոր յերևույթները, պատմական գործիչներին, ժամանակագրական տարեթվերը» *և վոր* «միայն պատմության այդպիսի դասընթացը կարող է ապահովել պատմական նյութի՝ աշակերտների համար անհրաժեշտ մատչելիությունը, ակնառու բնույթն ու կոնկրետությունը, վորի հիման վրա միայն հնարավոր է ճիշտ վերլուծել պատմական անցքերը և ճիշտ ընդհանրացումներ անել, վորոնք աշակերտին հասցնում են պատմության մարքսիստական ըմբռնմանը»։

*10. Տարրական դպրոցի համար կազմվող ԽՍՀՄ-ի պատմության՝ ընդհանուր պատմության համառոտ տեղեկություններ պարունակող տարրական դասընթացն իր բովանդակությամբ և շարադրման բնույթով պետք է հաշվի առնի 3-րդ ու 4-րդ դասարանների աշակերտների տարիքային առանձնահատկությունները, վորոնց համար նախատեսվում է այդ դասագիրքը։*

11. Դասագիրքը պետք է լինի կոնկրետ և պատմականորեն ճշմարիտ։ Դրա հետ միաժամանակ դասագրքի շարադրումը պետք է լինի ցայտուն, հետաքրքիր, գեղարվեստական և լիովին մատչելի մատնանշված տարիքի աշակերտների համար։

12. Դասագրքի վերջում պետք է լինի դժվար ու ոտար բառերի բառարան։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ

ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի Քարտուղար՝ Ի. ՍՏԱԼԻՆ

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Դպրոցների ուսումնական աշխատանքն էլ ավելի բարձրացնելու, տարրական, վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դըպրոցների և մանկավարժական տեխնիկումների ուսուցիչների նյութական ապահովվածությունը բարձրացնելու և ամենավորակյալ մանկավարժներին խրախուսելու նպատակով, ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն վորոշում են՝

1. 1936 թվականի ապրիլի 1-ից բարձրացնել տարրական, վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների և մանկավարժական տեխնիկումների ուսուցիչների աշխատավարձը, սահմանելով նրանց համար ամսական աշխատավարձի հետևյալ դրույքները։ (Տես, 83, 84, 85 և 86-րդ էջերը)։



| Աշխատողների կատեգորիաները | Քաղաքներ և բանվորական ավաններ | | | Գյուղական վայրեր | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մանկավարժական ստաժ | | | | | |
| | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի |
| ա) Տարրական դպրոցների, վոչ լրիվ միջնակարգ յեվ միջնակարգ դպրոցների 1—4 դասարանների ուսուցիչներ. | | | | | | |
| Առաջին կարգ՝ միջնակարգ մանկավարժական կրթությամբ | 270 | 300 | 330 | 240 | 270 | 300 |
| 2-րդ կարգ՝ ընդհանուր միջնակարգ կրթությամբ | 240 | 260 | 280 | 215 | 235 | 250 |
| բ) Վոչ-լրիվ միջնակարգ յեվ միջնակարգ դպրոցների 5—7 դասարանների ուսուցիչներ. | | | | | | |
| Մայրենի լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, պատմության, բնագիտության և ոտար լեզուների ուսուցիչներ | | | | | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | 330 | 370 | 400 | 300 | 340 | 370 |
| 2-րդ կարգ՝ յերկամյա ուսուցչական ինստիտուտների շրջանավարտները | 300 | 330 | 360 | 270 | 300 | 320 |
| Նկարչության, գծագրության, աշխատանքի՝ ֆիզիկական կուլտուրայի, յերաժշտության և յերգեցողության ուսուցիչները | | | | | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | 280 | 310 | 340 | 250 | 275 | 300 |
| 2-րդ կարգ՝ միջնակարգ կրթությամբ | 250 | 270 | 290 | 220 | 240 | 260 |
| գ) Միջնակարգ դպրոցների 8—10 դասարանների ուսուցիչների յեվ մանկավարժական տեխնիկումների դասատուները | | | | | | |
| Մայրենի լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, պատմության, բնագիտության և ոտար լեզուների ուսուցիչներ | | | | | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | 360 | 400 | 425 | 325 | 370 | 400 |
| 2-րդ կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողները | 310 | 340 | 370 | 290 | 320 | 340 |
| Գծագրության, ֆիզիկական կուլտուրայի, ռազմական գործի ուսուցիչներ | | | | | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | 290 | 320 | 345 | 260 | 290 | 310 |
| 2-րդ կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողները | 250 | 275 | 295 | 230 | 250 | 270 |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը դպրոցում: Մինչև 400 հոգի (մինչև 10-ը դասարան) | 400-ից մինչև 880 հոգի (10 դասարանից ավելի) | 880 հոգուց ավելի (22 դասարանից ավելի) |
|---|---|---|---|
| **գ) Միջնակարգ դպրոցների դիրեկտորներ** | | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 400 | 500 | 600 |
| Գյուղական վայրերում | 350 | 400 | — |
| 2-րդ կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողները | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 325 | 375 | 450 |
| Գյուղական վայրերում | 300 | 350 | — |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը դպրոցում: Մինչև 280 հոգի (մինչև 7-ը դասարան) | 280-ից մինչև 560 հոգի (7-ը դասարանից ավելի) | 560 հոգուց ավելի (14 դասարանից ավելի) |
|---|---|---|---|
| **ե) Ոչ-լրիվ միջնակարգ դպրոցների դիրեկտորներ** | | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 330 | 360 | 400 |
| Գյուղական վայրերում | 280 | 310 | 350 |
| 2-րդ կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողները | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 280 | 300 | 330 |
| Գյուղական վայրերում | 250 | 275 | 300 |



| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը դպրոցում: Մինչև 400 հոգի (մինչև 10-ը դասարան) | 400-ից մինչև 880 հոգի (10-ը դասարանից ավելի) | 880 հոգուց ավելի (22 դասարանից ավելի) |
|---|---|---|---|
| **դ) Միջնակարգ դպրոցների ուսումնական մասի վարիչներ** | | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 300 | 375 | 500 |
| Գյուղական վայրերում | 250 | 325 | — |
| 2-րդ կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողները | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 250 | 325 | 400 |
| Գյուղական վայրերում | 200 | 275 | — |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը դպրոցում: Մինչև 280 հոգի (մինչև 7-ը դասարան) | 280-ից մինչև 560 հոգի (7-ը դասարանից ավելի) | 560 հոգուց ավելի (14 դասարանից ավելի) |
|---|---|---|---|
| **ե) Ոչ-լրիվ միջնակարգ դպրոցների ուսումնական մասի վարիչներ** | | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 200 | 250 | 300 |
| Գյուղական վայրերում | 175 | 200 | 250 |
| 2-րդ կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողները | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 175 | 200 | 250 |
| Գյուղական վայրերում | 150 | 175 | 225 |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը դպրոցում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մինչև 80 հոգի | | | 80-ից մինչև 160 հոգի | | | 160 հոգուց ավելի | | |
| | Ստաժ | | | Ստաժ | | | Ստաժ | | |
| | Մինչև 5 տարվա | 5-ից մինչև 10 տարվա | 10 տարուց ավելի | Մինչև 5 տարվա | 5-ից մինչև 10 տարվա | 10 տարուց ավելի | Մինչև 5 տարվա | 5-ից մինչև 10 տարվա | 10 տարուց ավելի |
| ը) Տարրական դպրոցների վարիչներ | | | | | | | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում . . . . | 320 | 350 | 380 | 330 | 360 | 390 | 360 | 390 | 420 |
| Գյուղական վայրերում . . | 270 | 300 | 330 | 290 | 320 | 350 | 320 | 355 | 380 |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը | |
|---|---|---|
| | Մինչև 300 հոգի | 300 հոգուց ավելի |
| թ) Մանկավարժական տեխնիկումների դիրեկտորներ | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ | 500 | 600 |
| 2-րդ կարգ՝ թերի բարձրագույն կրթությամբ . . . . . . . . . | 325 | 400 |
| Մանկավարժական տեխնիկումների ուսումնական մասերի վարիչներ | | |
| Առաջին կարգ՝ բարձրագույն կրթությամբ . | 350 | 450 |
| 2-րդ կարգ՝ թերի բարձրագույն կրթությամբ | 275 | 350 |



2. Երկրորդ կարգի համապատասխան ուսուցիչների դրույքներից 10 տոկոսով պակաս աշխատավարձի դրույքներ սահմանել ուսուցիչների հետևյալ խմբերի համար.

ա) Տարրական դպրոցներում և ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցներում 1—4 դասարաններում՝ լրիվ միջնակարգ կրթություն չունեցող ուսուցիչների համար,

բ) Ոչ լրիվ միջնակարգ դպրոցների 5—7 դասարաններում՝ մայրենի լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, պատմության, բնագիտության և օտար լեզուների այն ուսուցիչների համար, որոնք ունեն միայն միջնակարգ կրթություն, ինչպես և նկարչության, գծագրության, աշխատանքի, ֆիզիկական կուլտուրայի, երաժշտության ու երգեցողության այն ուսուցիչների համար, որոնք չունեն լրիվ միջնակարգ կրթություն։

3. 25 տարվա և ավելի մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների աշխատավարձի դրույքները սահմանել 10 տոկոս ավելի, քան 10-ը տարվա աշխատանքի ստաժ ունեցող ուսուցիչների համար սահմանված դրույքները։

4. Տարրական, ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների ուսուցիչների և մանկավարժական տեխնիկումների դասատուների աշխատավարձի վերև սահմանված դրույքները վճարել՝ առաջին չորս դասարաններում օրական չորս ժամվա դասատվական աշխատանքի համար և մյուս դասարաններում՝ օրական երեք ժամվա դասատվական աշխատանքի համար։

Դասատվական աշխատանքի լրացուցիչ ժամերի համար լրացուցիչ վարձատրություն տալ սահմանված դրույքին համապատասխան։

5. Ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների 5—10 դասարանների մայրենի լեզվի, գրականության ու մաթեմատիկայի ուսուցիչների համար և մանկավարժական տեխնիկումների նույն առարկաների դասատուների համար ամսական 40 ռուբլի լրացուցիչ վարձատրություն սահմանել՝ աշակերտների գրավոր աշխատանքները ստուգելու համար։

6. Սահմանել, որ ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների և մանկավարժական տեխնիկումների դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների դասատվական աշխատանքն օրական 2 ժամից ավելի չպետք է լինի։

Այդ կատեգորիաների դասատվական աշխատանքը վար-

ձարել հիմնական ռոճիկի նկատմամբ լրացուցիչ կերպով՝ ըստ դասատվական աշխատանքի իրական քանակի, հաշվելով համապատասխան կատեգորիայի դասատուի աշխատավարձի դրույքի համաձայն։

7. Ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների 5—10 դասարաններում դասարանների պարտականություններ կատարելու համար, բացի դասերի համար ստացված աշխատավարձից, սահմանել լրացուցիչ վարձատրություն, հետևյալ չափով.

Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Խարկովում, Մինսկում, Թբիլիսիում, Բագվում, Տաշքենդում ամսական 50 ռուբլի, իսկ մյուս քաղաքներում, բանվորական ավաններում և գյուղական վայրերում՝ ամսական 30 ռուբլի։

8. Տարրական դպրոցների վարիչների համար սույն վորոշմամբ սահմանված աշխատավարձի ամսական դրույքների մեջ մտնում է 4 ժամվա ամենօրյա պարտադիր դասատվական աշխատանքի վարձատրությունը։ Տարրական դպրոցների այն վարիչները, վորոնք ազատված են դասատվական աշխատանքից, վարձատրվում են նույն ամսական դրույքներով։

9. Հատուկ ռեժիմ ունեցող դպրոցների (մտավորապես հետ մնացած յերեխաների, խուլ ու համրերի, կույրերի և այլ դպրոցների) ուսուցիչների աշխատավարձի դրույքները հաշվել 25 տոկոս ավելի բարձր, քան համապատասխան մասսայական դպրոցների ուսուցիչների համար սահմանված դրույքները։

10. Համեմատած վորեև ընդունված դրույքների հետ, ավելացնել մանկավարժական աշխատողների դրույքները հետևյալ վայրերում ու շրջաններում.

ա) 10 տոկոս՝ Ուզբեկական ԽՍՀ-ի համար (բացի Տաշքենդից) և Կալմիկական ինքնավար ԽՍՀ-ի համար։

բ) 20 տոկոս Հեռավոր Արևելյան յերկրի համար, Արևելյան Սիբիրի յերկրի Անդրբայկալյան մասի շրջանների համար, Բուրյաթ-Մոնղոլիայի ինքնավար ԽՍՀ-ի այն այմակների համար, վորոնք թվարկված են ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. փետրվարի 5-ի վորոշման մեջ (ԽՍՀՄ օրենքների ժողովածու, 1934 թ., №10, հոդված 54), Յակուտիայի ինքնավար ԽՍՀ-ի, Կարա-Կալպակիայի ինքնավար



ԽՍՀ-ի, Կիրգիզական ԽՍՀ-ի, Ղազախական ԽՍՀ-ի Կարաալբայյան, Դոսորյան ու Բալխաշյան շրջանների և Կարագանդա քաղաքի համար, Տաջիկական ԽՍՀ-ի համար և Ուզբեկական ԽՍՀ-ի Խորեզմյան մարզի համար։

գ) 50 տոկոսով նրանց համար, վորոնք աշխատում են Ծայրագույն Հյուսիսում, Արևելյան Սիբիրի շրջաններում, Կիրենյան, Ստորին Իլիմյան, Բրատյան, Բոգուչանյան, Կեժեմյան, Յենիսեյան, Հյուսիսային Յենիսեյան, Կազակինյան—Լենյան, Տուրուխանյան, Ուստ—Կուտյան շրջաններում, Տովակովյան տեղական խորհրդում, Իգարկա քաղաքում և Բուրյաթ-Մոնղոլիայի հյուսիսային այմակներում, Բունտովյան, Հյուսիսային Բայկալյան, Յերավնինյան ու Բարգուզինյան շրջաններում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Թուրքմենական ու Տաջիկական միութենական հանրապետությունների ժողկոմխորհներին իրավունք է տրվում չերատվորել սույն վորոշման 10-րդ հոդվածի «բ» կետով սահմանված 20 տոկոս հավելումը այդ հանրապետություններում գոյություն ունեցող բաժանման համաձայն, ըստ տարիֆային գոտիների, վորպեսզի այդ հավելումները 10 տոկոսից չիջնեն և 30 տոկոսից չբարձրանան սույն վորոշմամբ սահմանված դրույքների հետ համեմատած։

11. Նկատի ունենալով, վոր դպրոցների ու մանկավարժական տեխնիկումների աշխատողների համար սույն վորոշմամբ աշխատավարձի դրույքները սահմանված են՝ հաշվի առնելով ստաժը, 1936 թ. ապրիլի 1-ից, բացի առաջին գոտու առանձին վայրերից, ամենուրեք չեղյալ հայտարարել դպրոցական աշխատողների և մանկավարժական տեխնիկումների աշխատողների աշխատավարձի լրացուցիչ այն հավելումները, վորոնք նախատեսված են գործող օրենքներում։

Սույն վորոշման հիման վրա ուսուցիչների աշխատավարձը բարձրացնելու նպատակով, պետական ու տեղական բյուջեներով 1936 թվականի մնացած 9 ամսվա համար բաց թողնել 1.022.900.000 ռուբլի (ներառյալ սոցիալական ապահովագրության մուծումները և տեղկոմների պահպանման համար կատարվող հատկացումները)։ Այդ թվից՝ ՌԽՖՍՀ-ի համար 658.100.000 ռուբլի, Ուկրաինական ԽՍՀ-ի համար 214.100.000 ռուբլի, Բելոռուսական ԽՍՀ-ի համար՝ 42.700.000 ռուբլի,

ՌՍՖՍՀ-ի համար 72.900.000 ռ., Ուզբեկական ԽՍՀ-ի համար՝ 22.200.000 ռուբլի, Թուրքմենական ԽՍՀ-ի համար՝ 7.400.000 ռուբլի, Տաջիկական ԽՍՀ-ի համար՝ 5.500.000 ռուբլի։

13. Սույն վորոշումը ճշտիվ ու ժամանակին կատարելու պատասխանատվությունը դնել միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների և ազգային կոմունիստական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների վրա։

| | |
|---|---|
| ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ | ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի քարտուղար՝ |
| Վ. ՄՈԼՈՏՈՎ | Ի. ՍՏԱԼԻՆ |

9 ապրիլի, 1936 թ.

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՈԿՐՈՒԳԱՅԻՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Սահմանել, վոր ժողովրդական լուսավորության շրջանային, քաղաքային ու օկրուգային բաժինների վարիչները հաստատվում են միութենական հանրապետությունների լուսավորության ժողովրդական կոմիսարների կողմից՝ ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների, յերկրային (մարզային) գործադիր կոմիտեների, կամ, մարզեր չունեցող հանրապետություններում, շրջանային գործադիր կոմիտեների (քաղաքային խորհրդի) առաջադրությամբ։

2. Արգելել շրջանային, քաղաքային ու յերկրային (մարզային) գործադիր կոմիտեներին ու ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, ինչպես նաև համապատասխան կուսակցական կոմիտեներին՝ աշխատանքից ազատել և այլ աշխատանքի փոխադրել ժողովրդական լուսավո-



րության շրջանային, քաղաքային ու օկրուգային բաժինների վարիչներին, առանց միութենական հանրապետությունների լուսավորության ժողովրդական կոմիսարների համաձայնության։

| | |
|---|---|
| ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ | ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի քարտուղար՝ |
| Վ. ՄՈԼՈՏՈՎ | Ի. ՍՏԱԼԻՆ |

10 ապրիլի, 1936 թ.

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ՅԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ԴՊՐՈՑԻ ՎԱՐԻՉՆԵՐ ՈՒ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Գտնելով, վոր խորհրդային ուսուցչությունը դարձել է կուլտուրական հզոր ուժ, իր շարքերից առաջ է բերել այնպիսի ուսուցիչներ, վորոնք լավ են տիրապետում մանկավարժական վարպետությանը և օրինակներ են տալիս աճող սերնդի ուսուցման ու լենինյան դաստիարակման գործում, ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն մատնանշում են, վոր ուսուցիչներ ընդունելու և նշանակելու համար հաստատուն կարգ չլինելու պատճառով ստեղծվել է անհանդուրժելի մի պրակտիկա, ըստ վորի հաճախ մանկավարժական աշխատանքի պահանջներին չբավարարող պատահական մարդկանց թույլ էր տրվում դպրոցներում ուսուցանել ու դաստիարակել յերեխաներին։

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը միանգամայն անթույլատրելի յեն համարում, վոր միութենական և ինքնավար հանրապետությունների լուսժողկոմատները, ինչպես և ժողովրդական լուսավորության մարզային ու յերկրային բաժինները պատշաճ ուշադրություն չեն նվիրել ուսուցչին, չեն զբաղվել ուսուցիչների ընտրությամբ և նշանակմամբ՝ պետական այդ կարևորագույն գործը վերապահելով յերկրորդական աշխատողներին։

Միանգամայն անթույլատրելի յե նաև այն պրակտիկան, յերբ հաճախ ուսուցիչներն անհիմն կերպով փոխադրվում են և

«նետվում են» շրջանից-շրջան, դպրոցից-դպրոց, և նաև նույնիսկ ուսումնական տարվա միջոցին, վորի հետևանքն է լինում դիմազրկությունն ու անպատասխանատվությունը դպրոցական աշխատանքներում և ուսուցչական կադրերի հոսունությունը։

Նկատի ունենալով խորհրդային ուսուցչության առջև մանուկների ուսուցման ու դաստիարակման գործում դրված առանձնապես պատասխանատու խնդիրները, ինչպես և նկատի ունենալով, վոր անհրաժեշտ է էլ ավելի բարելավել ուսումնական աշխատանքը դպրոցներում և ստեղծել ուսուցչական կադրերի հետագա աճումն ու կատարելագործումն ապահովող պայմաններ, ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում են՝

1. Սահմանել, վոր այսուհետև տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում դասավանդելու իրավունք է տրվում միմիայն այն մարդկանց, վորոնց անձնապես համապատասխան ուսուցչական կոչում է տրված համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի «Ուսուցիչների անձնական կոչումների» վերաբերյալ 1936 թ. ապրիլի 10-ի վորոշման։ Այն անձանց, վորոնք ավարտել են միջնակարգ ու բարձրագույն մանկավարժական ուսումնական հաստատությունները (և նրանց հավասարեցված ուսումնական հաստատությունները), բայց չունեն մանկավարժական ստաժ, թույլ տալ մի տարի դասավանդել դպրոցներում ուսուցչական կոչում ստանալու համար՝ փորձնական ստաժն անցնելու նպատակով։

2. Առաջարկել միութենական հանրապետությունների ժողովրդական լուսավորության կոմիսարներին՝ մինչև 1938 թ. օգոստոսի 1-ը կիրառել տարրական ու միջնակարգ դպրոցների ուսուցչի կոչման ատեստացիա այն բոլոր անձանց, վորոնք այժմ աշխատում են վորպես ուսուցիչներ տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում։

3. Սահմանել, վոր տարրական դպրոցների ուսուցիչներին ու վարիչներին, ինչպես և վոչ լրիվ միջնակարգ դպրոցների ուսուցիչներին ու դիրեկտորներին և միջնակարգ դպրոցների առաջին յոթը դասարանների ուսուցիչներին նշանակում, փոխադրում ու արձակում են ինքնավար հանրապետությունների



լուսավորության յերկրային (մարզային) բաժինների վարիչները՝ ժողովրդական լուսավորության քաղաքային ու շրջանային վարիչների առաջադրմամբ։

4. Սահմանել, վոր միջնակարգ դպրոցների դիրեկտորներին և միջնակարգ դպրոցների 8-րդ, 9-րդ ու 10-րդ դասարանների ուսուցիչներին նշանակում, փոխադրում և արձակում են միութենական հանրապետությունների ժողովրդական լուսավորության կոմիսարները՝ ինքնավար հանրապետությունների լուսավորության կոմիսարների և ժողովրդական լուսավորության յերկրային (մարզային) բաժինների վարիչների առաջադրմամբ։

5. Արգելել շրջանային գործադիր կոմիտեներին և կուսակցության շրջանային կոմիտեներին՝ տեղափոխել ուսուցիչներին, և հանձնարարել յերկրային (մարզային) խորհրդային ու կուսակցական օրգաններին՝ վերահսկել սույն վորոշման ճիշտ կենսագործմանը։

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ

ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի Քարտուղար՝
Ի. ՍՏԱԼԻՆ

10 ապրիլի, 1936 թ.

## ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ Կենտգործկոմը և Ժողկոմխորհը վորոշում են.

1. Տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցիչների համար սահմանել հետևյալ անձնական կոչումները.—

ա) Տարրական դպրոցի ուսուցիչ,

բ) Միջնակարգ դպրոցի ուսուցիչ,

գ) Դպրոցի վաստակավոր ուսուցիչ։

Ուսուցիչների անձնական կոչումները, վոր տրվելու յեն որենքով սահմանված կարգով, ցմահ են և այդ կոչումից զրկելը կարող է լինել միայն դատարանի վորոշումով։

Անձնական կոչում ստացած ուսուցիչներին տալ սահմանված ձևի վկայագիր, միութենական հանրապետության լուսժողկոմի ստորագրությամբ։

Հաստատել սրան կից ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների համար տարրական և միջնակարգ դպրոցի ուսուցչի կոչման վկայագրերի միասնական ձևերը։

2. Սահմանել, վոր անձնական կոչումները տրվում են միութենական հանրապետությունների լուսժողկոմների կողմից, համաձայն ինքնավար հանրապետությունների լուսժողկոմների և մարզային (յերկրային) լուսբաժինների առաջադրության, իսկ այնտեղ, վորտեղ մարզային (յերկրային) բաժիններ չկան, համաձայն օկրուգային (քաղաքային) և շրջանային լուսբաժինների առաջադրության հետևյալ անձանց.

ա) Տարրական դպրոցի ուսուցչի կոչում տալ նրանց, ովքեր ավարտել են միջնակարգ մանկավարժական (կամ նրանց հավասարեցրած) ուսումնական հիմնարկները և պիտանի յեն ճանաչված մանկավարժական աշխատանքի համար։

բ) Միջնակարգ դպրոցի ուսուցչի կոչում տալ նրանց, ովքեր ավարտել են մանկավարժական ինստիտուտներն ու համալսարանները և պիտանի յեն ճանաչված մանկավարժական աշխատանքի համար։

Ուսուցչական ինստիտուտներն ավարտածներին և մանկավարժական աշխատանքի համար պիտանի ճանաչվածներին տալ միջնակարգ դպրոցի ուսուցչի կոչում, միջնակարգ դպրոցի առաջին յոթ դասարաններում ավանդելու իրավունքով։

Այն անձանց, վորոնք ներկայումս տարրական և միջնակարգ դպրոցներում մանկավարժական աշխատանք են տանում, սակայն համապատասխան ուսումնական հիմնարկները չեն ավարտել, իրավունք է տրվում շարունակել մանկավարժական աշխատանքն այն պայմանով, վոր յերկու տարվա ընթացքում (մինչև 1938 թվի օգոստոսի 1-ը) տան համապատասխան քննություններ և վկայական ստանան։

Հիշյալ անձանց ուսուցչական կոչում տալ միայն դպրոցներում միամյա մանկավարժական աշխատանքի ստաժ ձեռք բերելուց հետո։ Ուսումնական աշխատանքի փորձնական ստաժ կարելի չե հաշվել նաև ուսուցչի նախկին մանկավարժական աշխատանքը, մինչև նրա ուսումնական հիմնարկ ընդունվելը։



Պարտավորեցնել լուսժողկոմներին՝ Լուսժողկոմատի պաշտոնական օրգաններում անձնական կոչումներ տալու մասին հրամաններ հրապարակելը։

3. Սահմանել, վոր վաստակավոր ուսուցչի կոչում տրվում է միութենական հանրապետությունների Ժողկոմխորհների կողմից, ըստ լուսժողկոմների առաջադրության, տարրական և միջնակարգ դպրոցների այն ուսուցիչներին, վորոնք իրենց դաստիարակչական—մանկավարժական աշխատանքով աչքի յեն ընկնում։

ԽՍՀՄ Կենտգործկոմի Նախագահ՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի Նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ Վ. ՄՈԼՈՏՈՎ

Մոսկվա, Կրեմլ
10 ապրիլի, 1936 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԽՍՀ ՊԵՏՆԻՇԸ

ՀԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

## ՎԿԱՅԱԳԻՐ

**ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՉՄԱՆ**

№

. . . . . . . . . . . .

(Անուն, հայրանուն, ազգանուն)

վոր . . . . թվին ավարտել է . . .
. . և անցել է դպրոցում մանկավարժական աշխատանքի փորձնական ստաժը, ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թվի ապրիլի 10-ի, ուսուցիչներին անձնական կոչում տալու մասին վորոշման հիման վրա, արժանացել է ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՉՄԱՆԸ։

(Կ. Տ.)

ՀԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ՝

« » . . . . . 19...թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԽՍՀ ՊԵՏՆԻՇԸ

**ՀԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ**

# ՎԿԱՅԱԳԻՐ

**ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՉՄԱՆ**

. . . . . . . . . . .

*(Անուն, հայրանուն, ազգանուն*

*որ . . . թվին ավարտել է . . .*

№ *. . . . . և անցել է դպրոցում մանկավարժական աշխատանքի փորձնական ստաժը, ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թվի ապրիլի 10-ի, ուսուցիչներին անձնական կոչում տալու մասին վորոշման հիման վրա, արժանացել է ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՉՄԱՆԸ։*

*(Կ. Տ.)*

*ՀԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ՝*

*« » . . . . 19... թ.*

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների խորհրդի 1936 թ. ապրիլի 10-ի վորոշումը

*1. Սահմանել, վոր ուսուցիչների աշխատավարձը ժողովրդական կրթության շրջանային և քաղաքային բաժինների կողմից քաղաքներում, շրջանային կենտրոններում և բանվորական ավաններում վճարվում է ամսական յերկու անգամ— յուրաքանչյուր ամսվա 16-ին և 1-ին անցած կիսամսյակի համար, իսկ գյուղական վայրերում՝ ամսական 1 անգամ— ավյալ ամսի 20-ին։*



*2. Սահմանել, վոր ինչպես քաղաքային, նույնպես և գյուղական դպրոցների ուսուցիչների աշխատավարձի վճարումը կատարվում է համապատասխան քաղաքային և շրջանային ժողովրդական կրթության բաժինների կողմից՝ դպրոցների դիրեկտորների և վարիչների միջոցով։*

*Համապատասխան սրան, գյուղական ուսուցիչների աշխատավարձի ծախքերը հանել գյուղական բյուջեյից և այսուհետև անցկացնել շրջանային բյուջեյով։*

*3. Պարտավորեցնել քաղաքային խորհուրդների և շրջգործկոմների նախագահություններին ապահովել ժողովրդական կրթության շրջանային և քաղաքային բաժինների հատուկ հաշիվներն—ուսուցիչներին տրվող աշխատավարձի համար փոխանցվող անհրաժեշտ գումարներով վոչ ուշ, քան աշխատավարձ վճարելու համար սահմանված ժամկետից 5 որ առաջ։*

*4. Սահմանել, վոր դպրոցների դիրեկտորներն ու վարիչներն ուսուցիչների աշխատավարձի համար իրենց ստացած գումարները պարտավոր են վճարել ամեն մի ուսուցչի սույն վորոշմամբ սահմանված ժամկետներում—անմիջապես վերադարձնելով ուսուցիչների ստորագրություններով վավերացված աշխատավարձի ռոճկացուցակները—ժողովրդական կրթության շրջանային և քաղաքային բաժիններին։*

*5. Սահմանել, վոր ժողովրդական կրթության քաղաքային և շրջանային բաժինների վարիչները ուսուցիչներին հասանելիք աշխատավարձը ուշացնելու կամ վոչ լրիվ կերպով վճարելու համար յենթարկվում են դատի։*

*Սահմանել, վոր քաղաքային և շրջանային ֆինանսական բաժինների վարիչները յենթարկվում են դատի՝ ուսուցիչներին աշխատավարձ վճարելու համար բյուջեյով նախատեսնված գումարներն ուշացումով կամ վոչ լրիվ փոխանցելու համար։*

ԽՍՀ Միության Ժողովրդական
Կոմիսարների խորհրդի նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ

«Правда», *1936 թ.*
*ապրիլի 11-ին նո—101 (6707)*

# ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ ՑԵՂԱԾ ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1936 Թ. ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀամԿ(բ)Կ Կենտկոմն արձանագրում ե, վոր ՌՍՖՍՀ Լուսժողկոմատը և մյուս միութենական հանրապետությունների լուսժողկոմատները խեղաթյուրումներ են թույլ տվել դպրոցի ղեկավարման գործում, վորն արտահայտվել ե դպրոցներում այսպես կոչված «մանկաբաններ» մասսայաբար առաջ բերելու և դպրոցի ղեկավարման ու աշակերտների դաստիարակության կարևորագույն ֆունկցիաները նրանց վերապահելու մեջ։ Լուսժողկոմատների կարգադրությամբ մանկաբանների վրա յե դրվել դասարանների կոմպլեկտավորման, դպրոցական ռեժիմի կազմակերպման, ամբողջ ուսումնական պրոցեսին «դպրոցի ու մանկավարժի մանկաբանացման տեսակետից» ուղղություն տալու, աշակերտների վատ առաջադիմության պատճառները վորոշելու, քաղաքական հայացքների նկատմամբ վերահսկողություն ունենալու, դպրոցներն ավարտողների պրոֆեսիան վորոշելու, վոչ առաջադեմ աշակերտներին դպրոցներից հեռացնելու և այլ պարտականությունները։

Դպրոցում, մանկավարժական կազմին զուգընթաց, անկախ մանկավարժներից մանկաբանների կազմակերպություն ստեղծելը, վորն ուներ իր ղեկավար կենտրոնները, հանձինս զանազան մանկաբանական կաբինետների, մարզային լաբորատորիաների և գիտա-հետազոտական ինստիտուտների, ուսումնական ու դաստիարակչական աշխատանքի մասնատումը մանկավարժների ու մանկաբանների միջև, յերբ մանկավարժների նկատմամբ վերահսկողություն ե սահմանված յեղել մանկաբանների ողակի կողմից— այս ամենը չեյին կարող գործնականում չիջեցնել մանկավարժի դերն ու պատասխանատվությունն ուսումնական ու դաստիարակչական աշխատանքի դրվածքի համար, չեյին կարող փաստական անվերահսկողություն չստեղծել դպրոցի ղեկավարման գործում, չեյին կարող վնաս չհասցնել խորհրդային դպրոցի ամբողջ գործին։

Այդ վնասը սաստկացել եր դպրոցում կատարվող մանկաբանական աշխատանքի բնույթով և մեթոդոլոգիայով։ Մանկաբանների պրակտիկան, վորն ընթանում եր ամբողջովին կտրված մանկավարժից ու դպրոցական պարապմունքներից, հանգեց հիմնականում կեղծ գիտական փորձերի և աշակերտների ու նրանց ծնողների մեջ անթիվ հետազոտությունների կազմակերպմանը՝ անիմաստ և վնասակար հարցաթերթերի, տեստերի ձևով և այլն, վորոնք վաղուց դատապարտվել են կուսակցության կողմից։ Մեծ թվով աշակերտների և նրանց ծնողների մեջ անցկացվող այդ իբրև թե «գիտական» հետազոտություններն ուղղված եյին գլխավորապես չառաջադիմող կամ դպրոցական ռեժիմի շրջանակներից դուրս յեկող աշակերտների դեմ և նպատակ ունեյին ժամանակակից մանկաբանության իբրև թե «գիտական», «բիոսոցիալական» տեսակետից ապացուցելու աշակերտի չառաջադիմելու կամ նրա վարքագծի առանձին դեֆեկտների ժառանգական ու սոցիալական պայմանավորվածությունը, գտնել հենց իր՝ աշակերտի, նրա ընտանիքի, ծնողների, նախահայրերի, հասարակական միջավայրի առավելագույն բացասական ազդեցություններն ու ախտաբանական (պաթոլոգիական) խեղաթյուրումները և դրանով իսկ առիթ գտնել հեռացնելու աշակերտներին դպրոցական նորմալ կոլեկտիվից։

Նույն նպատակով եր գործում դպրոցականների մտավոր զարգացման ու շնորհալիության հետազոտման ընդարձակ սիստեմը, վորը վոչ քննադատաբար փոխադրվել եր խորհրդային հողի վրա բուրժուական դասակարգային մանկաբանությունից և ներկայացնում եր կատարյալ ծաղր աշակերտների վրա, վորը հակասում եր խորհրդային դպրոցի խնդիրներին և առողջ մտքին։ 6—7 տարեկան յերեխային տալիս եյին ստանդարտային կազուիստական հարցեր, վորից հետո վորոշվում եր նրա՝ այսպես կոչված մանկաբանական տարիքը և նրա մտավոր շնորհալիության աստիճանը։

Այդ բոլորը հասցրեց այն բանին, վոր ավելի ու ավելի մեծ քանակությամբ յերեխաներ դասվում եյին մտավորապես հետամնացների, դեֆեկտավորների և «դժվար դաստիարակելիների» կատեգորիան։

Մանկաբանական «ուսումնասիրման» յենթարկված աշակերտներին վերոհիշյալ կատեգորիաներից մեկը դասելու հիման վրա, մանկաբանները վորոշում եյին այն յերեխաներին, վո-

րոնք նորմալ դպրոցից պետք է մեկուսացվեն և փոխադրվեն «դժվար դաստիարակելի», մտավորապես հետամնաց, պսիխոնևրոտիկ և այլ յերեխաների համար հատկացված «հատուկ» դպրոցներն ու դասարանները։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմն արձանագրում է, վոր մանկաբանների վնասակար գործունեության հետևանքով «հատուկ» դպրոցների համալրումը կատարվում էր լայն և գնալով ավելացող մասշտաբով։ Հակառակ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀ Միության Ժողկոմխորհի ուղղակի ցուցումին, վոր ստեղծվի յերկու-յերեք դպրոց՝ դեֆեկտավոր և ուսումը կազմալուծող աշակերտների համար, ՌՍՖՍՀ Լուսժողկոմատը ստեղծել էր մեծ թվով «հատուկ» դպրոցներ զանազան անվանումներով, վորոնց սովորողների հսկայական մեծամասնությունը նորմալ դպրոցները հետ փոխադրելու յենթակա կատարելապես նորմալ յերեխաներ են։ Այդ դպրոցներում, դեֆեկտավոր յերեխաների հետ միասին, սովորում են տաղանդավոր ու շնորհալի յերեխաներ, վորոնց մանկաբանները կեղծ-գիտական թեորիաների հիման վրա, անխտիր դասել են «դժվար դաստիարակելիների» կատեգորիան։ Ինչ վերաբերում է գործի դրվածքին այդ «հատուկ» դպրոցներում, ապա՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը նրանց ուսումնական ու դաստիարակչական աշխատանքի դրությունը գտնում է միանգամայն անհանդուրժելի, հանցավոր անպատասխանատվությանը սահմանակցվող։ «Հատուկ» դպրոցներն ըստ էության հսկողությունից դուրս են, այդ դպրոցներում ուսումնական աշխատանքի, ուսումնական ռեժիմի ու դաստիարակության դրվածքը հանձնըված են ամենից քիչ վորակյալ դաստիարակների ու մանկավարժների ձեռքը։ Այդ դպրոցներում վոչ մի լուրջ ուղղիչ աշխատանք չի կազմակերպված։ Դրա հետևանքով մեծ թվով յերեխաներ, վորոնք նորմալ դպրոցի պայմաններում ուղղվում են և դառնում ակտիվ, բարեխիղճ ու կարգապահ աշակերտներ, «հատուկ» դպրոցի պայմաններում ձեռք են բերում վատ սովորույթներ ու հակումներ և ավելի դժվար ուղղելիներ են դառնում։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը գտնում է, վոր Լուսժողկոմատի օրգանների պրակտիկայում կուսակցության դաստիարակչական քաղաքականության այդպիսի խեղաթյուրումները կարող էյին



առաջ գալ վորպես հետևանք այն բանի, վոր լուսժողկոմատները մինչև այժմ էլ հեռու յեն դպրոցի ղեկավարման և խորհրդային մանկավարժական գիտության զարգացման արմատական ու կենսական խնդիրներից։

Միմիայն մանկավարժական գիտության և պրակտիկայի ղեկավարությունը Լուսժողկոմատի կողմից ցուցաբերվող արհամարհանքով կարելի յե բացատրել այն փաստը, վոր դպրոցի մահացման հակագիտական տգետ թեորիան, վորը դատապարտված է կուսակցության կողմից, մինչև վերջին ժամանակներս ճանաչված էր լուսժողկոմատներում և նրա հետևորդները, թերուս մանկաբանների ձևով, ավելի ու ավելի էյին շատանում։

Միմիայն աճող սերնդի դաստիարակման գործի ճիշտ դրվածքի խնդիրներին լուսժողկոմատների ցուցաբերած աղաղակող անուշադրությամբ և նրանց մի շարք ղեկավարների տգիտությամբ կարելի յե բացատրել այն փաստը, վոր լուսժողկոմատի սիստեմում մանկավարժությունն արհամարհական կերպով հայտարարվել էր վորպես «էմպիրիկա» և «գիտականակերպ դիսցիպլին», իսկ չկազմակերպված, դեռ յերերուն, իր առարկան ու մեթոդը չվորոշած և վնասակար, հակամարքսիստական տենդենցներով լի այսպես կոչված մանկաբանությունը հայտարարվել էր վորպես մի ունիվերսալ գիտություն, վորը կոչված է ուղղություն տալու ուսումնական դաստիարակչական աշխատանքի բոլոր կողմերին, վորոնց թվում նաև մանկավարժությանն ու մանկավարժներին։ Միմիայն խորհրդային մանկավարժական գիտության զարգացմանը ցուցաբերվող քյալլագյոզական արհամարհանքով կարելի յե բացատրել այն փաստը, վոր դպրոցական աշխատողների բազմամարդ բանակի լայն ու բազմակողմանի փորձը չի մշակվում ու չի ընդհանրացվում և խորհրդային մանկավարժությունն անտես է առնված լուսժողկոմատների մոտ, մինչդեռ ներկա, այսպես կոչված մանկաբանության ներկայացուցիչներին լայն հնարավորություն է տրվում կեղծ գիտական հայացքներ քարոզելու և մասսայական, ավելի քան կասկածելի փորձեր կատարելու յերեխաների վրա։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը դատապարտում է ժամանակակից այսպես կոչված մանկաբանության թեորիան ու պրակտիկան։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը գտնում է, վոր այսպես կոչված մանկա-

բանության թե՛ թեորիան և թե՛ պրակտիկան հիմնված են կեղծ գիտական, հակամարքսիստական դրույթների վրա։ Այդպիսի դրույթների թվին են պատկանում նախ և առաջ ժամանակակից մանկաբանության գլխավոր «օրենքը»՝ այն «օրենքը», թե երեխաների ճակատագիրը ֆատալիստորեն պայմանավորված է կենսաբանական ու սոցիալական գործոններով, ժառանգականության և ինչ վոր անփոփոխ միջավայրի ազդեցությամբ։ Խորապես ռեակցիոն այդ «օրենքը» աղաղակող հակասության մեջ է գտնվում մարքսիզմի և սոցիալիստական շինարարության ամբողջ պրակտիկայի հետ, վորը հաջողությամբ վերադաստիարակում է մարդկանց սոցիալիզմի ոգով և վերացնում է կապիտալիզմի մնացուկներն էկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը գտնում է, վոր այդպիսի թեորիա կարող էր հրապարակ գալ միմիայն այն պատճառով, վոր անքննադատ կերպով խորհրդային մանկավարժության ասպարեզն էին փոխադրվել հակագիտական բուրժուական մանկաբանության հայացքներն ու սկզբունքները, մանկաբանության, վորն իր առջև խնդիր էր դրել՝ շահագործող դասակարգերի տիրապետությունը պահպանելու նպատակով ապացուցել շահագործող դասակարգերի և «բարձր ռասսաների» հատուկ շնորհալիությունն ու գոյության հատուկ իրավունքները, և մյուս կողմից աշխատավոր դասակարգերի ու «ցածր ռասսաների» ֆիզիկական ու հոգևոր դատապարտվածությունը։ Բուրժուական մանկաբանության հակագիտական սկզբունքներն այդպես խորհրդային գիտության մեջ փոխադրելը վնասակար է առավել ևս այն պատճառով, վոր նա քողարկվում է «մարքսիստական» ֆրազեոլոգիայով։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը գտնում է, վոր մանուկների վերաբերյալ մարքսիստական գիտություն հնարավոր է ստեղծել միմիայն ժամանակակից այսպես կոչված մանկաբանության վերոհիշյալ հակագիտական սկզբունքները հաղթահարելու և նրա իդեոլոգներին ու պրակտիկներին քննադատելու հողի վրա՝ մանկավարժության վորպես գիտության և մանկավարժների վորպես նրա կրողների ու արմատացնողների լիակատար վերականգնման հիման վրա։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում է՝



1. Լիովին վերականգնել մանկավարժության ու մանկավարժների իրավունքները։

2. Վերացնել մանկաբանների օղակը դպրոցներում և հանել մանկաբանական դասագրքերը։

3. Առաջարկել ՌՍՖՍՀ Լուսժողկոմատին և մյուս միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին՝ վերանայել դժվար դաստիարակելիների դպրոցները, երեխաների հիմնական մասսային փոխադրելով նորմալ դպրոցները։

4. Սխալ ճանաչել ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի վորոշումը՝ մանկաբանական աշխատանքը կազմակերպելու մասին և ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի 1931 թ. մարտի 7-ի վորոշումը «Հանրապետության մեջ մանկաբանական աշխատանքը կազմակերպելու մասին»։

5. Վերացնել մանկաբանության, վորպես հատուկ գիտության, դասավանդումը մանկավարժական ինստիտուտներում ու տեխնիկումներում։

6. Մամուլում խիստ քննադատել ներկա մանկաբանների մինչև այժմ լույս տեսած թեորետիկական գրքերը։

7. Պրակտիկ մանկաբաններից ցանկացողներին փոխադրել մանկավարժների շարքը։

8. Պարտավորեցնել ՌՍՖՍՀ Լուսավորության ժողկոմին՝ մի ամսից հաշվետվություն ներկայացնել ՀամԿ(բ)Կ Կենտկոմին՝ սույն վորոշման կատարման ընթացքի մասին։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմ

«Правда» 1936 р. հուլիսի 5, №183

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆՑԸ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ԽՍՀՄ ԺԿԽ-Ի 1936 ԹՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ Ժողկոմխորհը նշում է, վոր միութենական հանրապետությունների լուսժողկոմատներն ամբողջովին անուշադրության են մատնել դպրոցական գրադարանների ծավալման գործը։ Դրա հետևանքով շատ տարրական ու միջնակարգ դպրոցների աշակերտները զրկված են արտադպրոցական ընթերցանության համար գրքեր ստանալու հնարավորությունից։

ԽՍՀՄ Ժողկոմխորհը վորոշում է

1. Պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին, 1937 թվից սկսած, ապահովել դպրոցներին կից արդեն գոյություն ունեցող աշակերտական գրադարանների համալրումը և սկսել աշակերտական գրադարաններ ստեղծել այն բոլոր տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում, վորտեղ չկան աշակերտական գրադարաններ։

2. Միութենական հանրապետությունների լուսժողկոմատների վրա դնել տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների աշակերտական գրադարանների համար հանձնարարվող կամ թույլատրվող գրքերի ցուցակների հաստատումը, այլ և հրապարակվելիք գրքերի հաստատումը։

3. Նոր ծավալվող աշակերտական գրադարանների համար և գոյություն ունեցող աշակերտական գրադարանները լրացնելու համար ապահովել 1937 թ. հրատարակելու.

ա) 20 միլիոն օրինակ գիրք՝ տարրական դպրոցների համար.

բ) 22,5 միլիոն օրինակ գիրք՝ վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների համար, մոտավոր հաշվով 150—200 նոր գիրք՝ տարրական դպրոցների գրադարանների համար և 400—500 գիրք՝ վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների գրադարանների համար։

4. Աշակերտական գրադարանների համար գրքեր հրատարակելու հիմնական աշխատանքը դնել Համ. ԼԿԵՄ Կենտկոմին կից Մանկ. Հրատ.-ի վրա, իսկ միութենական հանրապետություններում՝ հանրապետությունների պետական հրատարակչությունների վրա։

5. Միութենական հանրապետությունների լուսժողկոմատների բյուջեների մեջ 1937 թվին հատուկ հոդվածով հատկացում անել դպրոցների կողմից աշակերտական գրադարաններ ձեռք բերելու համար.

ա) 25 միլիոն ռուբլի տարրական դպրոցների գրադարանների համար.

բ) 45 միլիոն ռուբլի վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների գրադարանների համար։



Դպրոցական նախահաշիվների մեջ, վորպես ծախսերի հատուկ հոդված, նախատեսնել հատկացում դպրոցական գրադարանների համար։

Հնարավորություն տալ դպրոցների դիրեկտորներին ԿՈԳԻԶ-ի և միութենական հանրապետությունների գրքի առևտրով զբաղվող կազմակերպությունների միջոցով բաժանորդագրությամբ գրքեր պատվիրելու աշակերտական գրադարանների համար։

6. ԽՍՀՄ-ում Պետպլանին՝ աշակերտական գրադարանների համար գրքեր հրատարակելու նպատակով 1937 թվի պլանում նախատեսնել անհրաժեշտ քանակությամբ թուղթ, ստվարաթուղթ և կոլենկոր, այն քանակությամբ, վոր անհրաժեշտ է և համապատասխանում է սույն վորոշման 3-րդ կետին։

ԽՍՀՄ Ժողկոմխորհի Նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ

## ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ, ԲԱՆՖԱԿՆԵՐԻ, ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ԽՍՀՄ ԺԿԽ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն վորոշեցին.

I

1) 1937 թվականի փետրվարի 1-ից բարձրացնել տեխնիկումների (բացի մանկավարժական տեխնիկումներից, վորտեղ աշխատավարձը բարձրացված է ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թվականի ապրիլի 9-ի վորոշմամբ), բժշկական ու իրավագիտական միջնակարգ դպրոցների, նկարչական, յերաժշտական, թատերական ու պարարվեստի ուսումնարանների և բանֆակների դասատուների, դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների աշխատավարձը, նրանց համար սահմանելով ամսական աշխատավարձի հետևյալ դրույքները (ռուբլիներով).

| Աշխատողների կատեգորիան | Քաղաքներում և բանվորական ավաններում | | | Գյուղական վայրերում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մանկավարժական աշխատանքի ստաժը | | | | | |
| | 5 տարուց պակաս | 5 տարուց մինչև 10 տ. | 10 տարուց ավելի | 5 տարուց պակաս | 5 տարուց մինչև 10 տ. | 10 տարուց ավելի |
| ա) Մայրենի լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, պատմության, բնագիտության, օտար լեզուների, ինչպես նաև հատուկ առարկաների դասատուներ՝ համապատասխան տեխնիկումներում, դպրոցներում, ուսումնարաններում և բանֆակներում. | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . . . . . . . . . | 340 | 380 | 405 | 310 | 350 | 380 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . . . . . . | 295 | 325 | 350 | 275 | 305 | 325 |
| բ) Գծագրության, աշխատանքի, ֆիզկուլտուրայի և ռազմագիտության ուսուցիչներ. | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . . . . . . . . | 275 | 305 | 330 | 245 | 275 | 295 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . . . . . . . . | 240 | 260 | 280 | 220 | 240 | 260 |

*2. Միայն միջնակարգ կրթություն ունեցող ուսուցիչների համար աշխատավարձի դրույքները սահմանել 10 տոկոսով պակաս լրիվ բարձրագույն կրթություն չունեցող դասատուների (2-րդ կարգի) դրույքներից։*

*3. Առաջին հոդվածում մատնանշված ուսումնական հաստատությունների դասատուների աշխատավարձի վերևում սահմանված դրույքները վճարում են օրական 3 ժամվա դասատուական աշխատանքի համար։ (տես շարունակութ. 109-րդ եջ)*



| Աշխատողների կատեգորիան | Ուսումնական հաստատություններում, ըստ սովորողների թվի | |
|---|---|---|
| | մինչև 300 հոգի | 300 հոգուց ավելի |
| գ) «ա» կետում մատնանշված ուսումնական հաստատությունների դիրեկտորներ | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . . . . . . | 475 | 570 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . . . . . . | 310 | 380 |
| դ) «ա» կետում մատնանշված ուսումնական հաստատությունների ուսումնական մասի վարիչներ. | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . . . . . . | 335 | 430 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . . . . . . | 260 | 330 |

| Աշխատողների կատեգորիան | Քաղաքներում և բանվորական ավաններում | | | Գյուղական վայրերում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մանկավարժական աշխատանքի ստաժ | | | | | |
| | 5 տարուց պակաս | 5 տարուց մինչև 10 տ. | 10 տարուց ավելի | 5 տարուց պակաս | 5 տարուց մինչև 10 տ. | 10 տարուց ավելի |
| ա) Անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչներ | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն մանկավարժական միջնակարգ կրթություն . . . . . | 230 | 255 | 280 | 205 | 230 | 255 |
| II կարգ՝ վորոնք ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն . . . . . . . . | 205 | 220 | 240 | 185 | 200 | 215 |
| բ) Մեծահասակների բարձր տիպի դպրոցների առաջին, 2-րդ և 3-րդ դասարանների ուսուցիչներ, (վորոնք համապատասխանում | | | | | | |

| Աշխատողների կատեգորիան | Քաղաք. և բանվ. ավան՝ Մանկավարժական աշխատանքի ստաժ | | | Գյուղական վայրերում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 5 տարուց պակաս | 5 տարուց մինչև 10 տ. | 10 տար. ավելի | 5 տարուց պակաս | 5 տարուց մինչև 10 տ. | 10 տար. ավելի |
| են փոքրահասակների վոչ լրիվ միջնակարգ դպրոցների 5-րդ և 7-րդ դասարաններին)։ | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . . . . . . . | 280 | 315 | 340 | 255 | 290 | 315 |
| II կարգ՝ վորոնք ավարտել են յերկամյա ուսուցչական ինստիտուտներ . . . . . | 255 | 280 | 305 | 230 | 255 | 270 |
| գ) Մեծահասակների բարձր տիպի դպրոցների 4-րդ, 5-րդ և 6-րդ դասարանների ուսուցիչներ (համապատասխան փոքրահասակների միջնակարգ դպրոցի 8-րդ և 10-րդ դասարանների) | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն , . . . . . . . . . . | 305 | 340 | 360 | 275 | 315 | 340 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . . . . . . . | 265 | 290 | 315 | 245 | 270 | 290 |

| | Դպրոցներում ըստ սովորողների թվի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մինչև 90 հոգի ըստ ստաժի | | | 90-ից մինչև 150 հոգի ըստ ստաժի | | | 150 հոգուց ավելի ըստ ստաժի | | |
| | Մինչև 5 տ. | 5—10 տարի | 10 տ. բարձր | Մինչև 5 տ. | 5—10 տարի | 10 տ. բարձր | Մինչև 5 տ. | 5—10 տարի | 10 տ. բարձր |
| դ) Մեծահասակների բարձր տիպի դպրոցի դիրեկտորներ. քաղաքներում և բանվորական ավաններում | 290 | 315 | 340 | 3[illegible]0 | 325 | 350 | 325 | 350 | 380 |
| Գյուղական վայրերում | 245 | 270 | 300 | 260 | 290 | 315 | 290 | 320 | 340 |



Յերաժշտական, նկարչական, թատերական ու պարարվեստի ուսումնարաններում՝ անհատական-խմբակային ուսուցման համար և ֆիզկուլտուրայի տեխնիկումներում՝ գործնական վարժությունների համար—վերևում սահմանված դրույքները վճարվում են օրական 4 ժամվա աշխատանքի համար։

4. Տեխնիկումների, բժշկական ու իրավագիտական միջնակարգ դպրոցների, նկարչական, յերաժշտական, թատերական ու պարարվեստի ուսումնարանների և բանֆակների դասատուների, դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների վրա համապատասխանորեն տարածել «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին» ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թվականի ապրիլի 9-ի վորոշման 3, 5, 6, 10 և 11-րդ հոդվածները։

## II

1. 1937 թվականի փետրվարի 1-ից բարձրացնել անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչների, մեծահասակների բարձր տիպի դպրոցների ուսուցիչների ու դիրեկտորների աշխատավարձը, սահմանելով նրանց համար ամսական աշխատավարձի հետևյալ դրույքները (ռուբլիներով)․

2. Մեծահասակների բարձր տիպի՝ մինչև 150 սովորող ունեցող դպրոցների դիրեկտորների համար առաջին հոդվածի «Դ» կետում սահմանված աշխատավարձի անսահման դրույքները պարունակում են ամենօրյա յերկժամյա պարտադիր դասատուական աշխատանքի վարձատրությունը։

3. Անգրագետների ու կիսագրագետների դպրոցների այն ուսուցիչներին, վորոնք միաժամանակ այդ դպրոցների վարիչներն են հանդիսանում, վարչական աշխատանքի համար լրացուցիչ կերպով վճարվում են․

Մինչև 50 սովորող ունեցող դպրոցներում—ամսական 30 ռուբլի։

Մինչև 100 սովորող ունեցող դպրոցներում—ամսական 40 ռուբլի։

100-ից ավելի սովորող ունեցող դպրոցներում—ամսական 50 ռուբլի։

250 սովորողից ավելի ունեցող դպրոցների վարիչներն ազատվում են դասատուական աշխատանքից և վարձատրվում են համապատասխան կարգի ուսուցչի դրույքով, դրան ավելացրած ամսական 50 ռուբլի։

4. Աշխատավարձի, վերևում սահմանված դրույքներն անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչներին

վճարում են ամենօրյա 4 ժամվա փաստացի ուսումնական պարապմունքների համար, իսկ մեծահասակների բարձր տիպի դպրոցների ուսուցիչներին՝ ամենօրյա 3 ժամվա փաստացի ուսումնական պարապմունքների համար։

Դասատուական աշխատանքի լրացուցիչ ժամերը վարձատրվում են լրացուցիչ կերպով, ըստ սահմանված դրույքների համապատասխան։

5. Անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչների վրա, մեծահասակների բարձր տիպի դպրոցների ուսուցիչների և դիրեկտորների վրա համապատասխանորեն տարածել «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների մասին» ԽՍՀ Միության Ժողկոմխորհի և Համկ(բ)Կ Կենտկոմի 1936 թվականի ապրիլի 9-ի որոշման 2, 3, 9, 10 և 11-րդ հոդվածները, իսկ մեծահասակների բարձր տիպի դպրոցների ուսուցիչների վրա՝ նաև 5-րդ հոդվածը։

## III

1) 1937 թվականի փետրվարի 1-ից բարձրացնել մանկատների և ընդունարան—բաշխիչների դասախարակների և այլ աշխատողների աշխատավարձը, նրանց համար սահմանելով ամսական աշխատավարձի հետևյալ դրույքները (ռուբլիներով)․

| Աշխատողների կատեգորիան | Քաղաքներում և բան. ավաններում | | | Գյուղական վայրերում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ստաժ | | | Ստաժ | | |
| | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տար. բարձր | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տար. բարձր |
| Ա) Մանկատների դաստիարակներ և աշխատանքի գծով հրահանգիչներ | | | | | | |
| I կարգ՝ որոնք ունեն մանկավարժական միջնակարգ կրթություն . . . . | 230 | 255 | 280 | 205 | 230 | 250 |
| II կարգ՝ որոնք ունեն միջնակարգ կրթություն . . . . . . | 205 | 220 | 240 | 185 | 200 | 215 |



| Բ) Մանկատների և ընդունարան—բաշխիչների վարիչներ | Ստաժ | | |
|---|---|---|---|
| | 5 տարուց պակաս | 5-ից 10 տարի | 10 տ. բարձր |
| որոնք ունեն մինչև 100 երեխա | 320 | 350 | 380 |
| որոնք ունեն 100—150 երեխա | 330 | 360 | 390 |
| որոնք ունեն 150 երեխայից ավելի | 360 | 390 | 420 |

2) Մանկատների այն դաստիարակների և աշխատանքի գծով հրահանգիչների համար, որոնք չունեն լրիվ միջնակարգ կրթություն, աշխատավարձի դրույքները սահմանել 10 տոկոսով ցածր (2-րդ կարգի) ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցող դաստիարակների ու հրահանգիչների դրույքների համեմատությամբ, իսկ այն դաստիարակների և աշխատանքի գծով հրահանգիչների համար, որոնք ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն, աշխատավարձի դրույքները սահմանել 10 տոկոսով բարձր՝ (առաջին կարգի) միջնակարգ մանկավարժական կրթություն ունեցող դաստիարակների ու հրահանգիչների դրույքների համեմատությամբ։

3) Մանկատների ուսումնա-դաստիարակչական մասի վարիչների համար աշխատավարձի դրույքները սահմանել 20 տոկոսով ցածր մանկատների վարիչների դրույքների համեմատությամբ։

4) Աշխատավարձի՝ վերևում սահմանված դրույքները մանկատների դաստիարակներին վճարվում են օրական 5 ժամվա դաստիարակչական աշխատանքի համար, իսկ աշխատանքի գծով հրահանգիչներին՝ օրական 4 ժամվա աշխատանքի համար։

Աշխատանքի լրացուցիչ ժամերը վարձատրվում են լրացուցիչ կերպով, ըստ սահմանված դրույքին համապատասխան։

5) Հատուկ ռեժիմ ունեցող մանկատների (մտավորապես հետամնաց երեխաների, խուլ-համրերի, կույրերի և այլն) դաստիարակների ու աշխատանքի գծով հրահանգիչների և ընդունարան-բաշխիչների դաստիարակների աշխատավարձի դրույքները սահմանել 25 տոկոսով բարձր նորմալ տիպի մանկատների աշխատողների համար սահմանված աշխատավարձի դրույքների համեմատությամբ։

*6) Սահմանել, վոր մանկատների վարիչները և մանկատների ուսումնա-դաստիարակչական մասի վարիչները կարող են դասատուական աշխատանք կամ աշխատանքի գծով հրահանգիչների աշխատանք կատարել մանկատնին կից դպրոցներում միայն այն դեպքում, յեթե նրանք ունեն մանկավարժական պատրաստություն, և այն էլ օրական 2 ժամից վոչ ավելի։*

*Այդ աշխատանքը վարձատրվում է լրացուցիչ կերպով, չլինելով ուսուցչի կամ աշխատանքի գծով հրահանգչի դրույքի հաշվից։*

*7) Մանկատների և ընդունարան-բաշխիչների վերևում մատնանշված աշխատողների վրա համապատասխանորեն տարածել «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին» ԽՍՀ Միության Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թվականի ապրիլի 9-ի վորոշման 3, 10 և 11-րդ հոդվածները։*

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԽՍՀ Միության Ժողկոմխորհի նախագահ ընկեր Վ. Մ. Մոլոտովը սույն թվի փետրվարի 1-ին հեռագրով հետևյալ ցուցումներն է տվել միութենական հանրապետությունների ժողկոմխորհների նախագահներին.*

*«Սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողների շարքերը մտնելու համար պատրաստվող սովորող յերիտասարդության կողմից խորհրդային հասարակարգի հիմքերն ուսումնասիրելու նպատակով, ԽՍՀ Միության Ժողկոմխորհն առաջարկում է միութենական հանրապետությունների ժողկոմխորհներին.*

*1. 1936—37 ուսումնական տարվա մնացած ժամանակամիջոցում կազմակերպել միջնակարգ դպրոցների 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտության մանրամասն ծանոթացումը ԽՍՀ Միության նոր Սահմանադրության հետ։*

*2. 1937—38 ուսումնական տարվանից միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում, վորպես ինքնուրույն առարկա մտցնել ԽՍՀ Միության Սահմանադրության դասավանդումը»։*

«Правда» 1937 թ. փետր. 2, № 52 (6998)։



## ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ԴԱՍԱՏՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՏԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1937 Թ. ՄԱՅԻՍԻ 7-Ի № 732 ՎՈՐՈՇՈՒՄԸ

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝*

*1. Ի լրացումն 1936 թ. ապրիլի 9-ի ԽՍՀ Միության Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձի բարձրացման մասին» (ԽՍՀՄ Օր. Ժող. 1936 թ. № 19, հոդ. 163) վորոշման 6-րդ կետի— սահմանել, վոր տվյալ դպրոցում համապատասխան առարկաների ուսուցիչների բացակայության կամ առկա ուսուցչության ծանրաբեռնված լինելու հետևանքով, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների դիրեկտորները և ուսումնական մասի վարիչները կարող են տանել դասատուական աշխատանքներ օրական 2 ժամից ավելի, ըստ ամեն մի առանձին դեպքի համար՝—Մարզային բաժանում չունեցող—Միութենական հանրապետությունների Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի կողմից տրվող թույլտվությամբ, կամ այդ ունող հանրապետություն—Ժողովրդական կրթության յերկրային կամ մարզային բաժնի թույլտվությամբ։*

*Դասատուական աշխատանքը տանելու համար վոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների դիրեկտորները և ուսումնական մասի վարիչները ստանում են լրացուցիչ վարձատրություն ըստ դասատուական աշխատանքի լրիվ ժամերի քանակի, չլինելով համապատասխան կատեգորիայի ուսուցչի աշխատավարձի դրույքից։*

*2. Սահմանել, վոր վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների դասատուական աշխատանքները տարիֆավորման են յենթարկվում ժողովրդական կրթության շրջանային (քաղաքային) բաժինների կողմից։*

*(ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի 1937 թ. հունիսի 15-ի,*
*№ 11-րդ ժողովածու)։*

# ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 3-ՐԴ ՅԵՎ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՍՀՄ-Ի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍԱԳՐՔԻ ԿՈՆԿՈՒՐՍԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԺՅՈՒՐԻԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

*Միջնակարգ դպրոցի յերրորդ և չորրորդ դասարանների համար ԽՍՀ Միության պատմության լավագույն դասագրքի կոնկուրսի ժյուրին արձանագրում է, վոր կոնկուրսին ներկայացված 46 դասագրքերից մի շարք դասագրքեր տարբերվում են պատմության նախկին տիպի դասագրքերից, վորոնք դատապարտվեցին «ԽՍՀՄ դպրոցներում քաղաքացիական պատմության դասավանդման մասին» ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թվականի մայիսի 16-ի վորոշման մեջ։ Վերացական սոցիոլոգիական սխեմաների փոխարեն այդ դասագրքերի մեջ, չնայած նրանց բոլոր թերություններին, պահպանվում է պատմական դեպքերի շարադրման պատմա-ժամանակագրական հաջորդականությունը, տրվում է կարևորագույն պատմական յերևույթների նկարագրությունը, տրվում է հիմնական ժամանակագրական թվականների թվարկումը և պատմական գործիչների բնութագրերը։*

*Նշելով այս փաստը, վորպես նվաճում պատմական գիտության ճակատում, ժյուրին միևնույն ժամանակ պատմական գիտության աշխատողների ուշադրությունը հրավիրում է այդ դասագրքերի մեջ մի շարք ընդհանուր թերությունների առկայության վրա, վորոնք պետք է վերացվեն ինչպես ԽՍՀՄ պատմության ուսումնասիրման ուղղությամբ կատարվելիք հետագա աշխատանքի, այնպես և դպրոցում պատմության դասավանդման ասպարեզում։*

*1. ԽՍՀՄ Սոցիալիստական մեծ հեղափոխությունը նկարագրելիս, մի շարք դասագրքերի հեղինակներ ավաղում են այն փաստը, վոր դիկտատուրան պրոլետարիատի կողմից նվաճելու հետևանքով իշխանությունն անցավ Խորհուրդներին, վոր հաղթանակեց Խորհուրդների իշխանությունը։ Սոցիալիստական Մեծ հեղափոխության պատմական դեպքերը նկարագրվում են այնպես, վոր աշակերտների գլուխն է մտցվում այն վոչ ճիշտ միտքը, թե իբր պետական իշխանությունը ԽՍՀՄ-ում իրականացվում է անմիջականորեն Կոմունիստական կուսակցության կողմից։ Խորհուրդների դերը, վորոնք ԽՍՀՄ քաղաքական հիմքն*



*են կազմում, ավաղվում է։ ՀամԿ(բ)Կ՝ վորպես աշխատավորների առաջավոր ջոկատի և աշխատավորների կազմակերպությունների ղեկավար կորիզի, դերը խեղաթյուրվում է։ Այն մասին, թե Խորհուրդներն ինչպես են աճել ու ամրապնդվել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման հետևանքով, չի պատմվում։ Խորհուրդները մի քանի հեղինակների կողմից ուղղակի մեկնաբանվում են վորպես բազմաթիվ կազմակերպություններից մեկը՝ պրոֆմիությունների, կոմյերիտական ու պիոներական կազմակերպությունների կողքին։*

*2. Միանգամայն անթույլատրելի յե, յերբ հեղինակները փոխանակ շարադրելու Սահմանադրության այն մի քանի կարևորագույն կետերը, վոր աշակերտները պարտավոր են իմանալ և վորոնց յուրացման համար նրանք պետք է նախապատրաստված լինեն ԽՍՀՄ պատմության վողջ շարադրմամբ, ամբողջ էջեր լցնում են ճոռոմ շաղակրատությամբ աշխարհի ամենայերջանիկ յերկրի մասին, վորից աշակերտը վոչ մի պատկերացում չի ստանում, թե առհասարակ ինչ բան է Սահմանադրությունը։*

*Մի շարք հեղինակներ ԽՍՀՄ Սահմանադրությունը շարադրելիս մոռացել են հիշատակել, վոր ԽՍՀՄ քաղաքական հիմքը կազմում են աշխատավորների պատգամավորների Խորհուրդները, կամ թե չեն հիշատակել, վոր Խորհուրդների ընտրությունները Սահմանադրության համաձայն կատարվելու յեն վոչ միայն ընդհանուր, այլև հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ։*

*3. Ստալինյան այն թեզիսը, վոր Ռուսաստանին խփում եյին «ռազմական հետամնացության համար, կուլտուրական հետամնացության համար, պետական հետամնացության համար, արդյունաբերական հետամնացության համար, գյուղատնտեսական հետամնացության համար», վորը տալիս է վերջին հարյուրամյակների Ռուսաստանի պատմության կարևորագույն բանալիներից մեկը, չի ըմբռնվել դասագրքերի մի շարք հեղինակների կողմից։ Չի ցույց տրված, մասնավորապես, վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակ հենց արդյունաբերական հետամնացության հետևանքով եր, վոր ռուս զինվորները մնացին առանց արկերի, գյուղատնտեսության*

հետամնացության հետևանքով էր, վոր բանվորները մեր յերկրում մնացին առանց հացի, հասարակական կարգի հետամնացության հետևանքով բանակը ղեկավարում էին վատ սպաներ՝ կալվածատերերի տղաները։ Զատելով կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը Ռուսաստանի հետամնացության պարզ, վորոշակի ու յերեխաների համար մատչելի բնութագրից, կամ թե այդ մասում սահմանափակվելով ընդհանուր ֆրազներով, հեղինակներն աշակերտների համար դժվարացնում են ըմբռնել խորհրդային իշխանության մեծ դերը՝ մեր յերկիրը խղճուկ ու անզոր յերկրից հզոր ու առատ յերկիր դարձնելու գործում։

4. Ինչպես ռուսական ցարիզմի, այնպես և ռուսական կապիտալիզմի կախյալ դերն արևմտա-յեվրոպական կապիտալից չի նկարագրված կոնկրետ պատմական փաստերով։ Ցույց չի տրված, վոր Ռուսաստանի կախումն արևմտա-յեվրոպական կապիտալից յերկրի քաղաքական ու տնտեսական հետամնացության ուղղակի հետևանքն էր։ Զատելով արևմտա-յեվրոպական կապիտալից Ռուսաստանի ունեցած կախման բնութագիրը, հեղինակները յերեխաների համար դժվարացնում են հասկանալ Սոցիալիստական Մեծ հեղափոխության նշանակությունը, «վորպես Ռուսաստանը նրա կիսագաղութային դրությունից ազատագրողի» (Ստալին, Ժդանով և Կիրով)։

5. Հաճախ բնութագրելով նախահեղափոխական իշխանությունը, կամ թե այն «կառավարությունները», վոր դասակարգային թշնամիները կազմել էին խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար, հեղինակները խոսում են կապիտալիստների մասին այն ժամանակ, յերբ խոսքը պիտք է վերաբերի կալվածատերերին ու կապիտալիստներին։ Հայտնի յե, վոր ռուսական պետական կարգի զարգացումը հեղափոխությանը նախորդող վերջին տասնամյակներում ընթանում էր ռուսական միապետությունը բուրժուական միապետության վերածելու ուղղությամբ (բայց վորում այդ պրոցեսն այնպես էլ չավարտվեց մինչև հեղափոխությունը)—կալվածատերերն իշխանությունը բաժանում էին կապիտալիստի հետ (վորը բնավ հավասարազոր չէ իշխանությունը լրիվ կապիտալիստներին զիջելուն)։ Խոսելով «կապիտալիստների» մասին այնտեղ, վորտեղ



խոսքը պետք է վերաբերի կապիտալիստներին ու կալվածատերերին, հեղինակները միևնույն ժամանակ մոռանում են հիշատակել, վոր օկուպանտներն Ուկրաինայում առաջին հերթին գյուղացիներին ստիպեցին հողը վերադարձնել կալվածատերերին։ Դրա հետևանքով կարող է ստացվել պատմական հեռանկարների խեղաթյուրում և այն դերի նսեմացում, վոր խաղացել է բանվոր դասակարգը, վորպես գյուղացիներին կալվածատերերի լծից ազատագրողը։

6. Դասագրքերի հեղինակներն ստույգ թվերով չեն բնութագրել կալվածատիրական և գյուղացիական հողատիրության փոխհարաբերությունը։ Դրանով իսկ նսեմացվում է բանվոր դասակարգի դերը կալվածատիրական հողերը գյուղացիներին հանձնելու գործում։ Փաստ է, վոր դասագրքերից վոչ մեկը մեջ չի բերում լենինյան թվերը նախահեղափոխական հողատիրության մասին՝ «Տասը միլիոն գյուղացիական տնտեսություններն ունեն 73 միլիոն դեսյատին հող։ Քսան ութ հազար ազնիվ ու անազնիվ լենդլորդեր—62 միլիոն դեսյատին։ Ահա այն դաշտի հիմնական ֆոնը, վորի վրա ծավալվում է գյուղացիական պայքարը հողի համար» (Լենին, հատ. XI էջ 337)։

Հեղինակները, իբրև կանոն, մեջ չեն բերել նաև այն փաստը, վոր Սոցիալիստական Մեծ հեղափոխության հետևանքով գյուղացիները ԽՍՀՄ-ում ստացան ավելի քան 150 միլիոն հեկտար նախկին կալվածատիրական, արքունական ու վանքապատկան հողեր։

Հեղինակների այս մոռացկոտությունը հասցնում է այն բանին, վոր Սոցիալիստական Մեծ հեղափոխության դեպքերը շարադրելիս հաճախ վոչ թե բանվորներն են գյուղացիների հետ դաշն կնքած, հակադրվում կապիտալիստներին, վորոնք դաշինք էին կնքել կալվածատերերի հետ, այլ միայն բանվորները հակադրվում են միայն կապիտալիստներին։ Դրանով իսկ, հակառակ հեղինակների կամքին, անթույլատրելի սողանցք է բացվում Սոցիալիստական Մեծ հեղափոխության մասին հակապատմական ու հակամարքսիստական հայացքների համար, վորոնք բանվոր դասակարգին նկարագրում են վոչ թե վորպես

ամբողջ աշխատավորների առաջնորդ, այլ վորպես մի դասակարգ, վորը հեղափոխությունը կատարել է կարծեք թե միայն իրեն համար։

7. Դասագրքերի հեղինակների մեծ մասը չի կարողացել քաղաքացիական պատերազմի պատմությունը ցույց տալ վորպես մի պատերազմ, վորի մեջ ռուսական կալվածատերերն ու կապիտալիստներն իրենց գործակալության (էսէռների ու մենշևիկների) հետ միասին հանդես էյին գալիս վորպես օտարերկրյա կապիտալիզմի առաջավոր ջոկատն ու վարձկանները։ Պարզ լուսաբանում չի ստանում ԽՍՀՄ պատմության համար կարևորագույն այն փաստը, վոր ռուսական կապիտալիստներն ու կալվածատերերը դեռ 1917 թվականի վերջերին պարտություն կրելով ԽՍՀՄ համարյա ամբողջ տերիտորիայի վրա, վորոշեցին իրենց յերկիրն ու նրա անկախությունը վաճառել գերմանական իմպերիալիստներին, ապա Անտանտի իմպերիալիստներին։ Դրա հետևանքով ԽՍՀՄ քաղաքացիական պատերազմի նշանակությունն իջեցվում է՝ հասցվելով մինչև զուտ ռուսական մի դեպքի դերի և նսեմացվում է մեր հեղափոխության միջազգային բնույթը։ Վոչ բավարար պարզությունն այդ հարցի շարադրման ասպարեզում ստվերում է բոլշևիկյան կուսակցության ու խորհրդային իշխանության դերը, վորոնք ամբողջ ժողովրդին վոտքի հանեցին հայրենիքը պաշտպանելու օտարերկրյա բուրժուական պետությունների հարձակումից (գերմանական արշավանքը 1918 թվականին, Անտանտի յերեք արշավանքները), մեր յերկիրը փրկեցին օտարերկրյա ստրկությունից, իմպերիալիստական պետությունների կեղեքումից, ապահովեցին պետական անկախությունը, պահպանեցին իրենց յերկիրը («Վլադիվոստոկը հեռու յե, բայց չէ՞ վոր այդ քաղաքը մերոնցից է»։ Լենին, հատ. XXVII էջ 362) և պայմաններ ստեղծեցին ԽՍՀՄ ժողովուրդների զարգացման ու բարգավաճման համար։

8. 1917—1920 թվականների պատմությանը նվիրված բաժինը, իբրև կանոն, տառապում է այն խոշոր թերությամբ, վոր նա այդ ժամանակաշրջանի պատմությունը հանգեցնում է համարյա բացառապես քաղաքացիական պատերազմի, և պատկերացում չի տալիս յերկրի հասարակական կարգի այն վերա-



կառուցման մասին, վոր խորհրդային իշխանությունն իրականացրեց այդ ժամանակաշրջանում։ Անհրաժեշտ է պատմել թեկուզ և հիմնականի մասին, այսինքն այն մասին, վոր խորհրդային իշխանությունն այդ ժամանակաշրջանում՝

ա) վոչնչացրեց առաջ կապիտալիստներին պատկանող ֆաբրիկների ու գործարանների մասնավոր սեփականությունը և հաստատեց ֆաբրիկների, գործարանների, բանկերի և այլոց սոցիալիստական, համաժողովրդական, պետական սեփականություն,

բ) կալվածատիրական, վանքապատկան, արքունական հողերը հանձնեց գյուղացիներին, ամբողջ հողը ԽՍՀՄ-ում հայտարարելով ազգայնացված,

գ) ԽՍՀՄ ազգություններին տվեց ռուս ժողովրդին համահավասար իրավունքներ, ձեռնամուխ լինելով ազգային ինքնուրույն կամ ավտոնոմ հանրապետությունների ստեղծմանը,

դ) ջարդելով բուրժուազիայի ու կալվածատերերի պետական մեքենան, սկսեց կառուցել նոր պետական մեքենա՝ Խորհուրդների հիման վրա։

9. Հեղինակների մեծ մասը ԽՍՀ Միությունում սոցիալիստական հասարակության կառուցման դարաշրջանն ավելի շատ նկարագրում է բացականչական նշաններով, հիացմունքի բացականչություններով ու զանազան հուզիչ անեկդոտներով, յերգերով ու ընդհանուր բնութագրություններով՝ դրան գումարած առաջին հնգամյակի 3—4 տարվա ժողովրդականություն վայելող առաջնեկների թվարկումը, փոխանակ ստույգ, պարզ ու հասարակ ձևով ցույց տալու, թե ինչպես յերկու հնգամյակների հետևանքով ստեղծված է հզոր արդյունաբերություն, գյուղացիները համախմբվել են կոլտնտեսություններում, գյուղատնտեսությունը փոխադրվել է տրակտորային տեխնիկայի բազայի վրա, իսկ բանվորա-գյուղացիական պետությունը պաշտպանելու համար ստեղծված է հզոր, տեխնիկապես հագեցված Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակ։

Հեղինակների մեծ մասը նաև չի կարողացել առանց ընդհանուր շարադրանքից կտրելու, տալ բանվորների ու գյուղացիների թշնամիների դեմ այն անընդհատ պայքարի նկարագիրը, վոր հարկ են ունեցել մղելու խորհրդային իշխանությունն ու

ՀամԿ(բ)Կ-ը, մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակն ապահովելու համար (հացամթերումների կոլխոզային սաբոտաժը, շախտեցիների, արդյունաբերական կուսակցության վնասարարությունը, դավադրությունները, ԽՍՀՄ-ն օտարերկրյա իմպերիալիստներին վաճառելու փորձեր՝ իմպերիալիզմի տրոցկիստական գործակալների կողմից և այլն)։

10. Ժյուրին, վորպես դասագրքերի հեղինակների խոշոր նվաճում, նշում է այն փաստը, վոր նրանց դասագրքերը դադարել են հենց միայն վելիկոռուս ժողովրդի պատմությունը լինելուց, սակայն վորպես պատմության սուբյեկտներ նաև մյուս ժողովուրդներին մտցնելու խնդիրը, ժողովուրդների, վորոնք ստրկացված եյին ցարական միապետության կողմից և վորոնց ազգային ճնշումից ազատագրեց Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը, լուծված չե դասագրքերի վոչ մի հեղինակի կողմից։

11. Սխոլաստիկ մեթոդների վերաճումները, վորոնք փոխարինում են պատմական դեպքերի մարքսիստական լուսաբանմանը, յառլիկներ փակցնելը զանազան հասարակական-տնտեսական ֆորմացիաներին ու դեպքերին, իրենց արտահայտությունն են գտնում, որինակ, ֆրանսիական բուրժուական հեղափոխության պատմական նշանակությունը, հեղափոխություն, վորը հաշիվ տեսավ աբսոլուտիզմի ու ֆեոդալիզմի հետ այնպես, ինչպես վոչ մի այլ բուրժուական հեղափոխություն, և յակոբինականների, վորպես իրենց ժամանակվա հեղափոխական դասակարգի—բուրժուազիայի ամենից ավելի վճռական ներկայացուցիչների դերը—հասկանալու ու գնահատելու անկարողության մեջ Յակոբինականները դասագրքերի մի քանի հեղինակների կողմից պատկերացվում են վորպես միայն ինքնուրույն՝ վարպետների ու մանր խանութպանների շահերի ներկայացուցիչներ, մյուս հեղինակների կողմից յակոբինյան դիկտատուրան պատկերացվում է վորպես մի դիկտատուրա, վորն իբր թե վոչինչ չեր կարող տալ ժողովրդին, վոմանց կողմից էլ՝ վորպես բուրժուազիայի դեմ ուղղված մի իշխանություն։

Զտալով ֆեոդալիզմի դեմ պայքարելու գործում ֆրանսիական բուրժուական հեղափոխության ունեցած նվաճման բնութագիրը, հեղինակները միևնույն ժամանակ չեն կարողացել բնութագրել ֆրանսիական բուրժուական հեղափոխության սահմանափակվածությունը, հեղափոխության, վորը դասակարգային տիրապետության ու շահագործման մեկ ձևը փոխարինեց դասակարգային տիրապետության ու շահագործման այլ, էլ ավելի առաջադիմական ձևով։

12. Հակապատմական, վոչ մարքսիստական հայացքների վերաճումներ կոնկուրսի ներկայացված դասագրքերի հեղինակների մոտ հանդիպում են համարյա յուրաքանչյուր քայլափոխում, մինչ խորհրդային ժամանակաշրջանի ԽՍՀՄ նկարագրության ժամանակ.

ա) հեղինակներն իդեալականացնում են նախաքրիստոնեական հեթանոսությունը, ըստ վորում նրանք չեն հասկանում այն հասարակ փաստը, վոր քրիստոնեության մուտքն առաջադիմություն եր հեթանոսական բարբարոսության համեմատությամբ, վոր քրիստոնեության հետ միասին սլավոններն ստացան գիր և բյուզանդական ավելի բարձր կուլտուրայի մի քանի տարրեր,

բ) հեղինակներն անտես են առնում Ռուսիայի մկրտությունից հետո առաջին դարերում վանքերի ունեցած առաջադիմական դերը, վորպես գիր տարածողներ և կոլոնիզացիայի բազաներ,

գ) հեղինակները վոչ մի դրական դեր չեն տեսնում Խմելնիցկու XVII դարի գործունեության մեջ, Ուկրաինան պանական Լեհաստանի և սուլթանական Թյուրքիայի կողմից օկուպացիայի յենթարկելու դեմ նրա մղած պայքարի մեջ։ Վրաստանի, որինակ, XVIII դարի վերջերին Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու փաստը, այնպես, ինչպես Ուկրաինայի՝ Ռուսաստանի իշխանության տակ անցնելու փաստը հեղինակների կողմից դիտվում է վորպես բացարձակ չարիք, այն ժամանակվա պատմական կոնկրետ պայմանների հետ նրա ունեցած կապից դուրս։ Հեղինակները չեն տեսնում, վոր Վրաստանի առջև այն ժամանակ կանգնած եր յերկընտրանք—կամ կլանված լինել շահական Պարսկաստանի և սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի հովանավորության տակ, այնպես, ինչպես Ուկրաինայի առջև այն ժամանակ կանգնած եր յերկընտրանք—կամ կլանված լինել պա-

նական Լեհաստանի ու սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի իշխանության տակ: Նրանք չեն տեսնում, վոր յերկրորդ հեռանկարն, այնուամենայնիվ, փոքրագույն չարիքն եր,

դ) մինչև 20-րդ դարի սկիզբը տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունների լուսաբանման ժամանակ չափազանցվում է այդ ապստամբությունների կազմակերպվածությունն ու գիտակցականությունը: Դասագրքերի հեղինակներն ըստ յերևույթին բավականաչափ հաշիվ չեն տալիս իրենց այն մասին, վոր գյուղացիները բանվոր դասակարգի ղեկավարությունից դուրս ընդունակ եյին միայն տարերային ու անկազմակերպ շարժման: Հեղինակներն ըստ յերևույթին բավականաչափ չեն ըմբռնել Լենինի կողմից տասնյակ անգամ կրկնվող այն միտքը, վոր գյուղացիական հեղափոխական շարժմանը կազմակերպված բնույթ տվին միայն բանվոր դասակարգն ու բոլշևիկյան կուսակցությունը, յերբ նրանք ամրապնդվեցին ու աճեցին կալվածատերերի և կապիտալիստների դեմ մղած բազմամյա պայքարում: Պատմական դեպքերի նկատմամբ վոչ բավարար մարքսիստական մոտեցում ունենալը հասցնում է այն բանին, վոր մի քանի հեղինակներ իդեալականացնում են նույնիսկ այնպիսի ռեակցիոն շարժումները, ինչպիսին եր օրինակ՝ Ստրելեցների խռովությունն ուղղված Պետրոսի փորձերի դեմ, վորոնցով նա ուզում եր քաղաքակրթել իրեն ժամանակակից Ռուսաստանը,

յե) հեղինակների մեծ մասը, իբրև կանոն, պատմական ճիշտ գնահատական չի տալիս Չուդ լճի վրա գերմանական ասպետների դեմ նովգորոդցիների մղած կռվին, յերբ կասեցվեց գերմանական օկուպանտների առաջխաղացումը դեպի Արևելք (Տևտոնական ավազակային միաբանությունը— «շուն-ասպետները», ինչպես անվանել է նրանց Կարլ Մարքսը), վորոնք իրականացնում եյին գաղութացումն իրենց կողմից հնազանդեցված ժողովուրդների գլխովին բնաջնջման ու կողոպտման միջոցով: ԽՍՀՄ պատմության մեջ տեղի ունեցած հենց այդ դեպքի մարքսիստական գնահատականի բացակայությունն առավել ևս անթույլատրելի յե, վորովհետև դրա նկատմամբ կա Մարքսի վորոշակի գնահատականը՝ «1242 թվականին Ալեքսանդր Նևսկին



հանդես է գալիս գերմանական ասպետների դեմ, նրանց ջախջախում է Չուդ լճի սառույցների վրա այնպես, վոր [illegible] վերջնականապես դեն են շպրտվում ռուսական սահմաններից»:

* * *

Կառավարական Հանձնաժողովի ժյուրին վորոշում է՝

1. Առաջին մրցանակ չտալ կոնկուրսին ներկայացված դասագրքերի հեղինակներից վոչ մեկին:

2. Յերկրորդ մրցանակը—75 հազար ռուբլի, հատկացնել Մոսկվայի պետական մանկավարժական ինստիտուտի ԽՍՀՄ պատմության ամբիոնի կողմից պրոֆեսոր Ա. Վ. Շեստակովի խմբագրությամբ կազմված դասագրքի հեղինակներին:

3. «ԽՍՀՄ պատմության համառոտ դասընթացը»՝ պրոֆեսոր Ա. Վ. Շեստակովի խմբագրությամբ, համարել Կառավարական Հանձնաժողովի կողմից հավանության արժանացած և հանձնարարել վորպես դասագիրք յերրորդ և չորրորդ դասարանների համար:

ԿՈՆԿՈՒՐՍԻ ԺՅՈՒՐԻ

„Правда" от 22 августа 1937 г.

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺՈՂԿՐԹԲԱԺՆԻ 1938 ԹՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով ժողովրդական կրթության Մոսկվայի քաղաքային բաժնի ս. թ. նոյեմբեր 5-ի կարգադրությունը և ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի դեկտեմբերի 15-ի հրամանը Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի այդ կարգադրության առթիվ, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը սահմանեց հետևյալը.

Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի ս. թ. նոյեմբերի 5-ի այն կարգադրությունը (ընկ. Շապովալենկոյի ստորագրությամբ), վոր միջնակարգ և տարրական դպրոցներում «գերազանց» և «լավ» առաջադիմություն ունեցողների թիվը դասել

միայն այն սովորողներին, վորոնք ունեն «գերազանց» և «լավ» գնահատական վոչ միայն հիմնական առարկաներից, այլ նաև յերգեցողությունից, նկարչությունից, գծագրությունից և ֆիզկուլտուրայից, հակասում է կուսակցության և կառավարության վորոշումներին, ըստ էության հանդիսանում է հակամանկավարժական կոպիտ խեղաթյուրում, վորն անարդարացի կերպով վիրավորում է սովորողների մեծ մասին, վորոնք հիմնական առարկաներից ունեն «գերազանց» և «լավ» գնահատական։

Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի այդ կարգադրությունը սխալ է նաև այն պատճառով, վոր այդ կարգադրության համաձայն վոչ-առաջադեմների շարքն են դասվում այն սովորողները, վորոնք վատ գնահատական են ստացել այնպիսի առարկաներից, թեկուզ վորևէ մեկից, ինչպես յերաժշտությունը, նկարչությունը, գծագրությունը, ֆիզկուլտուրան, վորն անթույլատրելի յե։

ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի (ընկ. Տյուրկին) ս. թ. դեկտեմբերի 15-ի հրամանը, վորը միայն մասամբ է չեղյալ համարում Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի նոյեմբերի 5-ի հիշյալ կարգադրությունը, ըստ էության մի փորձ է՝ սքողելու և ծածկելու Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի սխալը այն ժամանակ, յերբ լուսժողկոմատը պարտավոր եր մերկացնել Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի հակամանկավարժական սխալը և արագորեն լիկվիդացիայի յենթարկել այն։

Վերոհիշյալի հիման վրա ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը՝

1. Առաջարկեց ՌՍՖՍՀ Ժողկոմխորհին՝ չեղյալ հայտարարել Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի ս. թ. նոյեմբերի 5-ի կարգադրությունը, համարելով այն հակամանկավարժական կոպիտ խեղաթյուրում։

2. Նկատողություն անել Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի վարիչ ընկ. Սերգեյեվային և Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի դպրոցական բաժնի վարիչ ընկ. Շապովալենկոյին, վորոնք անմիջականորեն պատասխանատու յեն Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի նոյեմբերի 5-ի կարգադրությունն անելու համար։



3. Առաջարկեց Մոսկվայի Խորհրդի նախագահությանը՝ հետազոտել Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի նոյեմբերի 5-ի հրամանը տրվելու փաստը, նման անթույլատրելի փաստերի կրկնումը կանխելու համար։

4. Նշեց ՌՍՖՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսար ընկ. Տյուրկինի դիրքի անսկզբունքայնությունը Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի նոյեմբերի 5-ի վնասակար, հակամանկավարժական կարգադրությունը չեղյալ հայտարարելու հարցում և ի ցույց դրեց նրան լուսժողկոմատի դեկտեմբերի 15-ի սխալ, գործը խճճող հրամանը տալու համար։

ՌՍՖՍՀ Ժողկոմխորհին առաջարկված է Լուսժողկոմատի դեկտեմբերի 15-ի հիշյալ հրամանը նույնպես չեղյալ հայտարարել։

5. ՌՍՖՍՀ Ժողկոմխորհին առաջարկված է ցուցում տալ ՌՍՖՍՀ Լուսժողկոմատին, վորպեսզի առաջադիմությունը գնահատելիս, ինչպես նաև դպրոցն ավարտողներին բաց թողնելիս գերազանցիկներ համարել այն սովորողներին, վորոնք բոլոր հիմնական առարկաներից ունեն «գերազանց» գնահատական, անկախ յերաժշտության, յերգեցողության, ֆիզկուլտուրայի, նկարչության գնահատականներից։

Առաջադիմության գնահատականի այս կարգն առաջարկված է կիրառել նաև սովորողների մյուս կատեգորիաների վերաբերմամբ, այսինքն՝ վոչ-առաջադեմներ չհամարել այն սովորողներին, վորոնք անբավարար գնահատականներ ունեն յերաժշտությունից, յերգեցողությունից, ֆիզկուլտուրայից, նկարչությունից։

* * *

ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշման հիման վրա ՌՍՖՍՀ Ժողկոմխորհը չեղյալ հայտարարեց Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի ս. թ. նոյեմբերի 5-ի կարգադրությունն ու ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի դեկտեմբերի 15-ի կարգադրությունը, և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշման 5-րդ կետին համապատասխան ՌՍՖՍՀ Լուսժողկոմատին ցուցումներ տվեց սովորողների առաջադիմության գնահատականի մասին։

«Правда» от 21 декабря 1938 г. № 350 (7675)

## ՀԱՄԿ(Բ)Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ 3-ՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ԱՌԹԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆԱՁԵՎԻՑ

...գ) Ընդհանուր միջնակարգ ուսուցման իրականացումը քաղաքում և ընդհանուր յոթնամյա միջնակարգ ուսուցման ավարտումը գյուղում ու բոլոր ազգային հանրապետություններում՝ ընդարձակելով յերեխաների ընդգրկումը տասնամյա ուսուցմամբ, այն հաշվով. վոր քաղաքներում և բանվորական ավաններում տարրական և միջնակարգ դպրոցներում սովորողների թիվը ավելանա՝ 8,6-ից հասնելով մինչև 12,4 միլիոնի, իսկ գյուղական վայրերում՝ 20,8-ից մինչև 27,7 միլիոնի:

ե) ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-ներում սովորողների կոնտինգենտը բարձրացնել մինչև 650 հազար մարդու, այն հաշվով, վոր ամենամոտ տարիներում գլխավոր ուշադրությունը դարձված լինի բարձրագույն կրթության վորակի բարձրացման վրա:

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

1) Ցուցակ այն ուսումնական հիմնարկների, վորոնց ավարտումը հավասարեցվում է մանկավարժական ուսումնարանի ավարտմանը.

Ա. Նախահեղափոխական շրջան

1. Ուսուցչական սեմինարիաներ—արական և իգական:

2. Զեմստվոյական և մինիստրական ուսուցչական դպրոցներ:

3. Ծխական ուսուցչական դպրոցներ:

4. 8-րդ մանկավարժական դասարան ունեցող իգական գիմնազիաներ:

5. Արական գիմնազիաներ և ռեալական դպրոցներ ավելական, առնվազն 3 ամսվա մանկավարժական դասընթացներ անցնելու պայմանով,



6. Ուսուցչական կոչում տվող եքստերնատ ուսումնական շրջաններին և մանկավարժական ուսումնական հիմնարկներին կից:

7. 1872 թվի կանոնադրության համաձայն կազմակերպված քաղաքային դպրոցներ և բարձր-տարրական դպրոցներ, 3-ամյա մանկավարժական դասընթացներ ավարտելու պայմանով:

8. Մանկավարժական դասարան ունեցող (ռուսական յեպարխիալ) թեմական դպրոցներ:

*) 9. Սանասարյան դպրոց (Կարին):
*) 10 Յերամյան դպրոց (Վան):
*) 11. Կենտրոնական վարժարան (Պոլիս):
*) 12. Արամյան վարժարան (Սեբաստիա):
*) 1 . Իդադիյե դպրոց (Թյուրքական):
*) 14. Ռոբերտ Քոլեջ (Պոլիս):
*) 15. Յեփրատ Քոլեջ (Խարբերդ):
*) 16. Ամերիկյան Հայ-Սկուլ 11-ամյա (Վան):
*) 17. Գերմանական յերկսեռ դպրոց 10-ամյա (Վան):
*) 18. Կենտրոնական «Հայկազյան» դպրոց 11-ամյա (Վան):
*) 19. Թուրքական Սուլթանիյե դպրոցներին հավասարեցրած Քոլեջներ:

20. Արղության դպրոց:
21. Հովնանյան դպրոց (Թիֆլիս):
22. Գայանյան դպրոց (Թիֆլիս):
23. Գայանյան դպրոց (Յերևան):
24. Հռիփսիմյան դպրոց (Բագու):
25. Հռիփսիմյան գիմնազիա (ռուսաց) (Յերևան):
26. Թեմական դպրոցներ (Յերևան, Շուշի և Նախիջևան):
27. Գևորգյան ճեմարան դասարանական բաժին (Վաղպատ):
28. Լազարյան ճեմարան դասարանական բաժին (Մոսկվա):
29. Ներսիսյան դպրոց (Թիֆլիս):

Բ. Հետհեղափոխական շրջան

1. Մանկավարժական թեքումով 9-ամյա դպրոցներ՝ յերկարատև, առնվազն 3-ամսվա մանկավարժական դասընթացներ անցնելու պայմանով:

2. 10-ամյա դպրոցներ մանկավարժական դիսցիպլիններ անցած լինելու և այդ դիսցիպլիններից մանկավարժական տեխնիկումներին կից սահմանված քննությունները տված լինելու պայմանով։

3. Մանկավարժական ուսումնարանի (տեխնիկումի) հեռակա դասընթացներ, այդպիսիք ավարտելու մասին դիպլոմ ստացած լինելու պայմանով։

## 2) Ցուցակ այն ուսումնական հիմնարկների, վորոնց ավարտումը հավասարեցվում է ընդհանուր միջնակարգ կրթության

### Ա. Նախահեղափոխական շրջան

1. Արական գիմնազիա 7 դասարան։
2. Ռեալական դպրոց 7 դասարան։
3. Իգական գիմնազիա 7 դասարան
4. Հոգևոր սեմինարիա (ռուսական)։
5. Ռուսական յեպարխիալ դպրոց։
6. 1872 թվի կանոնադրության համաձայն կազմակերպված քաղաքային դպրոցներ և բարձր-տարրական դպրոցներ (նրանցից հետո տարրական դպրոցի ուսուցչի կոչում տվող միամյա ուսուցչական դասընթացներ անցնելու պայմանով)։

### Բ. Հետհեղափոխական շրջան

1. 9-ամյա և 10-ամյա դպրոցներ } վոչ մանկ. թեքումով
2. Միջնակարգ դպրոց }
3. Այլ (վոչ-մանկավարժական) տեխնիկումներ և ուսումնարաններ։

## 3) Ցուցակ այն ուսումնական հիմնարկների, վորոնց ավարտումը հավասարեցվում է ուսուցչական ինստիտուտների ավարտմանը

### Ա. Նախահեղափոխական շրջան

1. Ուսուցչական ինստիտուտներ։
2. Հանրակրթական մանկավարժական դասընթացներ Մոսկվայում, վոր հիմնել է Ալֆերովը։



3. Մոսկվայի մանկավարժական դասընթացներ Տիխոմիրովի անվան դաստիարակչուհիների և ուսուցչուհիների ընկերության կից։
4. Պետերբուրգի նախկին Մարիինսկի գերադիտողական կանանց մանկավարժական ինստիտուտ։
5. Պետրոգրադի Մարիինսկի իգական գիմնազիային կից մանկավարժական դասընթացներ ռուսաց լեզվի, մաթեմատիկայի, աշխարհագրության և օտար լեզուների մասնագիտություններով։
6. Ուսումնական շրջաններին և ուսուցչական ինստիտուտներին կից դասընթացներ միջնակարգ ուսումնական հիմնարկների և բարձր-տարրական դպրոցների դասատուների համար։
7. Այն անձինք, վորոնք սահմանված կարգով իրավունք են ստացել դասավանդելու բարձր տիպի (նախահեղափոխական) դպրոցներում, եքստերնատ քննություն տալով ուսումնական հիմնարկների լրակատար դասընթացի համար, վորոնք իրավունք են տալիս հանրակրթական առարկաներ դասավանդել բարձր տիպի դպրոցներում։
8. Այն անձինք, վորոնք ավարտել են բարձրագույն ուսումնական հիմնարկների յերեք կուրս։
9. Օդեսայի կանանց մանկավարժական դասընթացներ։
10. Պետրոգրադի Լոխվեցկի—Սկալոնի նոր լեզուների կանանց դասընթացներ։
11. Պետրոգրադի Բոբրիշչևա—Պուշկինայի նոր լեզուների կանանց մասնագիտական դասընթացներ։
12. Մոսկվայի Պոլտորացկայի օտար լեզուների կանանց դասընթացներ։
13. Մոսկվայի Ստեպանովայի օտար լեզուների դասընթացներ։
14. Պետրոգրադի Լավրենտյևայի օտար լեզուների դասընթացներ։
15. Պետրոգրադի ֆրանսերեն լեզվի կառավարական դասընթացներ։
16. Պետրոգրադի Նիկոլայևսկի և Ալեքսանդրովսկի, Մոսկվայի Յեկատերինսկի կանանց ինստիտուտներին կից օտար լեզուների դասընթացներ։
17. Մոսկվայի Ստրոգանովսկի, Պետրոգրադի Շտիգլիցի, Լոձի, Պենզայի և այլ (նկարչական) գեղարվեստական դպրոցներ։

18. Վարշավայի նոր լեզուների մանկավարժական դասընթացներ։

19. Պետրոգրադի օտար լեզուների Դեմիդովյան դասընթացներ։

*) 20. Վանի «Վարժապետանոց»։

*) 21. Պոլսի «Ուսուցչանոց»։

*) 22. Վենետիկի (Իտալիա) «Մուրադ-Ռաֆայելյան» դպրոց՝

### Բ. Հետհեղափոխական շրջան

1. Ժողովրդական կրթության ինստիտուտներ։
2. Ժողովրդական լուսավորության ինստիտուտներ։
3. Ժողովրդական կրթության գործնական ինստիտուտներ։
4. Կոմբուհեր։
5. Բարձրագույն ուսումնական հիմնարկի յերեք կուրս։

## 4. Ցուցակ այն ուսումնական հիմնարկների, վորոնց ավարտումը հավասարեցվում է բարձրագույն ուսումնական հիմնարկների ավարտմանը

### Ա. Նախահեղափոխական շրջան

1. Բոլոր համալսարանները։
2. Պետրոգրադի պատմա-լեզվաբանական ինստիտուտ։
3. Նիժնի Բեզբորոդկայի պատմա-լեզվաբանական ինստիտուտ։
4. Պետրոգրադի Բեստուժևյան բարձրագույն դասընթացներ։
5. Ժողովրդական լուսավորության մինիստրության գերատեսչության կանանց բարձրագույն դասընթացներ (պատմա-լեզվաբանական և ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետներ)։
6. Խարկովի աշխատավոր կանանց փոխօգնության ընկերության կանանց մասնավոր բարձրագույն դասընթացներ։
7. Շելապուտինսկի ինստիտուտ։
8. Պետրոգրադի Պսիխո-նեվրոլոգիական ինստիտուտ։
9. Տեխնոլոգիական ինստիտուտներ։
10. Պոլիտեխնիկ ինստիտուտներ։



11. Մոսկվայի բարձրագույն տեխնիկական դպրոց։
12. Լեռնային ինստիտուտներ։
13. Ելեկտրո-տեխնիկական ինստիտուտներ։
14. Պետրովսկի—Ռազումովսկի ակադեմիա։
15. Նովո-Ալեքսանդրիայի գյուղատնտեսական ինստիտուտ։
16. Պետրոգրադի մանկավարժական ակադեմիա։
17. Պետրոգրադի և Կիևի Ֆրեբելյան բարձրագույն դասընթացներ։
18. Մոսկվայի գեղարվեստական ընկերության կերպարվեստի, քանդակագործության և ճարտարապետության դպրոց (նկարչության համար)։
19. Կոնսերվատորիաները (յերաժշտության համար)։
20. Պետրոգրադի գեղարվեստական ակադեմիային կից մանկավարժական գեղարվեստական դասընթացները (նկարչության համար)։
21. Մոսկվայի Գիրցեյի կանանց բարձրագույն դասընթացներ։
22. Հոգևոր ակադեմիաներ (պատմական և գրական բաժիններ)։
23. Արտասահմանյան բարձրագույն ուսումնական հիմնարկները (մասնագիտական առարկաների համար)։
24. Եջմիածնի Գևորգյան ճեմարան (լսարանը)։

### Բ. Հետհեղափոխական շրջան

1. Բոլոր պետական համալսարանները։
2. Մանկավարժական ինստիտուտները և Ուկրաինայի ԽՍՀ-ի ժողովրդական կրթության ինստիտուտները։
3. Կրուպսկայայի անվան կոմունիստական դաստիարակության ակադեմիան։
4. Բոլոր բարձրագույն մասնագիտական ուսումնական հիմնարկները (մասնագիտական առարկաների համար)։
5. Գիշերային մանկավարժական ինստիտուտները։
6. Հեռակա մանկավարժական ինստիտուտները։
7. Այն անձինք, վորոնք եքստերն քննություններ են տվել վերոհիշյալ ուսումնական հիմնարկներից մեկն ու մեկի գծով։

8. Մոսկվայի 2-րդ Պետհամալսարանին կից բարձրագույն գիտա-մանկավարժական դասընթացները։

9. Սվերդլովի անվան Կոմունիստական Համալսարանը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Ռազմական առարկաների դասատուները, վորոնք ավարտել են ռազմական դպրոցներ և Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի հրամանատարական կազմի կատարելագործված կուրսերը, ինչպես նաև նախկին կադետական կորպուսները և ռազմական դպրոցները՝ առնվազն յերկու տարվա ուսումնական ժամկետով, հավասարեցվում են ավարտական միջնակարգ կրթություն ունեցողներին։

Ռազմական առարկաների այն դասատուները, վորոնք ավարտել են Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի ակադեմիաները, հավասարեցվում են ավարտական բարձրագույն կրթյություն ունեցողներին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 2. Աստղով նշանակված դպրոցներն ավարտած լինելն այն դեպքում ե իրավունք տալիս ուսուցչի անձնական կոչում ստանալու, յեթե տվյալ ուսուցիչն այդ դպրոցներից մեկն ավարտել ե մինչև 1915 թիվը։

## ՑՈՒՑԱԿ ՀԽՍՀ ԱՅՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՈՐՈՆՑ ԻՐԱՎՈՒՆՔ Ե ՎԵՐԱՊԱՀՎՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՑԻԱՅԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

### 1. Մանկավարժական ուսումնարաններ

1. Յերևանի մանկավարժական ուսումնարան։
2. Լենինական մանկ. ուսումնարան։
3. Կիրովականի մանկ. ուսումնարան։
4. Գորիսի մանկ. ուսումնարան։
5. Ն. Բայազետի մանկ. ուսումնարան։
6. Վաղպատի մանկ. ուսումնարան։
7. Կալինինոյի ռուսական մանկավարժական ուսումնարան։
8. Յերևանի Ադրբեջանական մանկավարժական ուսումնարան։

### 2. Մանկավարժական ինստիտուտներ

1. Յերևանի մանկավարժական ինստիտուտ։
2. Յերևանի յերկամյա մանկավարժական ինստիտուտ։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Յերկու խոսք . . . . . . 4

1931 թիվ

2. «Տարրական և միջնակարգ դպրոցի մասին» (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումը) . . . . 5

1932 թիվ

3. Պիոներական կազմակերպության մասին (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 21-ի վորոշումը)։ . . . . . 17

4. Տարրական և միջնակարգ դպրոցի ուսումնական ծրագրերի և ռեժիմի մասին։ (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. օգոստոսի 25-ի վորոշումը։ . . . . . 27

1933 թիվ

5. Տարրական և միջնակարգ դպրոցի դասագրքերի մասին (ՀամԿ(բ)ԿԿենտկոմի 1933 թ. փետրվարի 12-ի վորոշումը)։ . . 37

1934 թիվ

6. Դպրոցականներին և պիոներներին հասարակական-քաղաքական առաջադրություններով ծանրաբեռնելու մասին (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. ապրիլի 24-ի վորոշումը) . . . 40

7. ԽՍՀՄ-ի տարրական և միջնակարգ դպրոցի կառուցվածքի մասին (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումը)։ . . . . . . . 42

8. ՀամԿ(բ)Կ XVII Համագումարի վորոշումից «ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յերկրորդ հնգամյա պլանի մասին (1933—1937 թ. թ. ընկերներ Մոլոտովի և Կույբիշևի տված զեկուցումների առթիվ)։ . 43

9. ԽՍՀՄ-ի դպրոցներում քաղաքացիական պատմություն դասավանդելու մասին։ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումը)։ . . . . 44

10. Տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում ընդհանուր պատմության և ԽՍՀՄ պատմության տարրական դասընթաց մտցնելու մասին (ՀամԿ(բ)Կ ԿԿ 1934 թ. հունիսի 9-ի վորոշումը)։ . 45

11. ԽՍՀՄ-ի տարրական և միջնակարգ դպրոցներում աշխարհագրություն դասավանդելու մասին։(ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումը). . . . 46

Гос. Публ. Б...
ՀՍՍՀ-...
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

## 1935 թիվ

13. Երեխաների անապահովությունն ու անխնամությունը վերացնելու մասին։ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը)։ 49

14. Տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի համար դասագրքեր հրատարակելու և վաճառելու մասին։ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1935 թ. օգոստոսի 7-ի որոշումը) . . 57

15. Ուսման աշխատանքը կազմակերպելու և տարրական, ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցի ներքին կարգ ու կանոնի մասին։ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1935 թ. սեպտեմբերի 3-ի որոշումը)։ . . . . . . . . 62

## 1936 թիվ

17. Պատմական գիտությունների բնագավառում (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմում)։ . . . . . 70

18. Դիտողություններ «Նոր պատմություն» դասագրքի կոնսպեկտի վերաբերյալ։ Ի. ՍՏԱԼԻՆ, Ա. ԺԴԱՆՈՎ, Ս. ԿԻՐՈՎ . . 73

19. Դիտողություններ «ԽՍՀՄ-ի պատմություն» դասագրքի կոնսպեկտի վերաբերյալ Ի. ՍՏԱԼԻՆ, Ա. ԺԴԱՆՈՎ, Ս. ԿԻՐՈՎ . . 76

20. Տարրական դպրոցի համար ԽՍՀՄ պատմության տարրական դասընթացի՝ ընդհանուր պատմության համառոտ տեղեկություններ պարունակող լավագույն դասագիրք կազմելու կոնկուրս կազմակերպելու մասին։ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը) . . 80

21. Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին։ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի որոշումը) . . . . . 82

22. Ժողովրդական լուսավորության շրջանային, օկրուգային ու քաղաքային բաժինների վարիչների նշանակման, տեղափոխման ու աշխատանքից ազատելու կարգի մասին։ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 10-ի որոշումը) . . . 90

23. Ուսուցիչների համար անձնական կոչումներ մտցնելու և ուսուցիչներ, դպրոցի վարիչներ ու դիրեկտորներ նշանակելու կարգի մասին (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 10-ի որոշումը)։ 91

24. Տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցիչների անձնական կոչումների մասին։ (ԽՍՀՄ Կենտգործկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. ապրիլի 10-ի որոշումը)։ . . . . 93

25. Ուսուցիչների աշխատավարձը վճարելու կարգի մասին ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1936 թ. ապրիլի 10-ի որոշումը) . . 96

26. Լուսժողկոմատների սիստեմում յեղած մանկաբանական խեղաթյուրումների մասին։ (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. հուլիսի 4-ի որոշումը) . . . . . . 98





7. Դպրոցական գրադարանների ցանցը ծավալելու և նրանց համար գրականություն հրատարակելու մասին։ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1936 թ. նոյեմբերի 16-ի որոշումը) . . . . 103

28. Տեխնիկումների, բանֆակների, մեծահասակների դպրոցների ու մանկատների մանկավարժական անձնակազմի աշխատավարձը բարձրացնելու մասին . . . . . . 105

## 1937 թիվ

29. ԽՍՀ Միության Սահմանադրությունը դպրոցներում ուսումնասիրելու մասին։ (ընկ. Վ. Մ. Մոլոտովի 1937 թ. փետրվարի 1-ի հեռագիրը) . . . . . . . 112

30. Ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների դիրեկտորների և ուսմասվարների դասատուական աշխատանքներ տանելու մասին։ . . . . . . . . 113

31. Միջնակարգ դպրոցների 3-րդ և 4-րդ դասարանների համար ԽՍՀՄ-ի պատմության լավագույն դասագրքի կոնկուրսի կառավարական հանձնաժողովի ժյուրիի որոշումը . . . . 114

## 1938 թիվ

32. Սովորողների առաջադիմության գնահատականի մասին՝ Մոսկվայի քաղաքային ժողկրթբաժնի 1938 թ. նոյեմբերի 5-ի կարգադրությունը չեղյալ համարելու մասին։ (ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի որոշումը) . . . . . . 123

## 1939 թիվ

33. ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի որոշումից . . 126

ՀԱՎԵԼՎԱԾ.

Հայկական ԽՍՀ Լուսժողկոմատի հրահանգները

Ցուցակ այն ուսումնական հիմնարկների, վորոնց ավարտումը հավասարեցվում է մանկավարժական ուսումնարանի ավարտմանը . . 126

Ցուցակ այն ուսումնական հիմնարկների, վորոնց ավարտումը հավասարեցվում է ընդհանուր միջնակարգ կրթությանը . . . 128

Ցուցակ այն ուսումնական հիմնարկների, վորոնց ավարտումը հավասարեցվում է ուսուցչական ինստիտուտների ավարտմանը . . 128

Ցուցակ այն ուսումնական հիմնարկների, վորոնց ավարտումը հավասարեցվում է բարձրագույն ուսումնական հիմնարկների ավարտմանը . 130

Ցուցակ ՀԽՍՀ այն դպրոցական հաստատությունների, վորոնց իրավունք է վերապահվում ուսուցիչների ատեստացիայի կապակցությամբ քննություններ ընդունելու . . . . . . 132


28-ը նոյեմբերի 1938 թ.
Երևան

Պատ-խմբագրեր՝
Ա. Հարենց
Ս. Բաղդասարյան
Տեխ-խմբագիր՝
Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Մ. Թումանյան

Գլավլիտի լիազոր՝ Բ—1154. Հրատ 5171.
Պատվեր 168. Տիրաժ 2000.
Հանձնված է արտադրության 8/II 1940 թ.
Ստորագրված է տպագրության 26/V 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0227322

44.588

ԳԻՆԸ 5 ՌՈՒԲ.

Постановления партии и правительства о школе
Арменгиз. Ереван. 1940 г.